

21262

Quaglymph
Quagmire

F. hen

39(47-52)
1 - 14

P - 1899

11

Ե. ԼԵՂԵՑԵՆ

ԶԱԿԵԶՈՒՐԻ ԳԱԻԱԾ

ՆԻՒԹԵՐ ԱՊԱԴԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Բ. ՀԱՏՈՐ

ՉԱՆԳԱԳԱՎԱՐԻ

ԱՐՏԱՏՊԱՅ


ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Կ. Մարտիրոսյանցի | Տպոգրաֆիա Կ. МАРТИРОСЯНЦА
Օբելիառովան պող. և թ. 1-2.

1899.



39(47.825)

L-14

2

Ե. ԼԱՐՅՈՅԵՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱԻԱՆ

Արևելյան ԱՊԱԳԱՑ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Բ. ՀԱՑՈՐ

ԶԱՆԳԵԶՈՒՐ

ԱՐՏԱՏՊԱՎ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ



ԹԻՓԼԻՍ

Տպարան Կ. Մարտիրոսյանցի ||| Տիպոգրիա Կ. Մարտիրոսյանց.

1899

2002



Дозволено цензурою. Тифлисъ, 4 Февраля 1899 года.



(6026)
39

14868-58

ՑԱՆԿ

	ԵՐԵՎ
Պատմական համառոտ տեսութիւն.	7—15
Պատմական աւանդութիւններ	16—18
Տեղագրութիւն.	19—25
Քաղաքական մասն	26—50
Գօրիս 26, Զագեձոր 28, Սինդարա 30, Հին Գօրիս 30, Խնձորեսկ 34, Կոռնձոր 36, Խնածախ 36, Տեղ 38, Բարկուշատի ձոր 40, Հալիձոր 40, Շնհէր 41, Խոտ 45, Ծիծեռնավանք 47, Պանտալէօն բժշկի մատուռը 48, Հայկական աւերակ եկեղեցիներ 48.	51—58
Բնակիչներ	59—60
Բնակարան.	61—65
Զգեստ եւ զարդ	66—105
Ընտանեկան բարք	106—112
Ժողովրդական երգեր	113—116

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

- 1) Քարտէղ, 2) Գորիս, 3) Շոռան, 4) Ծիծեռնավանք, 5) Կիւր,
6) Գորիսեցի, 7) Պղնձէ անօթներ, 8) Ճոճք, 9) Հացկերովիթ:

ԶԱՆԳԵԶՈՒՐ

ԶԱՆԳԵՑՋՈՒԹ

ՆԻՒԹԵՐ ԸՊԵԳԱՑՑ ՌԻՍՈՒՄՆ ԸՍԻՐՈՒԹԵՑՆ ՀԵՄԵՐ

Ե. ՀԱՅԱՑ ԵԱՆԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱԴՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Զանգեզուրի ոստիկանական շըջանը ընկնում է համանուն գառափական արևելահւասիսային կողմը և ամբողջովին բոնում է նախկին չաբանդ գաւառը, որ ստորաբաժանում էր Երեք մասի—Ձոր Բարկուշատայ, Զագեձոր և Աղահէճք։ Բարկուշատայ ձորը այժմեան Ձեհէրի ձորն է, Զագեձորը՝ այժմեան Գորիսն իւր շըջակացքով, իսկ Աղահէճքը՝ այժմեան Մաղաւուզպր.—Վերջին անունը այնքան էլ գործածական չէ; Առհասարակ այս հին անուններն այլ ևս չեն գործ ածում, և Զանգեզուր անունը գործ է ածում ինչպէս ամբողջ գատառի՝ այնպէս և այս Երկրորդ ոստիկանական շըջանի համար։

Զանգեզուր անունն, ըստ Հայր Աղշանի, ծագել է Զագեձոր անուան աղաւաղումից, իսկ սա՝ Զագ նահապետի անունից¹⁾; Հաւանական համարելով առաջին ենթադրութիւնը՝ կարծում ենք, որ Զագեձոր իսօսքն էլ յառաջացել է ոչ թէ Զագ նահապետի, այլ «Ծակերի ձոր», անունից, որովհետեւ հէնց այժմս էլ, Գորիսից փոքրինչ բարձր գտնուող ձորը, ուր Եղել է ամենահին բնակութիւնը, կոչւում է «Ծակերի-ձոր», ացդտեղ գտնուող բազմաթիւ «Ծակեր»—արհեստական քարայրի պատճառով։

Մի աւանդութիւն էլ ասում է, թէ Նոր-Գորիսից մի վերսողէափի հիւսիս գտնուող վանքում երեմն մի այնպիսի մեծ զանգ է եղել, որի ձայնը շատ հեռուն լսուելիս է Եղել, ուստի և ժողովուրդը

¹⁾ Սիսական. Եր 261.

սովորել է ասել. «Զանգը-զոռ», այսինքն զանգը զօրաւոր, և իբր թէ դրանից էլ յառաջացել է Զանգեզուր անունը:

Զանգեզուրի շրջանը սաստիկ լեռնոտ լինելով և հաղորդակցութեան ճանապարհներ չունենալով՝ ինչպէս այժմ, նոյնպէս և անցեալում շատ անձանօթ է մնացել, այնպէս որ միայն հատուկտոր տեղեկութիւններ կարելի է գտնել մատենագիրների մէջ, որոնք ոչ մի անփոփ զաղափար չեն տալիս այս գաւառի պատմական զարգացման մասին.

Նորագոյն պատմութիւնից էլ յայտնի են Մելիք-Հուսէինեանների, Մելիք-Բարխուդարեանների, Մելիք Հայկազի և Մելիք Փարամազի տիրապետութիւնը, որոնք որպէս մելիքներ կառավարել են, առաջին տոհմը՝ Գորիսը, Երկրորդը՝ Տեղը և Խնձորեսկը, Երրորդը՝ Խնածախը և չորրորդը՝ Խնձորեսկը իրենց գրականութեան մասին:

ՄԵԼԻՔ ՀԻՒՍԵԻՆԵԱՆՆԵՐԻ

Մելիք-Հիւսէինեանների¹⁾ տոհմը յառաջացել է հին գորիսեցի խոջա Լազարի որդի Լազարից, որի աւագ եղբայր Պարոնից սերել են այժմեան Պարոնեանները, իսկ կրտսեր եղբայր Աւագից՝ Աւագեանները: Պարոնեանները նշանաւոր են դարձած առևտրական ասպարէզում և այժմ էլ Գորիսի հարուստ տներից մինն են համարւում, իսկ Աւագեանները մնայել են աննշան գիւղացիներ: Այս եղբայրները ապրելիս են եղել հին Գորիսում, ուր հոգի պակասութիւնը բաւական նեղել է նրանց, ուստի և Պարոնը վերցնելով մի բուռն հաճար՝ (քոյն չաղաք), գնում է շահի մօտ, ցոյց է տալիս նրան և ասում, թէ իրենց դար, գնում է շահի մօտ, ցոյց է տալիս նրան և ասում, թէ իրենց հողի վատութեան և սակաւութեան պատճառով ստիպուած են հաճար ուտել: Ճահը մեղքանում է և նուիրում նրան հողեր Նոր Գորիսի մօտերքը:

Կարճ միջոցից յետոյ թարաքեամայ թափառականներ յարձակուում են հին Գորիսի վրայ, բնակիչներին կոտրուում, թալանում և ցրուում: Այս միջոցին Լալի որդի Բաղրը մեռնում է, թողնելով Յոհան և Ամիրանունով որդիներ: Իսկ սրանք, որպէսզի ազատուին այս թափառականների հալածանքներից՝ փախչում են Զանախի գիւղը, մելիք Ճահնազարի մօտ: Այստեղ Յոհանը յայտնի է դառնում իւր քաջութեամբ: Ճեղական պատճառով ստիպուած է շոշեցի մի մեծատան աղջկայ հետ: Այս ժամանակ

¹⁾ Այս տոհմից այժմ կենդանի է Մանուչար բէկը, վերջին Մելիք Յառութիւնի որդին, ամենից սիրուած ու յարգուած անձնաւորութիւնը, որ սիրով պատմեց ինձ իւր տոհմի պատճութիւնը և ցոյց տուեց մելիքներից մնացած գրութիւնները: Նրա տուած տեղեկութիւնները ես լրացրի Քարահունչի Տէր Յովսէփ քահանայի և այլ ծերունիների լիշողութիւններով:

գորիսեցիք գնում խնդրում են Յոհանին, որ գայ իրենց մելիք դատնայ: Աս էլ, երբ նոյն խնդիրը կրկնում են Մելիք Ճահնազարին՝ յանձն է առնում և Փանահ խանից Գորիս, Խոտ, Շնէկը, Հակեմոր, Քարահունչ, Ալիդուլիքենդ, Տաշբենդ, Մաղանջուղ, Կորու գիւղերի վրայ մելիք հաստատուելով գալիս է կառավարելու: Մելիք Յոհանը բնակութիւն է հաստատում նախ «Ծակերի ձորում», բայց յետոյ հիմնարկում է Նոր-Գորիս գիւղը և այնտեղ տեղափոխուում:

Նա շատ քաջ մարդ է եղել և շատ անգամ հալածել է թափառական թարաքեամաններին, որոնք ժամանակ անժամանակ յարձակումներ են գործելիս եղել Նոր-Գորիսի վրայ:

Մելիք Յոհանին յաջորդել է նրա աւագ որդին՝ Մելիք Յօսէփը: Սա շատ թուզ մարդ է եղել, այնինչ սրա եղբայր Սէին կամ հուսէինը աչքի է ընկել իւր քաջութեամբ, առատաճեռնութեամբ և խելքով: Այնպէս որ Մելիք Յօսէփը միշտ սրան է եղել խորհրդի դիմելիս և գործերի մեծ մասը սրան է յանձնել կատարելու: Այսպիսով հուսէինը մեծ ժողովրդականութիւն է ձեռք բերել և երբ ժողովրդը խնդրել է մելիք Յօսէփին, որ մելիքութեան տիտղոսն էլ եղօրը յանձնէ, քանի որ ամբողջ կառավարութիւնը նրա ձեռին է՝ մելիք Յօսէփը համաձայնում է: Սակայն այս ծանր է թւում հուսէինի աւագ եղբայրներին, որոնք ընդդիմանում են և մի կուռում դաշոյնի հարուածով հուսէինի երկու մատը կտրում են և մի աչքն էլ կուրացնում: բայց և այնպէս՝ հուսէինը յաղթող է համդիսանում և մելիք դառնում: Եղբայրները չեն դադարում, և Խոտ, Շնէկը ու Հակեմոր գիւղերը դըրգում են իրենց եղբօր դէմ: Այս պատճառով և՛ Մեհտի խանը 1805 թուին մի հրովարտակով լիշեցնում է վերոցիշեալ գիւղերին, որ նրանց մելիքը հուսէինն է:

Սրա ժամանակ Նախիջևանի խանի զինուորները երկու խմբի բաժանուած յարձակուում են մինը Քարաշէնի, միւսը՝ Քարահունջի վրայ: Քարաշէնը շուտով անձնաւուր է լինում, որը ասպատակողները թալանում են և երիտասարդներին գերի տանում. իսկ Քարահունջը պաշտպանում է: Գիւղացիներն ապաստանում են եկեղեցում և սեղանի վէմ քարով ծածկում զուռը: Զինուորները կամենում են քանդել եկեղեցին, բայց չեն կարողանում: Այս ժամանակ բերում են դաշտ բոնած երկու եղբայրներ, որոնց հայրը նոյնպէս եկեղեցումն է ապաստանած լինում: Զինուորներն ստիպում են այս եղբայրներին աղջել իրենց հօրը, որ դուռը բանայ, խոստանալով, որ այս դէպքում կը խնայեն ինչպէս այս երկու եղբօր, այնպէս և՛ նրանց հօր կեանքը, այն ինչ հակառակ դէպքում կսպանեն եղբայրներին, Սրանք թուրքերէն աղաջում են հօրը, որ բայց անէ դուռը, բայց և հայերէն

խնդրում են, որ իրենց երկրությ կեանքի համար զգոհէ բոլոր գիւղացիների կեանքը։ Վերջապէս ժուրբերը տեսնելով որ հայրը չէ լսում որդոց աղայանքին, սուրբ դնում են եղբայրների վզին և կանչում հօրը, որ ազատէ Նրանց։ Սակայն հայրը աղի արցունք թափելով՝ զոհում է որդիներին։ Մրանք երկրուն էլ թաղուած են նոյն եկեղեցու դռան մօտ և ամբողջ ժողովրդից սիրուած են ու յարգուած։

Այս միջոցին Մելիք-Հուսէինը օգնութեան է գալիս քարահունչ չեցիներին, սակայն թուրքերն աւարն առաջ դէպի Նախիջևան են շտապելիս եղել: Մելիք-Հուսէինը յարձակում է նրանց վրայ Բազար-յափ մօտ, որտեղից Սիսիանու ճանապարհը տանում է դէպի Նախիջևան: Թուրքերի առաջնորդ Քալբին Մելիք Հուսէինին նկատելով՝ հրացան է պարպում վերան, սակայն գնդակը ծակում է միայն մելիքի դոնը (վերաբկուն): Խսկոյն սրա ծառայ Խուրշուդը, որ Պարոնի ցեղից է եղել և շատ քաջ՝ գնտակով տալիս սպանում է Քալբուն: Զօրքը տեսնելով իրենց առաջնորդի սպանուելը՝ աւարը թողնում փախչում են:

Պի առաւօտ էլ ՊԵկիք հուսէինը նկատում է, որ էլի Նախսիցեւանի խանի մարդիկը իջնում են դէպի իրենց գիւղը, Նոր Գորիսւ Անմիջապէս իմացնում է Խուրշուղին. սա անցնում է գետը, տանում իւր բարձր գդակը մի քանի ուրիշ գդակների հետ քարերի վրայ գնում և ինքը հակառակ կողմում պահ մտնում: Թուրքերի առաջնորդն ուղղում է դէպի գտակները, կարծելով թէ հայերը եկել կտրել են ուղղում է դէպի գտակները, կարծելով թէ հայերը եկել կտրել են իւր ճանապարհը և սկսում այդ ուղղութեամբ հրացան արձակել: Այս միջոցին Խուրշուղը յետևէ կողմից խփում է գնդակով և վայր գլուրում նրան: Անմիջապէս նրան հետևող մարդիկը թողնում են և փախչում:

ՄԵԼԻՔ ՀՈՍԵՒՀԻՆը առատածեռն է եղել և դէպի հօգեսորական-ները, այնպէս որ երբ 1814 թ. Եփրեմ կաթողիկոսի նույիրակը զալիս է Գորիս՝ սա շատ սիրով ընդունում է նրան և մեծ նույիրներ տալիս: Այս պատճառով էլ Եփրեմ կաթողիկոսը մի կոնդակով օրհնում է նոյան:

1815 թ. Մելիք Հովսեփինը մեռնում է և Նրան յաջորդում է որդին Մելիք-Ռուստամը¹), որ միայն երեք տարի է մելիքութիւն անում և անորդի մեռնում։ Նրան յաջորդում է Եղբայրը Մելիք Յարութիւնը կամ Մելիք Թիւնին։ Սա առաջին անգամ մտցնում է Զանգեզուր կամ Կապան գավառի Տաշիր գյուղում, որի համար և՛ 1846 թ. Վօգեգուրում կարտոֆիլի մշակութիւնը, որի համար Աննասի ժապավենով արծաթէ մեղալ ստանում, և խաղա-

¹⁾ Մեհեղի-խանի Նըրան տուած հաստատութեան հրովարտակը դեռ կը պաշտում է նրանց ընտանիքում:

Պութեամբ կառավարում ժողովուրդը մինչև ռուսաց տիրապետութիւնը գութեամբ կառավարում ժողովուրդը մինչև ռուսաց տիրապետութիւնը կա-
(1827 թ.) երբ նա ճիշում է դառնում, այսինքն Զանգեզուրի կա-
ռավարիչ։

Եթե կառավարութիւնը այս գաւառում ևս ստցրեց ըստրոլազս
տանուտէրութիւնը, Մելիք Յարութիւնն իրան համար այդ անպա-
տութիւն համարելով՝ հրաժարուեց տանուտէր լինելուց, և հասարա-
կական գործերից յետ քաշուած մեռաւ 1880 թուին, թողնելով մի
որդի՝ Մանուչար-բէկին, որ այժմ էլ կենդանի է:

ՄԵԼԻՔ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԵՐ.

Մելիք-Բարիսուղարեանների նախահայր Մելիք-Բարիսուղար Ա.
գաղթել է Լոռուց Զանգեզուրի Նախ Կոռնձոր և ապա Տեղ գիւղը,
բարիստել է Խնձորեսկ գիւղը. միանգամայն իշխելով ինչպէս Տե-
բացց որովհետև Տեղն ամրոց չէ ունեցել՝ ուստի և կարճ միջոցից տե-
ղափառ կատարել է Խնձորեսկ գիւղը. միանգամայն իշխելով ինչպէս Տեղի,
Խնձորեսկի՝ այնպէս և սրա շրջակայ գիւղերի վրայ:

Մելիք-Բարխուդար Ա. շատ քաջ մարդ է եղել և լոյր Քաշելը պլովսն անցած՝ շատ անգամ հալածել է Նախիջևանի խանի առաջատակ Թինուրներին:

Մի անգամ էլ Նախիչևանի խանը երեք մարդ է ուղարկուս Յավլիքուն պատճենութեան: Մելիք-գիւղը՝ գինի բերելու, պարզ է որ առանց վարձատրութեան: Մելիք-գիւղը գինի բերելու պատճենութարը բռնում է այդ երեք մարդկանց, սպանում, քթերն ու շարժուդարը բռնում է այդ վերայ, և տալով ջորեպաշտիքները կտրում, անցընում մի թելի վերայ, և տալով ջորեպաշտիքները նոյնպէս կտրում է և անցընում թելին՝ յետ է նին, որի ականջները նոյնպէս կտրում է և անցընում թելին՝ յետ է ուղարկում, պատճենութելով ասել խանին, թէ Տեղն այժմ իւր մելիքն անհ-Ճահ Բարիխուղար, որ ոչ մի խանի հարկ չի ուզում տա:

Նախիջևանի խանը զայրանալով զօրք է ուղարկում, պատուի-
րելով կենդանի բերել այդ անձնավոտահ մելիքին: Կուին սկսում է
Սատու—դալի մօտ և տեսում վեց օր շարունակ: Վերջին օրը մելիքի
վառօդն ու գնդակը վերջանում են: Այս ժամանակ Քեալբաջարի մի
թուրք, մելիքի զինուորներից մին, յայտնում է մելիքին, թուրքերէն
լեզուով, թէ «վառօդ» վերջացած է, այդ բառի փոխարէն հայերէն
«տափող» (սևահող) խօսքը գործածելով, որպէսզի խանի զինուորները
չհասկանան: Սակայն մինը հասկանում է և յայտնում իրենց մեծին:
Եւ սա, որ ցոգնած ուղում էր դադար տալ՝ կրկին յարձակում է մե-
լիքի վրայ: Կահիւ նորից տաքանում է, և մելիքը ստիպւում է սրով
կռուել: Կարճ միջոցում մելիքի բոլոր զինուորները, մօտ 600 հոգի,
ընկնում են և մնում են միայն Մելիք Բարխուդարը և եղբայրը՝ Ղա-
րա բէտը: Սրանք հերոսաբար շարիւնակում են կռուել, սակայն շուտով

վիրաւորում է Ղարա բէցի ձին: Խսկոյն Մելիք Բարխուդարն առնում է Ղարա-բէցին իւր գաւակը և շարունակում կրուել: Հուտով մութ գիշերը վրայ է հասնում և կրիւր դադարում է, Միւս օրը, վաղ, խանի զինուորները նորից ընկնում են կտրիճ մելիք-Բարխուդարի վրայ, որ Ղարա-բէցին գաւակն առած՝ սկսում է թուր խաղացնել: Սակայն գնդակը վայր է զլորում և սրա ձին: Երկու քաջերը մի քիչ էլ կրուելուց յետոյ ուժասպառ անձնատուր են լինում և նստելով երկու քարի վրայ, որ մինչև այժմ էլ «Մելիք-Բարխուդարի քարեր» են կրչում՝ առաջարկում են թուրքերին վերցնել մելիքական սուրը և նրանով կտրել իրենց գլուխները, որովհետև, պատճառաբանում են նրանք, մենք այնպիսի յուռութներ ունենք, որ ուրիշ սուր չէ կարող մեր պարանոցը կտրի: Այս-ինչ նրանց ցանկութիւնն այն էր, որ անօրէնի սրով չընկնեն: Թուրքերը հաւատում են, վերցնում են մելիքական սուրը և կրում երկուսի էլ պարանոցները և գլուխներն առած՝ վերադառնում նախիջևան: Երբ ներկայացնում են գլուխները խանին՝ սա բարկանում է, որ իւր հրամանը չեն կատարել — մելիքին կենդանի բերել, և հրամայում է բերողներին գլխատել:

Մի քանի օրից հայերը խնդրում են խանից մելիքի և Ղարա-բէցի գլուխները և ստանալով՝ Ղարա-բէցինը տանում թաղում են Երևանի ս. հոփիսիմեանց եկեղեցում, իսկ մելիք Բարխուդարին՝ ս. եջմիածին: Խսկ սրանց մարմինը խնձորեսկցիները տանում են Խնձորեսկ և թաղում անապատում, ¹⁾ ուր մինչև այժմ մնում է գերեզմանաքարը հետեւալ տապանագրով.

Այս է տապան՝ ի հանգստեան
իջեալ մարմնով՝ ի գերեզման
Մելիք Բարխուդար և մեծ իշխան
Նահատակեալ օրն չամբարձման,
Որ է ի գեղջէն Տեղոյ այն.
Ով ոք առնէ զսա լիշման,
Արքայութեան լինի արժան:
թվ. Թագի:

¹⁾ Այս կրուի ժամանակ խնձորեսկեցի մի հարս, լսելով որ ամուսինն սպանուել է՝ փախչում է տնից և գալով կրուի դաշտը, որոնում գտնում է իւր ամուսնու դիակը և շալակած՝ գիշերները տանում է դէպի գիւղ, ցերեկները թագ կենալով զանազան տեղեր: Մինչև այժմ էլ խնձորեսկցիները ցոյց են տալիս այդ անվեհեր հարսի և նրա ամուսնու միմեանց կից գերեզմանները:

Հօր Մելիք Բարխուդարի աղետակի մահուան վրէժխնդիր՝ պատանի Թաւիթ բէկը 300 ձիաւորներով յարձակում է նախիջևանի վրայ և անակնկալ կերպով ընկնելով խանի վրայ՝ սպանում է նրան, և փախչում: Խանի ժառանգները հետամուտ են լինում նրան, և նա ստիպում է տեղից տեղ փոխուել, զլուխն ազատելու համար:

Այս միջոցին գալիս է նրա մօտ ջառջի Փանահը և համոզում՝ մի առ ժամանակ իրեն յանձնել երկրի կառավարութիւնը, մինչև որ խանի մարդիկը դադարին նրան հալածելուց և ինքն էլ չափահաս դառնայ, Թաւիթ բէկը համաձայնում է, խփել է տալիս իւր հօր վրանը Խնձորեսկի մօտ, հարամի ծառի տակ, Փանահին նստեցնում թափստի վրայ, Մելիք-Բարխուդարի տեղը, զլզակը (զազանը) տալիս է նրա ձեռը և ապա մելիքի սուրը իւր ձեռին բռնած, «խան ես ու խան» («խան սան քի խան սան») խօսքերը երեք անգամ կրկնելով՝ երեք քայլ է անում և սուրը յանձնում Փանահին: Սա համբուրում է Թաւիթ-բէկի ճակատը և ընդունում սուրը: Այնուհետև մի առ ժամանակ Փանահ-խանը կառավարում է Խնձորեսկին իւր շրջականերով և յետոյ անցնում գնում Ղարաբաղ՝ մելիք զահնազարի մօտ:

Փանահ-խանի հեռանալուց յետոյ Թաւիթ-բէկը վերստին ստանձնում է երկրի կառավարութիւնը, և կամենալով մելիք տիտղոսը կրել՝ զնում է Թէհրան, շահից հրովարտակ ստանալու: Սակայն այստեղ էլ նախիջևանի խանի մարդիկը հետամուտ են լինում և կամենում են սպանել, այնպէս որ ստիպում է վերադառնալ՝ առանց հրովարտակ ստանալու: Այնուհետև պարապում է շինութիւններով, շինում է իւր համար մի գեղեցիկ ապարանք, բաղկացած մի քանի բարձր և գեղեցիկ զարադամներից, որոնցից առաջինի դռան վերայ մինչեւ այժմ էլ մնում է հետեւալ արձանագրութիւնը. ԹՎ. ՌՄԼԹ. ի վայելումն Ոելիք Բարխուդարի որդի Դաւիթ բեկս տինեցի այս ամարաբ իբրայիմ խանի ժամանակ:

Այս ժամանակներում արդէն, ինչպէս տեսնում ենք, Փանահ-խանին յաջորդած էր Իբրահիմ խանը, որի հետ Թաւիթ-բէկի յարաբերութիւնները հետզհետէ լարում են: Այնպէս որ երբ վերջինի ծառաւմը մելիք Բարխուդարի ստացած հրովարտակը և այլ թղթեր գողանալով փախչում է Իբրահիմ խանի մօտ՝ սա սիրով ընդունում է Տեղ գիւղը նրան նուիրում: Այս բանի վրայ զարացած՝ Թաւիթ-բէկի որդին, Մելիք Բարխուդարը բ. գնում է Թէհրան, թէ մելիքութեան մէջ հաստատուելու և թէ Իբրահիմ խանի անիրաւութեան դէմբողոքելու, սակայն այնտեղ փախճանուում է, թողնելով իշխանութիւնը որդուն, Միրզա-բէկին, որի ժամանակ արդէն վերջանում է մելիքութիւնը:

ՄԵԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ

Միւս մելիքներից նշանաւոր է Մելիք Հայկազը, որ իշխել է Խնածախ գիւղում: Սրա մասին պատմում են, թէ շատ խիստ և չարասիրտ մարդ է եղել: Յանցաւորներին դնելիս է եղել կողովի մէջ, բերանը փակել և գլորել տալիս մօտակայ մի բարձր լեռան գագաթից, որ մինչև այժմ էլ կոչւում է Դատ-Մալիք: Ժողովուրդը բացատրում է, որ մինչև այժմ էլ կոչւում է Դատ-Մալիք: Ժողովուրդը բացատրում է, թէ այդ անունը, Դատ-Մալիք (կայ Մելիք)՝ յառաջացել է քիւղով գլորուող յանցաւորի բացականչութիւնից:

Սրա բանութիւնից չէ պատուել նոյն իսկ որդին, որ կամենալով հօր մելիքութիւնը հենց նրա կենդանութեան ժամանակ ստանձնել գնացել է շահի մօտ, մահմերականութիւնը ընդունել և Ալահվերդի անունով և շահի գորքով եկել հօր դէմ: Սակայն այս միջոցին Մելիք Հայկազը վախճանուած է եղել: Որդին սկսում է մելիքութիւն անել շինուած է մի մզկիթ, որ մինչև այժմ էլ կայ: Նա անժառանգ մեռնելով նրանով Խնածախի մելիքութիւնն էլ վերջանում է:

ՄԵԼԻՔ ՓԱՐԱՄԱՆՁՁ իշխել է Խնածուսկ գիւղում: Սրա մասին ոչինչ չի պատմւում, բացի հետևեալ անեկուսացին դէպքից.

Մի կերպի օր գիւղացիները հաւաքւում են Մելիք Փարամաղի դուան առաջ և խնդրում են Մելիքին, որ դուրս գայ իրենց դատերը կարելու: Մելիքը չէ կամենում դուրս գալ և պատուիրում է միւս կիրակի գալ: Երբ գիւղացիները շատ թախանձում են՝ Մելիքը մերկ դուրս է գալիս և բարկանում, թէ «հալաւս (շապիկը) լուացալ էն, հալա չորացալ չի, հինչ ըք զահլա տանըմ»:

ՄԵԼԻՔՆԵՐԻ ՏՈԽՆԸ. Զանգուգերի բոլոր մելիքների տները մինեաց նշան են, բոլորն էլ բաղկացած են մի քանի թաղակապ, մէջ դարագամներից, որոնց երեացող առաջի մասերը սրբատաշ քարից են շինուած:

ՄԵԼԻՔՆԵՐԻ ՀԱԳԻՆՈՒՄ կին պարսկական ճաշակով. կարմիր ալբա (մետաքսի) անդրավարդիկ, բաց կրծքով արխալուղ և վերացի՝ դոն:

Գլխներին ճանկում էին բուխարայի երկար փափաղ: Պտներին գուլպազ, որի բլի մէջ դնելով վարտիքի ծացրերը՝ տոլաղով ամրացնում էին: Սա մօտ 71 սանդիմետր (մի արշին) երկարութեան և $4\frac{1}{2}$ սանտ. էին: Մա մօտ լայնութեան կտոր է, մի ծացրին դացթան կապած, որ փաթաթում են գուլպաչի բլին և դացթանով ամրացնում, և ապա հագնում չմոշկ: Իսկ ձի հեծնելիս՝ հագնում կարմիր չեաքմայ:

Մելիքները ձգում էին ուսից մի կեռ թուր, իսկ հրացանը կրում էր նրանց հետեւող հրացանակիրը:

ՄԵԼԻՔՆԵՐԻ ՄՈՎՈՐԱԿԱՆ ԿԵՆԵՔԸ մօտաւորապէս այսպէս էր ընթանում: Առաւոտները շատ վաղ վեր էին կենում, մի բաժակ օղի խմում, մի քիչ նախաճաշիկ անում, յետոյ դուրս գալիս իրենց տների առաջ զբունում և զանգատաւորների դատով կտրում: Կէս օրին մի քանի հիւրերով վերադառնալով տուն՝ ճաշում էին, ուտելով սովորաբար երկու տեսակ կերակուր և խմելով առատութեամբ գինի: Ճատ յաճախ սեղանակից էր լինում նրանց ծխական քահանան: Ճաշից յետոյ մի քիչ քնում էին և ապա նորից դուրս ենելով՝ դատ կտրում, կամ շինամիջում նստած գիւղի առաջաւորների հետ զրոց անում: Երեկոյեան եկեղեցի էին գնում, ուր իրենց պատուաւոր տեղն ունէին: Եկեղեցուց դուրս գալով՝ մելիքներն իրենց սիրելիների հետ գախս էին տուն ընթրելու: Ընթրիքը աւելի ճոխ էր լինում և աւելի երկար էին տունում: Ընթրիքից յետոյ նարդի և այլ խաղեր էին խաղում և շատ կանուխ քնում:

Վերոյիշեալ մելիքներն ենթարկուած են եղել սկզբներում Նախկինականի, և յետոյ ձուշու խաներին: Եղել են մելիքներ էլ ինչպէս ՄԵԼԻՔ Հայկազը, որ բոլորովին ինքնազուխ են իշխել:

ՄԵԼԻՔՆԵՐԻ պարտականութիւնը դէպի խաները եղել է. 1) Ճահի կամ խանի պատերազմ դիջոցին, օգնութեան գնալ, զինելով իրենց վիճակի խրաքանչիւր տնից մի մարդ և 2). Երաքանչիւր տնից մուսկի (երեք բուրյի) առնելով՝ ուղարկել խանին, որպէս շահին հասնելի հարկ:

ՄԵԼԻՔՆԵՐՈ իրենեց վիճակների իրաքանչիւր գիւղում տանուտեր էին նշանակում, որ օգնէր իրենց հարկ հաւաքելիս և կատարէր իրենց հրամանները: Գիւղացիների փոքրիկ վէճերը այս տանուտէրների մօտ էին վերջանում, իսկ փոքր ի շատէ լուրջ գործի ժամանակ դիմում էին մելիքին, զալով նրա մօտ առաւելապէս կիրակի օրերը: Մելիքը մեղաւորին թակում էր, իւր գոմում բանտարկում, իւր օգտին տուգանք առնում:

Գիւղացիները պարտաւոր էին մելիքին վճարել, բացի տուն զլուխ մի սովուց, որ խանին էր ուղարկուում՝ նաև մի մի սոմառ ցորեն՝ իրեն մելիքի համար: Նաև տասանորդ հացահատիկներից և խոտից:

Բացի սրանցից բոլոր դութանները մելիքի համար մի օր վար պիտի անէին, տնից մի մարդ գալով՝ արտերը պիտի հնձէին, խոտերը հարէին, ձմեռուաց համար վառելիք բերէին: Գիւղի հաշուով էլ մի ուանչպար, մի գզիր, մի ձիապան, մի իշապան և մի քանի ծառաներ էին տրում: Հիւրեր գալիս՝ գիւղը հաւ, գառ և այն էր տալիս, առանց որևէ վարձատրութեան: Նաւասարդին ամէն մի տանտէր

20—50 կոպէկ մի խնձորի մէջ խրած տանում էին մելիքին, նրա նոր տարին շնորհաւորելու։ Նա էլ հիւրասիրում էր բոյորին, ճաշ տալով։

ՊԱՏՄԱԿԱՆ ԾԻՆԴՈՒԹԻՒՆԵՐ.

ՀՐՈՒՏԱՆ ԵՒ ԶՈՆԳԻ ԳԻՖԻ.

Սաղսաղան լեռան գագաթին երկու ահագին, մինեանց կից ժայռ են բարձրանում, որոնց վերի մասերը միացած են մի արհեստական պատով, այնպէս որ կազմել են մի փոքրիկ սենեակ. Ճատդժուար և նոյն խակ անհնարին է այդ տեղ բարձրանալ. Աւանդաբար պատմւում է, թէ այդ տեղ բնակելիս է եղել Հրուշան անունով մի հսկայ, որին ժողովուրդը վիշապ է անուանել:

Սա յբաւականանալով իւր այդ բնակարանով նրա հանդէպ, Գարա-
հող լեռնաշղթայի վերայ, մի փոքրիկ տափարակ տեղում, բնական
ժայռ քարերի վրայ իւր համար մի ուրիշ բնակարան է շինել, մօտ 5
քառակի. մետր մեծութեան երեք քար ձգելով և սրանց վերայ մի
ուրիշը կանգնեցնելով ¹⁾: Երբեմն այստեղ և երբեմն Սաղսաղանի գըլ-
խին ապրելով՝ սա մեծ վնասներ է հասցրել շրջապատող ժողովրդին,
սպանելով և թալանելով ամէն մի անցորդի: Քաջութեան հետ նա
ունեցել է և հնարազիսութիւն: Այսպէս, մի անգամ մի մեծ կարա-
ւան հեռուից նրան նկատելով՝ վախից յետ է դառել: Խսկոյն հրուշանը
իշի մի համետ է զլրիել ժայռից ներքեւ և մի կաթսայ մածուն վայր
թափել և ինքն անմիջապէս թաք կացել: Կարաւանը այս տեսնելով՝
կարծել է, թէ առաջուայ երկացողը ոչ թէ ինքը հրուշանն է եղել,
այլ մի թռչուն (զուգրուն), որ խսկոյն թռել և նոյն խոլ ծրտել է:
Սիրտ առաջ՝ կարաւանը առաջ է գնում. բայց յանկարծ հրուշանը,
երկար և ծանր նիզակը ձեռին՝ կտրում է առաջները, մօտ երկու հա-
րիւր մարդ սպանում և ամբողջ կարաւանը թալանում: Բայց հրուշանի
աւերածութիւնները սրանով չեն վերջանում: Ահ ու սարսափը տիրում
է ամբողջ շրջակայքի վրայ և ոչ ոք չէ համարձակում դուրս գալ
իւր գիւղից: Վերջապէս՝ հրուշանի քրոջ որդին, ղարաղշախտցի Թա-

¹⁾ Աս լսկապէս հին դարերից մնացած մի գոյմէն է:

դունց Գիքին, որ յետոյ Զոնգի (վիթխարի) Գիքի է մականուանուել՝ վճռում է Հրուշանի կեանքին վերջ գնել: Այս նպատակով 12 հատ մեծ բիշի (իւղի մէջ թրիխուած հաց) է պատրաստել տալիս և շալակած տանում Հրուշանին: Հասնելով այն ձորը, որ մինչև այժմ էլ Հրուշանի անունով կոչում է Հրուշանի ձոր, Զոնգի Գիքին բղաւում է մօրեղանու կոչում է Հրուշանի ձոր, Զոնգի Գիքին բղաւում է մօրեղանու բորբ, որ իջնէ ժայռից և քրոջ ուղարկած բիշիներն ուտէ: Հրուշանը հաճոյքով իշնում է ժայռից, գալիս նստում ձորում, նիզակը դնում մի կողքին և վերցնելով 12 բիշին՝ մի բրդում է անում, և հէնց որ մի անգամ կծում է՝ բիշու ծացրերն են մնում ձեռին: Խոկ Զոնգի Գիքին ուժ ու կող արած բարձրացնում է նիզակը և ասում. «Ամի, ինչ ծանր է, ինչպէս ես բարձրացնում»:

—Քիչ սպասիր, կը տեսնես, պատասխանում է Հրուշանը: Սա-
կայն այս միջոցին Զոնդի Գիքին ձգում է Նիզակը մօրեղօր Տվյալնե-
րին և ուզում է փախչել: Հրուշանը խսկոյն երկարացնում է իւր ձեռ-
քը և նրան քղանցքից բռնում: Խեղճ Զոնդին քանի կտոր պիտի
լինէր, եթէ իսկոյն դաշոյնը չհանէր, չկտրէր իւր քղանցքը և չփախ-
չէր: Հրուշանը տեսնելով, որ ոտները արդէն կոտրուել են և չէ կա-
րող վագել ու նրան բունել՝ աղաչում է, որ գոնէ գայ և իրան սպա-
նէ, քանի որ առանց ոտի ապրել չպիտի կարողանաց: Զոնդին համա-
ձայնում է, միայն պահանջում է, որ մի կերպ հեռանաց նիզակից:
Հրուշանն էլ քաշքաշուելով հեռանում է Նիզակից և սպասում մա-
հուան: Զոնդին մօտենում, ահազին դժուարութեամբ վերցնում է Նի-
զակը և ձգում Հրուշանի զլիխին ու փախչում: Մահամերձ՝ Հրուշանը
սկսում է գոռալ, նրա ձայնից թնդում են լեռներն ու ձորերը, գա-
զանները մտնում իրենց որջերը, մարդիկ ապաստանում իրենց տները:
Եւ երբ նա մեռնում է՝ երկիրը խաղաղում է, սար ու ձոր հանգստա-
նում:

F N L.

Սի ուրիշ հսկայ էլ եղել է Ճնճէր գիւղում, բոլ անունով։ Սա
միշտ մի քառակուսի մետրից աւելի մեծութեան քար գրպանումն է
պահելիս եղել, որպէս զի եթէ մինը բարկացնէ՝ գիխովը տաց։ Ճառ
անգամ պատահել է, որ ահազին մեծութեան քարեր վերցրել և Որո-
տնաց գետն է շարատել։ Կամենալով իւր համար մի կալ շինել՝ նա
գնացել հեռու տեղերից ահազին մեծութեան քարեր է բերել, ձգել
ձորի լանջին, հող ածել և այսպիսով տեղը հար նել է ու կար շինել։
Դեռ մինչև այժմ էլ մնում է այդ կալը, և կոչում է Բոլին կալը։



ԺԻՄԵԹՆԱՎԱՆՔ:

Հոչաս գիւղի մելիքը Թումանը շարունակ նեղացնելիս է եղել նոյն գիւղի քահանացին, այսպէս որ վերջինս, նրանից ազատուելու համար՝ մի անէծքաթուղթ է գրել զցել նրա սենեակն ու ինքը փախել, գլուխն ազատել։ Անէծքաթղթի զօրութեամբ, մելիքը շուտով կորցրել է որդիները, կինը և ամբողջ հարստութիւնը։ Վերջապէս հասկանալով, որ այդ բոլոր թշուառութիւնները քահանացի անէծքից են առաջացել գնում է նրան որոնելու, որպէս զի թողութիւն խրնդրէ։ Անցնում է շատ քաղաքներ, գալիս հասնում չուոմ, որտեղ իմանում է, որ քահանան վախճանուել է։ Յուսահատուած մնում է նա չուոմի մի վանքում իբր լուսարար և միշտ աղօթում իւր հոգու փրկութեան համար։ Երեք տարուայ ճգնութիւնից յետոյ ճգում է իւր վերայ տասներկու շղթայ և ասում, «Եթէ ազատուած եմ անէծքից՝ թող այս շղթաները իրենք իրենց արձակուին»։ Նոյն գիշերը, երազում երեսում են նրան անիծող քահանան Քրիստոսի հետ և ասում, «Մելիք, հրամանաւն Քրիստոսի արձակեմ զքեզ», և իսկոյն շղթաներն արձակուում են։

Մի ժամանակ անցնելուց յետոյ, մի օր այս Մելիքը կծում է Պետրոս առաքեալի ճկոյթ (Ճիշեռնը) մատից և պահում բերանում։ Խսկոյն սրբերի բոլոր պատկերները վայր են ընկնսում։ Գալիս են քահանաները և նկատելով մելիքի գողութիւնը՝ կամենում են մասունքը հանել նրա բերանից և իրեն էլ սպանել, սակայն սեղանից մի ձայն է լսում, որ ասում է, թէ մի մերձենաք մելիքին։ Ուստի և քահանաները ոչ մի վնաս չեն հայցնում մելիքին, և սա անվտանգ գալիս հասնում է այժմեան Ծիծեռնավանքի տեղը։ Եցսեղ գաղ ժամանակներից մի շրորի ծառ է լինում, որ շրջապատող բոլոր ժողովուրդներից պաշտուելիս է եղել, մինչև անգամ եղջերուները իրենց գալիս և զոհուելիս են եղել նրան։ Ահա այս ծառի մօտ մելիքը շինել է այժմեան տաճարը և ս. Պետրոսի ճկոյթը (Ճիշեռնը) նրա մէջ ամփոփել։ այս պատճառով էլ վանքը կոչուել է Ծիծեռնավանք, այսինքն ճկոյթի վանք։

Ասում են, թէ այս մասունքը այժմս էլ մնում է ձախ աւանդատան դռան առաջ գանուած գերեզմանում։

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՍՍՀՄԱՆՆԵՐԼԻ. — Զանգեզուր գաւառամասի սահմաններն են. հիւսիսից՝ Ջիվանշիրի գաւառը, Մուխտոքեան, Գելլիս, Չիլգեազ, Ալաղայա լեռներով. արևելքից՝ Ճուշու գաւառը, Վարի-բաբա, Քիրս, և Ղըրիս-ղըր (40 աղջիկ) լեռնաշղթայսվ, Սարի-բաբա, Քիրս, և Ջիարատ լեռներով. հարաւից՝ Մեղրիի ստիլանական շրջանը, Քիւչուկ չայով և Գիւմբէկ լեռով. արևմուտքից՝ Սիսիանու ոստ, Քիւչուկ չայով և Գիւմբէկ լեռով. արևմուտքից՝ Ալլա-գեօլ լճով և շրջանը, Քարահունջի և Ջնհերի ձորերով, Ալլա-գեօլ լճով և Խմալդատ գագաթով։


ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԱԳՐԻ. Զանգեզուրի գաւարը ներկայացնում է Նախիչևանի և Ղարաբաղի լեռնաշղթաների մէջ ընկած մի Նախիչևանի մասը (1,200 մետրիտ, որի բարձրութիւնը հասնում է 3,950 ֆ. (1,200 մետրի) և որը, Սևանի պէս, մի ժամանակ լիճ է եղել, որ Բարտրի կուշատ և Հաքարի գետերի միջոցավ դատարկուել է։ Այս ջրամկուշատ և Հաքարի գետերի միջոցավ դատարկուել է։ Այս ջրամկուշատ և Հաքարի կենդրոնում բարձրանում է Իշղու կամ Քաչալ-դաղ կողմանը լեռը, որ հասնում է 11695 ոտնաչափ բարձրութեան շրջակայ հրաբուխներից ժայիժքած և նախկին լճի յատակին մի քանի հարիւր գուտ բարձրութեան շերտերով նստած մոխիրը և խանձողները գետերի միջոցով տարուելավ խոր ձորեր են յառաջացրել։ Զեշաքարի դարատափերը (տերրաս), որ ծածկուած են հացահատիկների արտերով՝ ցցում են կանաչ հովիտների մէջ մոխրագոյն, կանաչ, կապուտ և մինչեւ անդամ ալկարմիր քարաժայտերով, որոնց անձրւը շաքարի գլխի և կոթողների ձև է տուել, սրանք տեղ-տեղ կազմում են քարախառն հողակոյտեր, որոնցից մի քանիսը կրում են իրենց ծայրերին վէմի խոշոր կտորներ. սրանք նոյնպիսի «գլխածածք սիւներ»-են, որպիսիները պատահում են և զվէցարիայում։ Տեղացիները օգտուում են դրանցից, շինելով դրանց մէջ իրենց

մառանները, գոմերը և մինչև անգամ բնակարանները¹⁾:

ԼԵՌՆԵՐ. Զանգեզուրը սաստիկ լեռնոտ է: Բազմաթիւ, մեծ և փոքր լեռներ զանազան ուղղութիւններով միմեանց կտրատում և առաջացնում են մեծ ու փոքր ձորեր ու հովիտներ, որոնց միջով հոսում են վտակներ ու գետակներ:

Ամենամեծ գագաթը Խշղուն է, որ բարձրանում է գաւառի արևմտեան սահմանում: Սա մի լեռկ լեռ է, բաղկացած երկու բարձր գագաթներից, որոնցից մեծը հասնում է 11625 ոտ. բարձրութեան: Սրա մօտ գտնւում է Թարփանմաղ (Փարմաշ, այսինքն չշարժուող, վրայի ձիւնը չհալուող) գագաթը, և փոքր ինչ հիւսիս՝ Ճան-Ղուրդարան (9219, կեանք-աղատող այսինքն աւազակներից հալածուելիս եթէ այդ լեռը հասնին՝ կեանքնը կազմառուի): Խշղուց հարաւ ձգւում են Ուչ-Թափալարի լեռները, որ միմեանցից բաւականաչափ հեռու և բոլորովին առանձին կանգնած երեք գագաթներ են: Սրանց մօտ գտնւում են նաև Եան-Ծափա (7519), Տաշ-Ծափա, Ջիշ-Ծափա (7327) և Ուլու-Ծափա (6698) գագաթները: Հարաւային սահմանին մօտիկ գտնուող լեռներն են Ղուրբան-Ծափա, մինը Մաղանջուղի մօտ (4557), միւսը՝ Մազմազակ (3353) լեռան մօտ (3340), Ամրդլդ-դաղ (4131), Բաշարէտ (4547): Արևելեան կողմում՝ Տէլտազ լեռնաշղթան, Ելլիջա (7066), Սաղսաղան (7083), Սարի-բաբա (7574), Փինգեահ (7903). Զիլեազ, Դալի-դաղ, Սարի եօխուշ, Վըրիս-դըզ լեռնաշղթան (9324), Վըդ-դարս գագաթով, Դալիկ-տաշ, Դիւրու-տաղ (6916), և Ալաղայա (7672), հիւսիսային կողմում՝ Զիշկլի, Զիլգեաս (7777) Գելլիս, Միլստուքեան լեռնաշղթան, (11651), Դալի-դաղ (11907), և Գեալին-դայա (11002):

Ներքին լեռներից նշանաւոր են, հիւսիսից դէպի հարաւ՝ Քեշիշ-Ծափա (7560), Քուդալար, Քեազիր-դաշ (10492), Լիւլապար, Ղապան-կեազը (7016), Ղուրեան բաբա (6124), Արտաշաւի, (4456), Վէակիլ (6006), Պիրջան (4594), Զիրալի բաշի (6099), Էկանատ Ծափասի (6364), Եաղլթափա-



ԴՐԱՄ ԱԴՐԱ

¹⁾ Ռեկլյո: Զեմլյա և լուծ. հ. VI. եր. 185.

(6298), Տեղ (5180), Պըղըլ-բողաս-դարի (11059), Հոչաս (6342), Լաշին (6328), Եալգուզ-դաղ (5410), Ճամէն-գէօմ (5294), Դատ-մելիք (6761), Բիզովէի-դարի (5448), (Ղարա-դեօլի մօտ), Քեչալ-դաղ (10648), Չալքրուն (6287), Ղազի գիւլան բաշի (7450), Ղամիւր-թափա (4449), Տօրխան-եալի (4490), Դաշ-քենտ եալ (6824), Մազմազակ (3843), Բէզմին դաղ (3656), Քարահունջ-թափա (5535):

ԼՃԵՐ.—Զանդեղուրում մեծ լճեր չկան, բոլորն էլ փոքրիկ լճակներ են, լեռներում գոյացած գոգաւորութիւնների մէջ: Ամենամեծ լճակը Ղարա-գեօլն է, որ գտնւում է Խշդլի, Բիզով-չիզարի և Քեչալ դաղ գագաթների ընդհարման կենտրոնում, 8930 ոտ. բարձրութեան վրայ:

Սրա մօտ գտնւում է Ղալնի-գեօլ փոքրիկ լճակը:

Ղարա-գեօլից դէպի արևելք, Չալքրուն լեռան մօտ, գը-տնւում է Ղազի-գեօլ փոքրիկ լճակը, ամբողջովին ծածկուած եղէ գովկ: Ամառը ջուրը սաստիկ նուազում է և երբեմն էլ բո-լորովին չորանում:

Արևմտեան սահմանին մօտ գտնւում են Օլոռլեար, Ալա-գեօլեար և Ղարա-գեօլ փոքրիկ լճակները, իսկ հիւսիսային կողմում Զիֆտլիկ լճակը:

Հարաւային կողմումն էլ, Ուչժ-փալարի մօտ՝ Ճնհեր-գեօլ և Ուչժափա-գեօլ լճակները:

Այս բոլոր լճերը գոյանում են գարնան հալուող ձիւներից և ամառը եթէ ոչ բոլորովին չորանում՝ գոնէ սաստիկ փոք-րանում են:

ԳԵՏԵՐ.—Զանդեղուրի ամենանշանաւոր գետը Հաքարու—գետն է, որ սկիզբն է առնում Գելլըղ սարերից: Նրա մէջ թափուում են՝ աջ կողմից՝ 1) Ճալվա-վտակը, որ բղխում է Գելլըղ լեռից, 2) Հոչասը, որ սկիզբն առնելով Միխտուքեան լեռնաշղթայից՝ ընդունում է իւր մէջ Խլդըրըմ-սու վտակը, 3) Աղ-օղլան կամ Ֆիծեռնավանքի-ջուրը, որ սկիզբն է առնում իկանատ-թափասուց և ընդունում է Մինքենտ-չայը, Ղարա-սուն, Մերիկ, Խընածախի-չայ վտակները: Աղ-օղլանը Զաբուլ

թրքաբնակ գիւղի մօտ վերակոչում է Զաբուխ-դետ և ալստեղ թափում է Հաքարուի մէջ:

Զախ կողմից — 1) Ալակըխն, որ սկիզբն է առնում Զիշի-կիլ լեռից, միանում է Զիլգեաս լեռից բղխող Կաբէրի-չայի հետ և ապա միանալով Ղըրխ-ղըր լեռնաշղթայից բղխող վտակների հետ, թափում է Հաքարուի մէջ: 2), Եաղլի-դարա վտակը, որ սկիզբն է առնում Սաղսաղանի մօտերքից, հոսում է Եաղլի գարա անտառապատ ձորակի միջով և Տատարասի մօտ թափում է Հաքեարուի մէջ: Եաղլի-գարա անունը ծագում է այն հանգամանքից, որ այս ձորակն ամենալաւ արօտներ ունենալով՝ առատ է իւղով: 3), Միլխալեվ, որ բղխում է Քիրսից, միանում է Սաղսաղանից բղխող ջոռ-սուլի հետ և Մելիկնոեասի գիւղից բաւական հարաւ թափում Հաքարուի մէջ:


Հաքարու գետը հոսելով շարունակ դէպի արևելահիւսիս՝ անցնում է ամբողջ Զանգեղուրի ստիկանական շրջանով և ապա միանում Բազար-չայի հետ և գնում թափում Վրաքսը:

Հաքարուի, ինչպէս և Բարկուշատի մէջ պատահում են բաւական մեծ օրագուլներ և ջրշուններ (ՎԵՃՐԱ).

Միւս գետերից նշանաւոր են. Գերուսի-չալը, որ սկիզբն է առնում Ուշ-թափալար լեռնաշղթայից: Այստեղ երեք լեռներ միմեանց ընդհարուելով՝ մի փոքրիկ ձորակ են ձևացնում, որտեղից բղխում է մի սառն, վարար աղբիւր, որ կոչում է Վարարակ. որան խառնում է ջոռ-ջուր վտակը, որ անցնում է Զագեձորի միջով: Ապա Քարահունջի մօտ Գորիսի գետին միանում է Ջաքարլու գետը, որ սկիզբն է առնում Ուշ-թափալարի աղբիւրներից և անցնում համանուն ձորով: Հոսելով մինչև Գառողլու գիւղի մօտերքը, Գորիսի գետը թափում է Բազարչայ գետը: Այս գետի հովիտը ամբողջովին ծածկուած է այգիներով, ուր բուսնում են բացի խաղողի որթից, նաև թթենի, կեռասենի, խնձորենի և այլն:

ՋՐՎԵԺ. — Զանգեղուրում կայ միայն մի ջրվէժ, որ գըտնում է Քարահունջ գիւղի հիւսիսային կողմում, բարձր ժայռի ծերպին: Առուակը սկիզբն է առնում Ուշ-թափալարի ստորոտի Եօթն-աղբիւր ու Գէօյ-բուլախ աղբիւրներից և մօտ 16

սաժէն բարձրութիւնից վայր գլորուելով՝ գեղեցիկ տեսարան ընծալում: Ժողովուրդը ջրվէժի հանած ձայնը՝ նկատի ու նենալով՝ ջռուան է կոչում նրան:



Ջրվէժ Քարահունջում. — Ջռուան.

ՀԱՆՔԵՐ. — Զանգեղուրի ստիկանական բաժնում չկան մըշակուող հանքեր, սակայն տեղ-տեղ երևացել և երևում են հանքեր, որոնք թերեւս մի ժամանակ ուշաղրութեան առնուին և շահագործուին: Սրանցից նշանաւոր են.

1) Քարահունջ գիւղում երկաթի և կափճի հանքեր:

2) Գառտլուռում պղնձի հանքը, որ, ինչպէս երկում է՝ հին ժամանակները մշակուելիս է եղել:

Յ) Խնձորեսկում աղի և պղնձի հանքեր:

4) Հաճի Սամլիում հանքային ձիթի (горный воськъ) աղբեստ (Asbeste) և պղնձի հանքեր:

ՀԱՆՔԱՅԻՆ ՖՐԵՌ.—Հանքալին ջրերով բաւական հարուստ է Զանգեզուրի շրջանը, սակայն ոչ մինն էլ կանոնաւոր կերպով չէ շահագործւում:

Այս ջրերից նշանաւոր են սելտերեան ջրերը, որ գտնվում են 1) Գորիսից փոքր ինչ արևելահիւսիս, Զագեձորում, 2) Քարաշէն գիւղի մօտ, 3) Հերիկ գիւղում, 4) Բայինդուր գիւղում, 5) Մենքենդի մօտ, տաք ջրից փոքր ինչ բարձր:

Ֆօմբային տաք ջրի երկու աւազան կայ Մինքենտի մօտ,
Հերիկի և Մինքենդի ճանապարհի գրեթէ կէսին. մինն էլ
կայ Քարահունջում:

ԿԼԻՄԱՆ. — Գաւառումս օդերևութաբանական կայարան չի գործում և կայարանի վերաբերութեամբ պակասում են հաստատ տեղեկութիւններ։ Այս միայն յայտնի է, որ ընդհանրապէս կլիման առողջաբար է և փոփոխուում է՝ նայելով տեղի բարձրութեան։ մինչդեռ բարձրաւանդակների վրայ ցուրտ է՝ չաքարի և Բարկուշատի հովտներում սաստիկ տաք է։ Բարձրաւանդակների վրայ ձմեռը տեսում է ամբողջ 6 ամիս և թէպէտ շատ խիստ չէ, բայց սաստիկ ձիւն է գալիս և յաճախ բուք բարձրանում։ Ուշ-թափալարի բարձրաւանդակում այնպէս խիստ են լինում այս բուքերը, որ Փորիսի և Սիսիանի մէջ հաղորդակցութիւնն ընդհատում է մի քանի ամսով։ Գեռ հին ժամանակներից այս տեղերում բարձր քարեր են ցցուած և մի յեծծառ թողած ճանապարհի կողքին՝ որպէսզի բքից բռնուած ուղևորը կարողանայ ճանապարհը գտնել, սակայն և այնպէս զքեթէ ամէն տարի պատահում են զոհեր։ Գարունը և աշունը անձրեացին են, ամպամած և թխապապատ օրերով։ Յաճախ տեղացող անձրեները թէև նպաստում են բուսականութեան աճման, սակայն ցորենի վրայ վատ ազդեցութիւն են անում, որովհետև աճեցնում են ցօղունը և թողլ չեն տալիո լաւ հասկ

Քոնելու։ Թղի խոնաւութիւնից բնակիչների մէջ շատ տարածուած է ռսկրացաւը։ Մի քանի տեղեր ճահճային լինելով՝ տարածուած է մայարիա հիւանդութիւնը։

Հաքարի և Բարկուշատի հովիտներում կլիման տաք է, և ամառը այնպէս տոթ է լինում, որ շունչ քաշել անդամ չէ կարելի՝¹⁾:

ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Այս գաւառամասի առաւելագույն չաղիսամլուի կողմը ծածկուած է խիտ անտառով, ուր զբունուում են զիխաւորապէս՝ կաղնի, բոլի (Carpinus Betulus). Կաճարկի (Fagus silvaticus, բուք). Կացիկի (յասեն), դարձաճ (Ulmus campestris). յրտնի (Juniperus, можжевельник), սղնի (боярышник), նարնջափայտ (Rhus cotinus) և այլն: Պտղատու ծառերից, թէ անտառներում և թէ այզիներում, գտնուում են—խնձորենի, տանձենի, սալորենի, կեռասենի, թթենի և այլն:

Դալարաբոյսերից նշանաւոր են՝ պոլսի (prangos), գեղ-նածաղկի (genista tinctoria), ուրց (thunus), վայրի անխոռն և այն, ինչպէս և գետնամօռի և երակ:

Արտերում յանում են՝ զանազան տեսակի ցորեն, զարի,
Հաճար:

ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐ. — Ընտանի կենդանիներից առաւելապէս պլազմա են՝ ոչխար, այծ, կով, էշ, ջորի, ձի։ Վայրենի կենդանիներից անտառներում և դաշտերում գտնւում են՝ նապաստակ, եղանիկ, այծեամ, աղուէս, գայը և երբեմն արջ։

ԹՐՉՈՒՆՆԵՐ. — Ընտանի թռչուններից պահում են գըլ-խաւորապէս՝ հաւ, տեղ տեղ էլ՝ հնդկահաւ, սագ և բադ. Վայրի թռչուններից զտնւում են՝ աղաւնի, կաքաւ, տատրակ, փասիան, կտցահար, լոր, ու մշահաւ (*Turdus merula*), բազէ, բուէճ (փոլինի), շահէն, արծիւ և այլն:

¹⁾ 0գտուել եմ՝ պ. Զելինսկով լիշեալ աշխատութիւնից, Գեղեկանովից „Յանցչուրեցի՞ յնձնե՞... վե մեծապահութեան օտոպահի՞“ Նետազօտութիւնից և Ալեօր՝ „իմ լիշատակաբանր“ ճանապարհորդութիւնից:

ՓԱՂԱՓԱԿԱՆ ՄԱՍՆ

ԳՈՐԻՍ. — Զանգեզուրի ոստիկանական շրջանը այժմ բաժանում է չորս մասի, — Հաջիսամլու, Ալիանլի, Բարկուշատ և Հաքարու: Հաջիսամլիի մասը բռնում է Ջալվա-չափ, Ալաքչու և Հոչասի ջրաբաշխները. Ալիանլունը՝ Հաքարի-գետի ձախ կողմը, որ տարածում է Ջուշի-Գորիսեան խճուղուց հարաւ: Բարկուշատի և Հաքարու մասերը բռնում են Բարկուշատ և Հաքարի-գետերի ստորին և միջին բնժադշների ափերը ¹⁾): Այս գաւառամասի գրեթէ մէջ տեղում գտնում է Գորիս-աւանը, որ բաժանում է Հին և Նոր մասերի: Այս վերջինը կազմում է Զանցեզուրի գաւառի կենտրոնը: Այստեղ են զետեղուած բոլոր վարչական հաստատութիւնները, այստեղ են խմբուած այս գաւառամասի ինտիլիգենտ և առեւտրական ուժերը:

Գորիսի արևելեան կողմում ձգւում է Տեղի, իսկ արևմտեան կողմում Աւշ-Եթափալարի բարձրաւանդակները. սրանց դէպի հարաւ մօտենում են միմեանց, իսկ հիւսիսային կողմում հեռանում են միմեանցից, կազմելով մի փոքրիկ հովիտ, որի միջով՝ հոսում է Գորիսի-գետակը:

Տեղի բարձրաւանդակը կտրւում է մի ուրիշ ձորակով, որ արևելքից իջնում է դէպի արևմտահիւսիս: Զորակի մօտ բարձրանում է Լաստ գաղաթը, իսկ սրա մօտ՝ մի ապառաժ, բարձր ժայռ, որի վրայ հնումը բերդ է եղել: Այժմ նրա բնականից փորուած, տեղ տեղ նոր պատով կարկատած պարսպի, հետքերն են մնում: Բերդի ժայռն իւր շարունակութեան վրայ ունի զանազան մեծութեան կոնաձև զագաթներ, որոնք կազմուած են ջրի ազդեցութեամբ: Նոյնպիսի կոնաձև ժայ-

¹⁾ Зелинскій. Извѣд. экон. быта госуд. крестьянъ въ Запгезурскомъ уѣздахъ. Ч. 9.

ռեր շարուած են մօտակայ ձորակի երկու կողմին ևս: Սրանք
ընդհանրապէս կարմիր աւազի շերտերից են բաղկացած, տեղ-
տեղ ժայռ քարերի խառնուրդով: Կան, որպէս բացառութիւն,
սպիտակներ էլ: Նոյնպիսի կազմութիւն և կարմիր կամ սպի-
տակ գոյն ունի և՛ բարձրաւանդակի բերդի հանդէպ գտնուող
լանջը, որ ուղղահայեաց զառիվալը ունի: Այս լանջի, ինչպէս
և ձորակի և բերդի քերծի մէջ կան բազմաթիւ, մեծ և փոքր
արհեստական քարալրեր, որոնք երբեմն ծառայել են որպէս
բնակարաններ, իսկ այժմ առաւելապէս որպէս խոտանոցներ
են դորձածւում: Ահա այս արհեստական քարալրներն են կազմել
մելիքանիստ Գորիս գիւղը, որի աղքատ դասակարգը դարձեալ
շարունակում է այդպիսի բնակարաններ կտրել իւր համար: Իսկ
հարուստներն սկսել են շինել կանոնաւոր տներ: Գիւղի կենդ-
րոնում գտնուում է հին, հասարակ եկեղեցին, իսկ սրա մօտ՝
Մելիք Հիւսէինեանների նախկին ապարանքը, որ այժմ
աւեր է:

Գիւղն ընդհանրապէս կեղտոտ է, անկանոն և միմեանց վրալ դիզուած տներով ու նեղ, ծուռ ու մուռ փողոցներով:

Սրա հակապատկերն է ներկայացնում Նոր-Գորիսը, որ
հնից բաժանում է Գորլիսի գետով։ Այս հիմնուած է 1870 թ.
Ստարացիկի դաւառապեսի ձեռքով և Մանուչար-բէկ Մելիք-
Հիւսէինեանի խորհրդով։ Արա տեղը հարթ է, նեղ, բայց բաւական
երկար։ Հինգ կանոնաւոր և շատ լայն փողոցներ ձգւում են հա-
րաւից հիւսիս, հետզհետէ հիւսիսալին կողմից աւելի և' աւելի
երկարելով։ Ուրիշ հինգ փողոցներ էլ խաչաձև կտրում են այս
փողոցները։ Դրեթէ կենդրոնում զտնում է մի մեծ հրապա-
րակ, որից ներքև կան մի շարք խանութներ, իսկ սրանց ա-
ռաջ նոր տնկած քաղաքալին ընդարձակ պարտէզը, հասա-
րակ, փայտէ ցանկապատով։ Այս պարտէզը մի փողոցով բա-
ժանուում է վերին և ներքին մասերի, իսկ այս փողոցի եզրին
կանգնած է Գ. Միքումեանի աղբիւրը, որի ջուրը չորս խողո-
վակներից դուրս է թափուում գուերի մէջ։

Տներն ընդհանրապէս զեղեցիկ են, մեծ մասամբ երկար-կանի, տաշած քարից շինած, փայտէ կտուրներով ծածկուած:

Գրեթէ բոլոր տներն իրենց առջև պարտէղներ ունին, մի քանի պտղատու ծառերով:

Եկեղեցին, որ այժմ է միայն շինուում սաստիկ դանդաղութեամբ՝ բաւական փոքր է և առանց համաչափութեան. — դռները անհամեմատ մեծ են, իսկ պատուհանները չափազանց նեղ:

Միակ, պետական, երկդասեան տղայոց դպրոցի շէնքը շատ հասարակ և անյարմար է:

Բնակիչները չայ լուսաւորչականներ են, ընդամէնը 460 տուն, 1697 ար. 1449 իգ. ի միասին՝ 3146 հոգի:

Պարապում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ և առևտրով: Ճուկան կենդանութիւն է ստանում երբ սար դնացող թուրքերը լցում են աւանը:

Նոր Գորիսից դէպի հիւսիս, հազիւ մի վերստ հեռաւորութեամբ միւեւոյն հովտում գտնուում է մի քարաշէն, գեղեցիկ վանքի աւերակ, քանդուած պարապով ու մի քանի խցերով: Մի քիչ ներքեւ վաղելիս է եղել մի սառնորակ աղբիւր, որ այժմ Գ. Միրումեանի ծախսով տարուած է Նոր Գորիս: Ո՛չ մի արձանագրութիւն չկայ բոլոր աւերակների վրայ, միայն աւանդութիւնը պատմում է, թէ սա երեմն շատ հարուստ վանք է եղել, ունեցել է բազմաթիւ հօտեր, որոնց տուած կաթը խողովակներով հոսել է սարից մինչեւ վանքը: Այստեղ է եղել և այն գորաւոր (զօռ) զանգը, որ իւր անունը տուել է գաւառին¹⁾:

ՀԱԳՅԱՅԻ, — Այս վանքից դէպի արևելահիւսիս ձգւում է մի բաւական խոր ձոր, որի միջով հսուում է Գորիս-գետի օժանդակ ձոռ-ջուր վտակը, որի անունով և կոչւում է ձորը: Իսկ այն մասը, որ երկու կողմից պատած է բարձր ժայռերով, և որոնց մէջ կան բաւական թուով քարայրեր՝ կոչւում է Զագեձոր կամ Ֆակերի-Ձոր: Այս «ծակերը» կամ «քրատակերը» հեշտութեամբ փորուած են ձորի լանջերին, որովհետեւ Զանգեզուրը մի ժամանակ ջրի տակ լինելով այս բարձրութիւն-

¹⁾ Տես եր. 7.

ները գոյացել են աւազախառն հողի շերտերից: Այս ծակերը զանազան մեծութեան են, և նրանցից միքանիսը միմեանց հետ միացած են նեղ անցքերով: Ֆակերից շատերը շատ բարձր են գտնուում, և այն էլ այնպիսի ուղղահայեաց տեղերուուն, ուր ոչ մի մարդկային ոտք չէ կարող բարձրանալ: Ֆերունիները պատմում են, թէ լսել են իրենց պապերից, որ այդ ծակերում բնակուողները թոկեր էին քաշ տալիս և բռնած բարձրանում: Մինչև անգամ այժմ էլ մի ծակի վերև մի գերան է ձգուած, որից հաւանականօրէն կապելիս են եղել թոկը: Ֆերունիները նկարազրում են, թէ ինչպէս կանայք, երեխան մէջքերին կապած, ճարպիկութեամբ բարձրանալիս են եղել այդ թոկերով: Գրանց խօսքերը հաստատուում են Աբրահամ Կրետացու վկայութեամբ, որ ասում է Խնձորեսկի մասին. «Ի բարձրաբերձ տեղիս յալսկոյս և յանկոյս դէմ յանդիման միմեանց փորեալ ապառաժ վէմս քարայր, որ են հաղարաց, իւրաքանչիւր ոք վասն իւրեանց տուն բնակութեան շինեալ բնակէին. և այն էր զարմանք, որ կաշէ փոկովք ելանէին և իջանէին կանայք՝ զստնդեայ տղայս կապեալ ի վերայ ողին իւրեանց, նոյնպէս և զսափորն ջրոյ և հարկաւոր իրաց. այնպէս փոկով ելանէին ի վեր և մտանէին 'ի բարձրագոյն որջս վիմաց, և քարշէին դփոկէ առասանն ի վեր. մարդ ոչ կարէր ելանել»:

Քարայրներից նշանաւոր է «Կարմիր եկեղեցի» կոչուածը, որ մինչև այժմ էլ Կարմիր կիրակէի օրը բազմաթիւ ուխտաւորներ են գնում, գլխաւորապէս չին և Նոր Գորիսներից: Սա գտնուում է ձորի աջ կողմում, գրեթէ գագաթին: Դաշտի վրայ կայ մի փոքրիկ գերեզմանատուն, որտեղից մի նեղ կածան քերծի լանջերի վրայով իշեցնում է դէպի ձորը, ուր բացւում է մի փոքրիկ քարաշէն դուռն: Անցնելով այս գռնից, մտնում էք 9,23 մետր (4 ս. և 1 արշ.) երկ. 4,97 մ. (2 ս. և 1 արշ.) Լայնութեան և 2,84 մ. (4 արշ.) բարձրութեան մի այրի մէջ, որի միայն ձօրահայեաց կողմը քարէ պատ է քաշած:

Հիւսիսային կողմում շինուած է սեղանը, որի վրայ գեռ ևս կանգուն մնում է վէմքարը: Ինչպէս երեւում է՝ տեղը անշարժար լինելով՝ հիւսիսային կողմումն են զետեղել սեղանը:

Արևմտեան կողմում, հողի մէջ փորուած է աւազանը: Սեղանիր վրայ կան բաւական թուռվ կաւէ կանթեղներ, որոնցից միջինը շատ գեղեցիկ է:

Կարմիր եկեղեցուց փոքր ինչ վեր, նոյն ձորակում, վտակի անմիջապէս ափին գտնուում է մի քարաշէն փոքրիկ եկեղեցու աւերակ, որի դրան կամարակալ քարի վրայ գրուած է. Յիշատակ է սր. Եկեղեցիս Մելիք Օհանին եւ իւր ծնողացն Մելիք Բաղուն թվ. ԹՄՓԹ.

Այս եկեղեցու հանդէպ գտնուող ժայռի գագաթին նկատելի են փորուածքներ: Ասում են, թէ այստեղը ծառայելիս է եղել որպէս բերդ:

ՍԻՆԴԱՐԱ. — Զագեձորից փոքր ինչ բարձր ձգւում է մի ուրիշ հովիտ, որ կոչում է Սին-Թարա: Այս տեղ կայ մի քարաշէն, կամարակապ եկեղեցու աւերակ և բաւականաչափ «քարատակ»-ներ, միքանիսը քիրծերի, միւսները հողի մէջ փորուած:

Ֆերունիների ասելով՝ սա «Վէրի շէնի», այսինքն չին-Թորիսի ամարանոցն է եղել:

ՀԻՆ ԳՈՐԻՍ ԿԱՄ ՎԵՐԻ ՋԻՆ. — Գորիս գետի ուղղութեամբ, դէպի հիւսիս ձգւում է բլրակների մի շարք, որոնց մէջ կայ մի բարձր, կարմիր ժայռ. տեղացիները սրան կոչում են «Պղնձաքար» և սրա անուամբ էլ ամբողջ բլրակների շարքը՝ Պղնձաքարի սարեր: Այս Պղնձաքարի ժայռի մէջ կայ մի բնական, 10,65 մ. (5 ս.) երկ. 8,52 մ. (4 ս.) լայն. և մօտ 6,39 մ. (3 ս.) բարձրութեան բնական այր, ուր այժմ ոչխարներ են մակաղում: Այս ժայռից փոքր ինչ հիւսիս, նոյնանուն բլրակների լանջին, դժոնում է Վէրի շէն կամ չին Թորիս գիւղը: Այստեղ էլ տների մեծագուն մասը, մանաւանդ հները, «քարատակ»-ներ են, միայն ոչ թէ քրծերի, այլ ուղղակի բլրի լանջին փորուած: Սրանցից շատերը հինգ այժմ էլ ծառայում են որպէս բնակարաններ, և բացի բոլոր միւր անյարմարութիւններից, ունին նաև այն անտանելի պակասութիւնը, որ գարնանը նրանց մէջ սաստիկ կաթում է:

Գիւղում կայ մի փոքրիկ, կիսով չափ քերծի մէջ փո-

րուած եկեղեցի Նարակնունք (Նորակնունք) անունով, որի գլուխ կամարակալ քարի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը. «թ. Թէկ. Ես նպաստ կանգնեցի սր. Եկեղեցիս ՚ի փրկութիւն հոգուոյս»: Այս եկեղեցին այժմ էլ իբր աղօթատեղի է ծառայում: Բացի սրանց կայ նաև մի ուրիշ եկեղեցու աւերակ:

Այս գիւղում այժմ բնակում են 40 տուն չայեր, 219 ար. 193 իգ. 312 հոգի ընդամենք: Գիւղացիների պարապամունքը երկրագործութիւնն ու անսանապահութիւնն է:

Մելիք-Հիւսէինեան Մանուչար-բէկը պատմում էր, թէ այս գիւղում եղել է երկու բրգաձև, բարձր շինութիւն: Իւր հայրը, Մելիք-Յարութիւնը, հրամայել է քանդել դրանցից մինի զլուխը, և երբ մի անցք է բացուել՝ մի մարդ են կախել ներքեւ. սա իջել է բաւական ցած և գետնի մէջ տեսել է ահազին ժայռ քարերով ծածկուած, երկու սենեակ, որոնցից մինի մէջ գտել է ձիու բրոնզէ սանձ: Այն ահազին սանձը այժմ էլ մնում է Մանուչար-բէկի մօտ: Վերջին ժամանակներս այդ հինաւուրց շինութիւնները քանդուել են:

Վերի-Ճէնից դէպի հիւսիս, մօտ 2 վերստ հեռու մի ձորակի մէջ բղխում է մի սառնորակ աղբիւր: Սրա մօտ կան ահազին քրծեր, որոնցից ամենամեծի մէջ կան երեք մեծ «քարատակ». սրանցից երկուսը միմեանց հետ հաղորդակցում են արհեստական կերպով բացուած մի կլոր ծակով: Սրանց մօտ կայ և մի ուրիշ, փոքրիկ քարատակ, որ երկու նեղ անցք ունի: Սա սրբատեղի է համարում, և թէպէտ ոչ մի խաչ, ոչ մի պատկեր չկայ, բայց և այնպէս ձէթի հին կանթեղներ են վայր ածած մեծ թւով, և ամբողջ քարատակը սեւացած է վառուած ձէթի ճրագների և մոմերի ծուխից: Թեռ այժմս էլ Գորիսից շատ ուխտաւորներ են գալիս այստեղ: Այս ժայռերի դիմաց մի ուրիշ ժայռ ևս կայ, երկու, միմեանց հետ հաղորդակցութիւն ունեցող, բնական այրերով: Սրանցից մէկի անկիւնում մի օճախ կայ, որ ցոյց է տալիս, թէ սրանք մի ժամանակ իբր բնակարան են ծառայել:

Սրանցից էլ մօտ 40 մետր հեռու, Վարարակի ափին,

դարձեալ գտնուում են քերծեր, որոնց մէջ կայ մի ահազին այր, որ հաղորդակցում է ուրիշ երկու, փոքրիկ այրերի հետ։ Քիչ էլ հեռու, նոյն Վարարակի մօտ, կայ մի ուրիշ, բոլորովին կարմիր քերծ, որի մէջ ևս կան բաւականաչափ քարատակեր։

Գորիս—գետի հովիտը շարունակւում է նաև Գորիսից ներքեւ, դէպի արևելահարաւ, և գնալով լայնանուում ու խորանուում է։ Զորի երկու լանջին կան բաւական թուով քարայրեր, որոնցից մի քանիսը շատ մեծ են և շատ բարձր տեղ են գտնուում։ Սրանք մի տեղում չեն խմբուած, այլ ցրուած են։ Նկատելի է, որ այս այրերից շատերն արհեստական են եղել և հաւանօրէն շինուած են պաշտպանութեան համար։ Կան նաև այնպիսին ներ, որոնց մասին կարելի է կարծել թէ ջրի աղդեցութեամբ են կազմուել։ Այս ձորն այժմս էլ ամբողջովին պատած է ալգիներով, ուր բացի խաղողի որթից, կան նաև թթենիներ, կեռասենիներ, խնձորենիներ և այլն։ Ինչպէս երևում է՝ հին ժամանակներումն էլ այս ձորն առատ է եղել խաղողի որթերով, որովհետեւ ժայռերի մէջ հնաձաններ են փորուած։

Նշանաւոր է նաև այն, որ հնաձանների մօտ շինուած են ձի կապելու տեղեր, ուր ձին միշտ կապած պատրաստ է եղել՝ աւազակների յարձակման դէպքում, տիրոջը փախցնելու։ Փողովորդը դեռ այսօր էլ լիշում է, թէ Պարսից տիրապետութեան ժամանակ որքան վտանգաւոր էր այդ ձորով անցնելը։ Այս ձորի աջ ափին, Գորիսից հաղիւ երկու քիլոմետր հեռաւորութեան վրայ, բարձրանում է 0ի վաւոր բերդը։ Սա ձորի գագաթին բարձրացող մի ահազին ժայռի վրայ է գտնուում, որի մէջ երևում են բաւական թուով քարայրեր։ Պարիսպը նոյն-իսկ ժայռից է փորուած, իսկ տեղ-տեղ՝ արհեստական պատ է քաշած։

Մի քիլոմետր էլ հեռու, դարձեալ գետի աջ ափին, բայց փոքր ինչ հեռու և բարձր՝ գտնուում է Վարահունջ գիւղը, որտեղ է ջուռան ջրվէժը։ Այս գիւղի տները միմեանց վրայ կիտուած, մի քանիսը քարատակ, մի քանիսը դարադամ, մի քանիսն էլ կանոնաւոր, փայտէ կտուրներով գեղեցիկ սենեակներ

են։ Հին եկեղեցին այժմ աւերակ է, իսկ նոր եկեղեցին շինուած է հին գերեզմանատան մէջ։ Գիւղի արևելեան մասը 1889 և 1896 թուերին երկրաշարժից պատառուել և նստել է (փոս է ընկել), ուստի բնակիչները տեղափոխուել են միւս մասը։

Այս գիւղում, ինչպէս ասել ենք՝ կան երկաթի և կաւիճի անմշակ հանքեր և ծծմբալին տաք ջուր։

Բնակիչները բնիկներ են, 105 տուն, 543 ար. 437 իդ. ընդամէնը 980 հոգի։ Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և այգեպանութեամբ։ Կան նաև նշանաւոր հիւսներ, որ աշխատում են գլխաւորապէս բագւում։

Ժողովրդի մտաւոր վիճակը, միւս գիւղերի հետ համեմատելով՝ բաւական բարձր է։ Գեռ 1893 թուին բացուել է չայոց ծխական երկսեռ դպրոց, որ շուտով նոյն գիւղացի յայտնի բարեգործ Առաքել Ծատուրեան առել է իւր հովանաւորութեան ներքոյ և պահել մինչև դպրոցների փակուելը 1896 թ։ Բացի այս դպրոցից՝ շատերն էլ ուսել են քաղաքներում, և այժմս այս գիւղից կան 3 համալսարանական, և 10 հողի միջնակարգ դպրոցներում աւարտողներ։

Վարահունջից էլ մօտ 6 քիլոմետր դէպի հարաւ, նոյն ձորի աջ կողմում բարձրանում են երեք առանձին, ահազին ժայռեր, որոնցից մինի վրայ կայ մի հինաւուրց ամրոց։ Այժմ ոչ մի ճանապարհ չկայ նրա զլուխը բարձրանալու, միայն հեռուից երևում են բնակչութեան պարիսպ և այրեր։ Ոմանք, սրան կը դալա են կոչում, ուրիշներն էլ Գեաւուր-դալա։

ԽՆՉՈՐԵՍԿ. — Գորիսից մօտ 8 քիլոմետր հեռաւորութեամբ դէպի արևելք, քիրծերի մի խումբ կղզիանում է Բիւլիլիւլաձոր, Քըմըլիստաձոր, Ջրոչուոտ, Ջալաչալուկ, Սընոցի-ձոր և Պըոշնոտ ձորերով, իսկ քիրծերի բոլոր լանջերին էլ բնակսւթեան համար «քարատակ»-ներ են փորուած և այժմ էլ փորուում են։ Քիրծերի ամենաբարձր գագաթին հնումը մի փոքրիկ ամրոց է եղել, որի միայն հետքերն են այժմ մնացել։ Գիւղի մէջ բաժանուած 16 աղբիւրների ջուրը մի փոքրիկ առուակ կազմելով՝ հոսում է գիւղի միջով։ Բնակարանների մեծագոյն մասը քարատակներ են, որոնցից հնագոյնները շատ բարձր

դիրք ունին, սայնպէս որ ներկայումս բնակութեան համար ան-
յարմար լինելով՝ ծառացում են որպէս խոռանոցներ։ Ըստ գը-
ժուարութեամբ, թուկեր կապելով կարողանում են բարձրանալ
այդ այրերը և խոս դարսել։ Այժմեան բնակիչների բնակարան-
ները նոյնպիսի քարատակներ են, միայն աւելի ցած, մատչելի
տեղերում փորուած։ Ո՞չ մի կանոնաւոր, և նոյն իսկ անկանոն
փողոց չկայ, այլ նեղ անցքեր տանում են մի բնակարանից
միւսը, որոնք, մինը միւսի վրայ, մինը միւսից փոքր ինչ
բարձր փորուած քարատակներ են։ Սրանցից լաւագոյնները
դռների վերև մի-մի ծակ ունին, որտեղից արևել լոյսը ազօտա-
բար ներս է թափանցում, միւսները սիայն մի դռնով են հա-
ղորդակցւում լոյս աշխարհի հետ։

Նորագոյն բնակարանների կէսը քիրծի տակ, իսկ կէսը գուշսն են, կազմելով մի փոքրիկ ղարադայ: Փարատակների մէջ բնականից կտրուած են պահարաններ և նատարածներ:

Այժմ շինուում են նաև երկարկանի կանոնաւոր տներ

Զորի մէջ, որտեղով հսում է փոքրիկ առուակը՝ կան
գեղեցիկ, կամարակապ և առջևը բաց արհեստական այլեր,
բաւական բարձր և լայն բնական թախտերով, որտեղ երևի
նստելիս զուարձանալիս է եղել նախկին բնակիչները բռնու-
թիւնից շունչ քաշելու համար:

Գիւղի գրեթէ կենդրոնում, նոյնպէս քիրծի մէջ, փորուած
է եղել մի փոքրիկ եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդուած է:
Քայց մի այսպիսի զետնափոր եկեղեցի ղեռ ևս կանգուն մնա-
ցել է գիւղից դուրս, գէպի արևելք, մի քիրծի մէջ, ուր կան
նաև գերեզմաններ, առանց տապանագրերի:

Այժմ գիւղն ունի երկու եկեղեցի, որոնցից հինը, որ բաւական գեղեցիկ և կամարակապ է՝ գտնւում է գիւղի կենդրությունը, իսկ միւսը, որ նոր է՝ գիւղի նոր, հիւսիսային մասում: Եռաշին եկեղեցու դռան կամարակալ քարի վրայ գրուած է. թվ. ԹԱՓԵ+ԲԻԹ. Յիշատակ է սուրբ Հոփիսիմայ եկեղեցիս, ես Թիշու որդի Թուրակս սինել սուի սուրբ եկեղեցիս ի հալալ արդեանց իմօց յիւեցէք զիս ՚ի ՔԱ:

Գիւղի հարաւ արևելեան կողմում, քիրծից մի լեզուակէ է

Ճգլում, որի երեք կողմից հոսում է Խնձորեսկի առուակը: Այս
լեզուակի հարժ մասի վրայ կայ մի փոքրիկ եկեղեցու աւերակ,
մօտը խցերի հետքեր, իսկ լեզուակի շուրջը՝ պարխաց: Եկեղեցու
հիւսիսային կողմում գտնում է Միսիթար սպարապետի գերեզ-
մանը այս տապանադրով.

Այս է տապան ի հանգիսեան
Իշեալ մարմնով ՚ի գերեզման,
Սայ Միխիթար մեծ անուանեալ,
Սորա օնէր իշխանութիւն.
Սա բեմուրաս զնաց ջիվան
Որ է երկրէն սայ Կեաննուվ էր:

Եկեղեցու հարաւային որմին կից է՝ Մելիք-Բարխուդարի գերեզմանը, որ Տեղ գիւղի մելիքն է եղել:

Մինչև 1896 թ. այս եկեղեցին բոլորովին կանգուն էր, միայն այդ թուին գիւղացիները քանդեցին և նրա սրբատաշ քարերով նրա գաւթում երկու մեծ սենեակներից բաղկացած Հայոց եկեղեցական ծխական դպրոցի շէնք կառուցին, ուր այժմ գետեղուած է պետական երկդասեան դպրոցը:

Գիւղում կան նաև ս. Մինսս և ս. Նահատակ անունով փոքրիկ, հասարակ մատուռները, որ ուխտատեղիներ են համարում:

Գիւղի բնակիչները բոլորն էլ չայ լուսաւորչականներ են,
ընդամենը 613 տուն 2344 ար. 1875 իգական, 4219 հոգին
ի միասին։ Պարապում են երկրագործութեամբ, այդեպահու-
թեամբ, անասնապահութեամբ և մասսամբ օղեհանութեամբ։
Գիւղացիների մեծ մասը գնում է Բագու մշակութիւն անելու։
Այստեղ ամենից աւելի զգալի է Բագու կեղծ լուսաւորութեան
ազդեցութիւնը. կան կանանց զբեստների 35 դերձակ, որոնցից
շատերը ունին կարի մեքենաներ, թէև աշխատում են այրերի
մէջ։ Կան նաև կտորեղէնի 4 խանութ, ուր երեսում են նաև
թանկագին, արշինը 1—2 ր. արժողութեան կտորներ. Դ ման-
րածախսի խանութ, ուր քաղցրեղէնն ու մրգեղէնը առաջին
տեղն են բռնում։ Երեք էլ ներկարարի (բօյամի) գործարան

կայ: Գիւղի բարոյական վիճակը բաւական ողբալի է. ինչ որ պակաս է թողնում Բագրում փշացած երիտասարդութիւնը՝ այն լրացնում են հինգ տգետ քահանաներ, միմեանց դէմ լարած մեքենայութիւններով: Մինչեռ հին սերունդը շատ գեղեցիկ և բարձրահասակ է՝ նորը հիւանդոտ է և փոքրահասակ:

Այս գիւղում կան բաւական աշուղներ, որոնցից նշանաւոր են աշղ Մարտիրոսը, որի աշակերտն է զարադշաղեցի աշղ Հաղամը, և իւսուփ օղլին, որ գրել է «Հզարի քնարը»: Նշանաւոր է նաև աշղ Ներսէս Սաղանդարեան Թառսիւնի մականուանեալը, որ մօտ օրերս հրատարակեց իւր «Նոր երգարանը»:

ԿՈՌՆՉՈՐ. — Խնձորեսկից դէպի արևելահարաւ, հաղիւ Յ քիլոմետր հեռաւորութեամբ մի խոր ձորի լանջին գտնուում է կոռնձոր գիւղը: Այստեղ կան բաւական թուով հին քարատակներ և մի քարատակ եկեղեցի: Նշանաւոր են նաև այն կոնաձեժայուերը, որ ցցւում են ձորակի մէջ: Այժմեան բնակվչները տեղատրուած են մասամբ այդ հին, մասամբ էլ նոր կտրուած քարատակների և մանաւանդ հասարակ զարադամների մէջ: Միակ քարաշէն եկեղեցին բաւական հին և քայլքայուելու վրայ է: Գիւղի միջով անցնում է համանուն վտակը: Բնակիչներն ըոլորն էլ հայ լուսաւորչականներ են, 219 տուն, 761 ար. 573 իգ. ի միասին՝ 1334 հոգի: Պարապմունքը նոյնն է, դպրոց երբէք չեն ունեցել:

ԽՆԱԾՈՒԽ. — Այս գիւղը գտնուում է Գորիսից դէպի հիւսիս, մօտ 25 քիլոմետր հեռաւորութեամբ: Խոկ սրա մօտ, հաղիւ 2 քելոմետր հեռու ձգուում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ առուակ: Այս ձորի երկու կողմում կան կարմիր և սպիտակ աւազախառն հողից կազմուած քերծեր, որոնք ջրի ազգեցութեամբ զանազան ձեւեր են ստացել, մանաւանդ նշանաւոր են մի քանիսը, կոնուսի ձեռք: Այս քերծերի մէջ ևս կան բազմաթիւ մեծ և փոքր քարատակներ, նախկին բնակարաններ: Չորի բերանում, ուր երեք կողմից բոլորւում են լեռներ՝ քարէ պարիսպ է քաշուած և մի մեծ դարպաս թողնուած: Նոյնալիսի մի պարիսպ էլ գաղուած և մի մեծ դարպաս թողնուած:

ընդհարման կէտում, Տրչափակելով մի փոքրիկ տարածութիւն, որ ձորից բաւական բարձր է: Այստեղ գտնուում է մի մեծ, 32 մ. (15 ս.) երկարութեան, 21,3 մ. (10 ս.) լայնութեան և մօտ 27,7 մ. (13 ս.) բարձրութեան քարայր, որի ձորահայեաց կողմը բոլորովին բաց է: Սա կարծես մի բնական սրահ լինի, որից դէպի բոլոր երեք կողմերը բացում են մեծ և փոքր արհեստական քարատակեր: Սրան կից է նաև մի ուրիշ, մեծ ալր, որ ծառայելիս է եղել որպէս եկեղեցի: Սրա երկարութիւնն է 14,2 մ. (6 ս. 2 արշ.) լայնութիւնը՝ 9,2 մ. (4 ս. 1 արշ.) և բարձրութիւնը՝ մօտ 12,8 մ. (6 սաժէն): Սա ամբողջովին քիրծի մէջ է և միայն ձորահայեաց կողմից քարէ պատ է շինուած: Եկեղեցին ունի մի սեղան, երկու փոքրիկ սրբատնով, և երկու աւանդատուն, որոնցից հարաւայնի մէջ փորուած է աւազան: Խոկ միւսը ծառայում է որպէս գաւիթ: Եկեղեցուց բարձր կան ուրիշ քարատակներ ևս, որոնք հաւանօրէն միմեանց հետ հաղորդակցուում են, որովհետեւ դրսից շատ բարձր և բոլորովին անմատչելի են:

Եկեղեցու հանդէպ և վերև, հարթութեան վրայ, կան գերեզմանաքարեր, որոնց վրայ միայն խաչեր կան քանդակուած:

Գիւղը ընկած է բլրակների լանջերին, որոնք միմեանց ընդհարուելով՝ մի փոքրիկ ձորակ են կազմում: Այստեղ բղխում է մի վարար աղբիւր, որի ջուրը հոսելով ձորի միջով, հնարաւորութիւն է տուել պարտէզներ տնկելու, որոնց մէջ մշակուում են առաւելապէս կեռասենիներ:

Գիւղի կենտրոնում գտնուում է մի հնաշէն, հասարակ եկեղեցի, խոկ նրանից բարձր, երկու փոքրիկ մատուռ և մի հին գերեզմանատուն, ուր նշանաւոր է Մելիք Հայկազի գերեզմանը:

Տները զարադամներ են, սակայն կան նաև քարատակներ, որոնցից մի քանիսը հին են, խոկ միւսները նոր են փորուած: Հին քարատակները գլխաւորապէս ծառայում են որպէս խոտանոց և գոմ:

Բնակիչներն առաւելապէս Սուլթան-քենդից զաղթած Հայ լուսաւորչականներ և շին քրդեր են. Հայերը 188 տուն են, 834 ար. 631 իգ. ընդամէնը՝ 1465 հոգի: Քրդերը՝ 50

տուն. 135 ար. 117 իգ. ընդամէնը՝ 252 հոգի։ Պարապմունքը նոյն է։ Գիւղում կայ չորս խանութիւն։

ՏԵՂ. — Այս պատմական գիւղը գտնուում է Գորիսից դէպի արևելահիւսիս, մօտ 18 քիլոմետր հեռաւորութեամբ, մի բարձրաւանդակի վրայ։ Գիւղի հարաւային և հիւսիսային կողմերից ձգւում են մի-մի ձոր, որոնք գիւղի արևելեան կողմում միանալով տարածում են մինչև Հաքարի գետը, Քուչուղի ձոր, անունով։ Հիւսիսային ձորից հոսում է մի առուակ, որ Տեղի-ջուր է կոչում, իսկ հարաւային ձորում կան երկու աղբիւր, որ սուրբ են համարում և պաշտում։ Գիւղում փողոցներ չկան. տների կտուները ծառայում են որպէս բակ և փողոց։ Տներից շատերը դարադամներ են, որոնց առաջը կան կամարակապ բաւական ընդարձակ բակեր, իսկ յետի մասում միւս տների տակ մտած քարատակներ, որոնք ծառայում են որպէս ախոռ կամ մառան։

Գիւղի գրեթէ կենտրոնում գտնուում է կարմիր սրբատաշ քարից շինուած մի անխորան եկեղեցի, որի երկարութիւնն է 11.36 մ. (5 ս. և 1 արշ.) լայնութիւնը՝ 4,26 մ. (2 ս.) և բարձրութիւնը՝ 7,81 մ. (3 ս. և 2 արշ.): Զեղունը կամարակապ է և առանց գմբէթի։ Երկու նեղ և կարճ պատուհաններ լուսաւորում են եկեղեցին։ Միակ դուռը այժմ փակուած է, իսկ արեմեան պատը քանդելով՝ եկեղեցին 6 մետր երկարութեամբ մեծացրուած է անտաշ քարերով և մի զուռն շինուած, որի կամարակալ քարի վրայ կայ հետևեալ արձանագրութիւնը.

Յիշատակ է սուրբ տաճարին վկան, նորոգեցան Բարխուդարն իւր կողակից Թաճումն Ռ... իսկ նորմիլն թ. ԹՃՃ... իսկ դռան ձախ կողմում։ Յիշատակ է սուրբ տաճարի խորհրդանոյն զահնազարի կողակից Վառուն իւր որդի Պատալին։

Եկեղեցին պատած է պարսպով, որի մէջ բաց են թողուած ծակեր՝ հրացան արձակելու համար։ Պարսպուած գաւթում կան մի քանի գերեզմաններ և նկատելի են սենեակների հետքեր։ Թէ եկեղեցու և թէ պարսպի մէջ կան շատ գեղեցիկ խաչքարեր, զլխաւորապէս գերեզմանների վրայից վերցրուած։

Եկեղեցուց փոքր ինչ հեռու գտնուում է Մելիք Բարխուդարեանների ապարանքը, բաղկացած մի քանի դարադամներից, որոնց առաջը կան թաղակապ բակեր (դալան). սրանցից մինի վրայ գրուած է։

Թվ. ՌՄԼԲ. ի վայելումն մելիք Բարխուդարի որբի Պատիթ բէկս շինեցի ամարաթս Իբրայիմ խանի ժամանակ։

Այս ապարանքից փոքր ինչ հեռու գտնուում է հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիւ հին և գեղեցիկ տապանաքարեր։ Հետաքրքիր են մեծատունների գերեզմանաքարերը. սրանք երկու մետրից աւելի երկարութեան, 71 սանտ. բարձրութեան և մօտ 36 ս. լայնութեան քառանկիւնի քարեր են, որոնց երկու երեսների վրայ, գեղեցիկ նշխերի մէջ զանազան տեսարաններ են քանդակուած, օրինակ. մի առիւծ խեղդում է մի զառ., կամ մի իշխան գինի է ընդունում մի ծառայից, մի աշուղ էլ ածում է։ Այս տապանաքարերի ներքին մասում դէպի ոտների կողմը, կանգնեցրած են $2\frac{1}{4}$ արշ. բարձրութեան միակտուր քարեր, որոնց արևմտեան երեսին խաչ է քանդակուած, իսկ արևելեան կողմի ներքին մասում բարձրաքանդակ «օջախ» դուրս բերուած։ Այս վերջինը նշանակում է, որ ննջեցեալը մէծ օջախից է եղել։

Բնակիչները բոլորն էլ հայ լուսաւորչականներ են, 472 տուն. 1871 ար. 1288 իգ. ընդամէնը՝ 3159 հոգի։ Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, այգեպանութեամբ և օղեհանութեամբ։

Գիւղի մտաւոր վիճակը նախանձելի չէ. միմիայն անցեալ 1897 թ. բացուեց պետական միդասեան դպրոց։ Գիւղացիների վարկն էլ բաւական ընկած է. սրանք յատնի են որպէս կըռուար, անհիւրասէր, խաբեբայ և զող մարդիկ։

Գիւղը այժմ պատկանում է Պոլուխաննեանին, Աթաբէկ-եանին և թիւրք Ռուստամբէկովին, մինչզեռ առաջները պատկանելիս է եղել Տաթևի վանքին, որովհետև զահանգուիս գշխովի դաստակերտն է եղել, և սա իւր ամուսին, Սմբատի,

Սիւնեաց առաջին թաղաւորի հոգու փրկութեան համար 938 թուին նուիրել է Տաթևի վանքին¹⁾:

Տեղից սկսած մինչև Զաբուխ կայարանը շարուած են փոքրիկ կուրգաններ, որոնցից մի քանիսը այս տարի (1898) ամառը պեղեց Թէօլէք գերմանացին: Գտնուեցան բրոնզէ մի դանակ, հուլունքներ և կաւէ ամաններ:

ԲԱՐԿՈՒՃԱՏԻ ՀԱՐ.

Բարկուշատի կամ Ճնհէրի ձորն կոչւում է Բարկուշատ գետի ձախ ափը սկսած սատանի կամուլջից՝ մինչև Գառուտու գիւղը, որտեղ խառնում են Բարկուշատի և Գորիսի գետերը: Այս ձորը Ճնհէր և Խոտ գիւղերի մոտ բաւական ընդարձակուելով՝ կազմում է մի գեղեցիկ հովիտ: Չորի աջ ափն ընդհանրապէս շատ դառիվայր է և դժուար մատչելի. տեղ-տեղ ծածկուած է ծառերով և թփերով, տեղ-տեղ էլ ահազին ապառաժներով: Զախ ափը, ընդհակառակը, բաւական թեք է, և տեղ-տեղ ունի առաջ ցցուած փոքրիկ սարահարթեր: Այս կողմումն են չալիձոր, Ճնհէր և Խոտ գիւղերը: Բարկուշատ գետի ափերը ծածկուած են խաղողի ալղիներով: Չորի մէջ նկատում են պղնձի հանքեր: Կլիման շատ տաք է և խեղդիչ:

ՀԱԼԻՇՈՐ.—Գտնուում է Բարկուշատի ձախ ափին, ձորի լանջին: Արևմտահիւսիսային կողմում բարձրանում է Գեալին-դայան, որի առաջ ձգւում է Ճահանդուխտի ձորը, իսկ հարաւային կողմում, գետի դարձեալ աջ ափին, երեսում է Ճարանց անապատը, որ երկրաշարժի ժամանակ բարձրից իջել է ներքեւ: Տները քարաշէն են, միմեանց վրայ կիտուած, որոնց մինի կտուրը ծառայում է միւսին որպէս բակ և ճանապարհ: Կան մի երկու փողոց, որ շատ անկանոն և քարքարոտ են: Գիւղի կենտրոնում գտնուում է եկեղեցին, որ պարսպապատ է, գեղեցիկ և գմբէթաւոր:

Չորը լի է խաղողի ալղիներով, որի գինին շատ գովուած է:

¹⁾ Ախական Եր. 263.

Բնակիչները բնիկ հայ լուսաւորչականներ են, 66 տուն, 283 ար. 252 իդ. ընդամէնը՝ 535 հոգի: Պարապում են այգեգործութեամբ, երկրադործութեամբ և անասնապահութեամբ:

Դիւղը պատկանում է Տաթևի վանքին, որին նուիրել է Փ. դարում Բաբէն իշխանի Համասպրուհի դուստրը¹⁾:

Փողովրդի մտաւոր դրութիւնը շատ աննախանձելի է. դըպրոց երբէք չեն ունեցել և հազիւ թէ 15 հոգի զրագէտ լինին. քացի սրանից էլ անհիւրասէր են:

11

Հալիձորից փոքր ինչ հիւսիս, դէպի Ճնհէր, գետի ձախ ափին, մի բլրի վրայ կայ մի փոքրիկ եկեղեցու աւերակ և սրա մօտ երկու խաչարձան տապանաքար, որոնցից մինի վրայ գրուած է.

Անուն Այ ես Տարսայինս որդի Լիպառտի գչալիառոյ Թ. Կոպարս վնսարովն ոյ Տարտանդովն սրանիս Տարզործին հերենիք սվի որդիի բոռն եւթ... Տարզործն եկեղեցի շինեցան վարձն որ այվանս ես զայն նրայ դատման փոխարէն Տար արի որ նրայ հայրենիք յազգէ յազգ. սվ այս զիրա խափանելոյ ջանայ յիմոց կամ աւտարաց, յժը հայրապետացն նզովեալ եղիցի:...

Միւս կողմում.—Ես ՏՐ հայր Վկայեմ. ես ՏՐ Տարզիս Ակայ Եմ:

Միւսի տապանագիշն անընթեռնելի է:

Այս բլրակից ներքեւ, գետի անմիջապէս ափին կան նոյնալէս տապանաքարեր, որոնցից մինի վրայ գրուած է.

'Ի բիս ԶՓԻ ես Գրիգորիկ բազում աշխատութեամբ եսի զառ ց սն Տեղեցի գրուխբելուաց կեսս իգիս վայելուց այ իշխանութեան ածաւէր պարոնացն Սմբատայ եւ հարազատին իւրոյ Տարսայինին. ես Տարսային զիր Տվի հայրենեացս... Թէ ոք ի Հայոց... ի Տամկաց խլեսէ, ԼԾԸ հայրապետաց նզովեալ եղիցի:

ՃՆՀԻԲ.—Ճալիձորից հազիւ երկու վերատ հեռաւորութեամբ, դէպի հիւսիս, Բարկուշատի ձախ ափին տարածւում է

¹⁾ Տես Ախական.

Ճնհէր զիւղը, բռնելով ձորի վերին լանջը: Այս զիւղը սոյն ձորի գիւղերից ամենից մեծը լինելով դուցէ հէնց այս պատճառով էլ կրչուել է զինահայր, կամ զինուհայր, որ ոմանք էլ բառերի տեղափոխութեամբ չալրաշէն են զրել: Զորի վերին մասը, զիւղի արևմտեան կողմը, պատած է ահագին ժայռերով, որոնցից մինը մի փոքրիկ քարախորշ է կազմում, որ պաշտում է և վառուած մոմերից բոլորին սեացել է: Փայռի գաղաթին էլ մի փոքրիկ, անմատչիլ մատում կայ: Սրանց փոքր ինչ արևելք ժայռերը վերջանում են, և մի փոքրիկ ձորակի մէջ բացւում են բաւական թուով մեծ և փոքր քարատակներ, որոնց մօտից հոսում է մի բարակ աղբիւր, որ նոյնպէս սուրբ է համարւում: Այս աղբիւրի մօտ բղխում է և մի ուրիշ աղբիւր, շատ վարար, որ անցնելով ձորը՝ թափւում է բարկուշատի մէջ: Գիւղի արևելեան կողմում ևս կան քարալր-բնակարաններ, որոնց տեղացիք չալիփորի ծակեր են կոչում: Սրանցից մի քանիսի մէջ կան թոնիրներ:

Գիւղի գրեթէ կենտրոնում գտնւում է ս. Ստեփանոս եկեղեցին, որ բաւական մեծ և զեղեցիկ է, չորս սիւների վրայ հաստատուած, կամարակապ ձեղունով: Հարաւալին դռան առաջ չորս սիւների վրայ բարձրանում է մի զեղեցիկ զմբէթ, որ ծառայում է որպէս զանգակատուն: Եկեղեցու պատուհանները փոքր են և նեղ. ներքուստ զարդարուած է խաչկալով և հինգ ջահերով: Եկեղեցու շուրջը կան հին և նոր զերեղմաններ: Մի ուրիշ զերեղմանատուն էլ կայ զիւղի արևելեան կողմում, ուր կան խաչքարեր ՓՓ. դարից:

Գիւղի արևմտահարաւալին կողմում, ձորի մէջ ցցուած մի քերծի գաղաթին տեղաւորուած է ս. Աստուածածնի անունով կուսանաց անապատը, որ շինել են 1676 թուին, Ագուլսից գաղթած կուսերը և վերանորոգել է մահս եսի Աղարիան և նրա որդի՝ Բենիամինը:

Կուսանոցը պարսպապատ է և երեք աշտարակներով պաշտպանուած: Վերի մասում գտնւում է մենաստանը, որ 17,4 մետր (8 սաժէն և $1/2$ արշ.) երկարութիւն, 10,65 մ. (5 ս.) լայնութիւն և 9,6 մ. ($4^{1/2}$ ս.) բարձրութիւն ունի և շի-

նուած է կոփածոյ անտաշ քարերով: Զեղունը կամարակապ է և ունի մի փոքրիկ գմբէթ: Պատուհանները փոքր են և նեղ. միակ դուռը բացւում է հարաւալին կողմում մի գաւթի մէջ, ուր կան մի քանի զերեղմաններ: Եկեղեցու արևելեան կողմում, դրսից, մի խաչ կայ, որի մասին ասում են, թէ բժշկութիւն է տալիս օձից խալթուածներին, եթէ միայն նրանք խալթող օձից առաջ կարողանում են գալ և խաչը համբուրել: Տաճարի վլայ կան հետեւեալ արձանագրութիւնները.

Արևմտեան կողմը, մի խաչի վրայ.

,,Ես չոգեմեղս կանգնեցի զխաչս հօրն իմոյ Ատէայ. թվին չայց Ձ:

Սեղանի որմի վրայ.

,,Ճնորհօֆ սուրբ չոգւոյն շինեցաւ տոնս ապաւէն. թվին չայց ոճիե: 'Ի հայրապետութեան Սրբազն տեառն Յակոբայ:

Սեղանի մօտի առաջին սեան վրայ.

,,Ճնորհօֆ սուրբ չոգւոյն շինեցաւ տոնս ապաւէն. թվին չայց ոճիե. 'Ի հայրապետութեան Մրազան տեառն Յակոբայ. Եւ 'Ի բագաւորութեան Պարսից ջահ Սուլէյմանին, յԱրեսպիսկոպոսութեան Երկրիս տէր Յօհաննիսի:

Միւս կողմում, կամարի վրայ.

,,Ազդմամբ սուրբ չոգւոյն ես ամենամեղս մահեսի Ազրիս, որ եւ տեղեաւ Ագուլեաց դաւսէն, եկի 'Ի ժողովարանն կանանց, եւ ետու շինել զեկեղեցիս ուղապատօֆ եւ սուրբ Տափր լ. օր Տափր էր, որ էր յամի ծննդեան ինեկի թվին ոճի: Եւ աղաչեմ զամենեսեան, որ աս կայ

յաղօրս՝ ի մէջ տահարիս յիշել զմեզ եւ ծնօղս մեր, զհայրն իմ մահտեսի Եարդուլին եւ զմայրն իմ չոփիսիմէն, եւ զկենակիցն իմ զ՛սկին, եւ զորդիքն իմ զՊետրոսն եւ զՔենիամին:

Սրա ներքեւ.

,,Ես անարժան մահտեսի Բենիամին, որ եմ յերկրէն Դողբնեաց դաշտէն, եւ իմ որդի մահտեսի Ազարին, որ ես շինել Տաճարու եւս նորոգել սալն յիշատակ հոգւոյս կենակից Մարգարտին, հանգուցեալ Եղբայր մահտեսի Պետրոսին իւր որդուոյն Նիկողայոսին, Հայրապետին, որդիքն իմ Յօհաննէսին, Մկրտչին, Կարապետին. թվին Հայոց ռմկը ին, յիշենէք ուուայ Մուրաս յերկրէն Քրդսանս:

Գուան ճակատին

,,Ի թվին տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որիզ ին, իսկ Հայոց ռմիել լն, եղեւ շինութիւն Եկեղեցւոյս և արդեամբ աղախնեաց, որք ժողովեալ կայաք աստ յԱնապատս քուով անձինս ուրսուն, զկնի ամաց շինութեան տան շարժեալ զնացաք ոմանիս յԵզուլեաց Երկիրն եւ Եկեալ աստէն եւ բազում աշխատութեամբ եւ նալոյլ վաստակոց իւրոց շինեաց զեկեղեցիս, ապրելի դ ին, սկիզբն արարեալ սւայսեմբերի ը ին կատարեաց. վասն որոյ աղաչեմ զկնի մեր Եկեալ Քերցոյ եւ կուսանացդ զերախտիք Եղբօր մերոյ...:

Տաճարից փոքր ինչ ներքեւ գտնուում է մի բաւուկան մեծ, թաղակապ սեղանատուն, որի դուան կամարակալ քարի վրայ զրուած է. Ճինեցաւ թւ Թ՛ՎԹ յիշատակ է սեղանատունս որ ի Երկրէն Դողբնիեաց ի զեղչին Յղնայ ի Պլանի որդի Ոնանէսին եւ իւր որդի Ծատուրին:

Սեղանատնից էլ փոքր ինչ ներքեւ գտնուում է մի փոքր Ճիկ Եկեղեցու աւերակ:

Պարսպին կից կան մօտ 40 խուց և մի բաղանիք: Նոյն պարսպի մէջ, Եկեղեցու մօտ 1891 թուին Պալիեանց քահանայի ջանքով շինուած է չորս սենեակներից բաղկացած մի զեղեցիկ շէնք, հայոց Եկեղեցական-ծխական դրպրոցի համար: Մի աղբիւր ևս բերուած է այդ տեղ:

Այժմ անապատը բլորովին անխնամ է թողնուած, իսկ դպրոցական շէնքում շուտով բացուելու է պետական դպրոց:

Գիւղը, շնորհիւ տանուտէր Արքինեանի, ունի բաւական շաւ ճանապարհներ, որոնք գիւղի բարձրագոյն կէտից սկսուելով իջնում են մինչև Բագրաչայի ափը, որտեղ ձգուած են գիւղացիների խաղողի այլիները:

Բնակիչները բնիկներ են, հաւ լուսաւորչական. ընդամէնը 186 տուն, 804 արական և 705 բդական. ի միասին 1509 հոգի: Պարապում են զլիսաւորապէս երկրագործութեամբ և այգեպանութեամբ:

Մտաւորապէս այս գիւղացիները բաւական բարձր են նոյն ձորի գիւղացիներից, որովհետեւ բաւական ժամանակ ունեցել են դպրոց և տասնեակ երեխաներ սովորում են Ճուշու Հայոց թեմական և պետական դպրոցներում:

ԽՈՏ.—Ճնհէրից հաղիւ մի վերստ հեռու, դէպի արևելահիւսիս, նոյն ձորի ձախ լանջին տեղաւորուած է Խոտ գիւղը: Այստեղ հովիտը աւելի զեղեցիկ տեսք է ստանում, որովհետեւ այս լանջը, զլիսին ունենալով ահազին ժայռեր՝ ներքելի մասում լեզուածեւ տարածւում է և մի փոքրիկ հարթութիւն կազմում: Թթենիներն ու խնձորենիները, որ ծածկում են այս հարթութիւնը և թանձր ստուեր արձակում ցրուած տների վրայ՝ մի զեղեցիկ տեսք են ընծալում գիւղին: Ո՛չ պակաս զեղեցիկ է նաև այն խոր ձորը, որ ձգուում է Ճնհէրի և Խոտի մէջ, հիւսիսից, հարաւ: Այստեղ կոնաձեւ ժայռերն գիգուած են մէկը միւսից բարձր, որոնց միջով հոսում է մի փոքրիկ, լըստակ աղբիւր: Սա կոչւում է «Օխնած-ջուր», որովհետեւ, ասում են, թէ հին ժամանակներում Փրիստոսի մկրտութեան խոր-

հուրդը կատարելիս, այսուեղ էին խաչը ջուրը՝ ձգում: Ժայռերի մէջ կան բաւական թուով արհեստական և մի քանի բնական քարայրներ: Այսպիսի քարայրներ կան նաև ձորի գլխին ցցուած ժայռերի մէջ, որոնցից մինի մօտ շինուած է ս. Գէորգ անունով մի փոքրիկ մատուռ:

Տները, գլուղի վերի մասում, կրուտակուած են միմեանց վերայ, իսկ հարթ մասում՝ ցրուած են ալզիների մէջ: Միակ եկեղեցին թաղակապ է, անսիւն, առանց գմբէթի և աւանդատների. և թէպէտ շատ հին է՝ բայց ոչ մի արձանագրութիւն չունի:

Գիւղի արևմտեան կողմում, պաշտուող դարաւոր ծառերի տակ, կայ մի եկեղեցու աւերակ և դերեզմանաքարեր ՓԲ. դարից:

Գիւղի ճանապարհը սաստիկ քարքարոտ և շատ վատ է: Բնակիչները լուսաւորչական չայեր են, ընդամէնը 134 տուն, 482 ար. 427 իգ. ի միասին՝ 909 հոգի: Պարապում են երկրագործութեամբ. և ալզեպանութեամբ: Հողը պատկանում է Տաթևի վանքին, որին նույիրել է Պլեն իշխանը ՓԱ. դարի առաջին կիսում (1045 թ.): Եւ վերջերը՝ Տարսային իշխանն էլ նորից վերադարել է նոյն վանքին իւր ձեռատունկ ալզու հետ միասին¹⁾:


Ն Ճ Ա Ն Ա Ի Ո Ր Վ Ա Ն Ք Ե Բ.

ԹԻԹԵԹԻՆԱՎԱՆԻ.

Գտնուում է Գորիսից դէպի հիւսիս, մօտ քսան քիլոմետր (20 վերտ) հեռաւորութեամբ, Աղ-օղլան գետի աջ ափին, մի փոքրիկ բլրի տափարակ գաղաթին: Ջուրջը կան մեծ և փոքր բլրակներ, որոնք, միմեանց ընդհարուելով՝ մի գեղեցիկ տեսարան են ներկայացնում: Վանքը պարսպապատ է և ունի մի դարպաս, իսկ զաւթում խցերի աւերակներ:

¹⁾ Ախական. Եր. 260.

Եկեղեցին սրբատաշ քարով շինուած, հռովմէական ճարտարապետութեան շէնք է: Երկարութիւնն է 21,3 մետր. (10 ս.) լայնութիւնը՝ 7,81 մետր. (3 ս. 2 արշ.) և բարձրութիւնը՝ 18,46 մետր. (6 ս. 2 արշ.) երկու կարգ վեցական սլիներով եկեղեցին բաժանվում է երեք համար (nef), միջինը աւելի լայն քան կողքերինը: Հիւսիսային պատի վրայ էլ կան



Թիթեթինավանք:

նոյնչափ կեղծ-սիւներ, որոնց վրայ, պատին կից, բոլորում են կեղծ-կամարներ: Այս սիւները քառամկիւնի են, ծաղկաւոր խարիսխներով, որոնց վրայ բոլորում են ուռմանական կամարներ, իսկ սրանց վրայ զետեղուած են կամարակապ ձեղունները: Միջին մասի ձեղունը աւելի բարձր է և կողքերից երկ-երկու պատուհան ունի, որոնց միջով ներքեից նայողին երկում են կողքի ձեղունների վրայ շինուած սենեակները: Մի սենեակ էլ սեղանի վերև կայ: Այստեղ մի փոքրիկ, կողը ծակ ևս կայ, որի վրայ բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկէ:

Եկեղեցին ունի երկու աւանդատուն, որոնցից հիստայինի առաջ կայ մի գերեզման, ուր աւանդութեան ասելով, ամփոփուած է Պետրոս առաքեալի ձկոյթ մատը (ծիծեռնը): Եօթն երկար և փոքր ինչ նեղ պատուհաններ առատութեամբ լոյս են սփռում: Երեք դռնից երկուսը այժմ ծածկուած են, բայ դռան կամարակապ քարի վրայ կայ հետեւալ արձանագրութիւնը:

«Նորոգեցաւ զաւիթս եւ զանգակատունս ի ժամանակին իրայիմ խանին... թվ. ՌՄԻԲ: Սակայն այս լիշուած գաւթի ու զանգակատան միայն աւերակներն են մնում նայն դռան կողքին:

Եկեղեցու արևմտեան կողմում կայ մի մեծ քար, որ կոչում է Ազուաւխաչ¹⁾:

Հաստատապէս յայտնի չէ, թէ այս եկեղեցին երբ և ում ձեռքով է շինուած, միայն Ստ. Օրբելեանը կարգում է նրան Սիւնեաց անուանի վանքերի շարքում և լիշում նրա վանահայր Ստեփանոսին Թ. դարի կիսին (844): Օրբէլեանից յետոյ այս վանքի մասին աննշան լիշատակութիւններ են լինում, որոնք ցոյց են տալիս, որ սա կանգուն է եղել ՓԵ, ԺՀ և ՓԵ դարերում²⁾: Այժմ մեծ ուխտատեղի է համարւում և չամքարձան ու Ս. Խաչի օրը Զանգեզուրի բոլոր կողմերից հազարաւոր ուխտաւորներ են զալիս այստեղ, ու 1200—1400 ոչխար մորթւում: Վանքի մօտ գիւղ չկայ, ուստի և առանձին

¹⁾ Այս խաչի մասին աւանդութիւնը պատմում է հետեւալր.—Ծիծեռնավանքը շինելիս ահագին կաթսան տանում են գետը, ջրով լցնում և բերում կերակուր եփում բանուորների համտր: Այս ժամանակ ջրի հետ մի օձ էլ է բնկնում կաթսան և մնում աննկատելի: Երբ կերակուրը եփում է և հասնում է ճաշի ժամը՝ մի ափուալ պատում է կաթսայի վերև և շարունակ կռկուում: Բանուորները ուշադրութիւն չեն դարձնում և նստում են ճաշելու, երբ ափուալ ահագին կուկուող որնկնում է կաթսայի մէջ: Բանուորները կերակուրը պղծուած համարելով՝ թափում են, և որքան մեծ է լինում նրանց գէպի ափուալ զգացած հիացումը՝ երբ կերակրի մէջ տեսնում են օձի մարմնի մասերը Խսկոյն հասկանում են, որ ափուալը փրկել է իրանց բոլորի կեանքը, ուստի և պատահքում են նրան և մեծ հանգիստ թաղում վանքի արևմտեան պատի մօտ, մի մեծ քարի տակ, իսկ օձի պատկերը նկարում վանքի սիներից մինի վրայ:

Ծիծեռն այժմ էլ այդ ափուալը պաշտուում է, և երբ երեխաները շուտ չեն սկսում քայլել, չեն „ունըրուում“, տանում են այդ քարի մօտ, քարի առաջ մոմ վառում, մի մեխ կամ մի ձու գնում քարի տակ և երեխայի ոտներին չուր աճում, հաւատալով, որ այսպիսով նա շուտով կսկսի քայլել:

²⁾ Սիսական եր. 268.

ոչ մի պահպանութիւն չունի վանքը. բայց որովհետեւ թուրքերն էլ այդ վանքը զօրաւոր ուխտատեղի են համարում, կոչելով Աշուալլահ, և շատ անգամ ուխտ գալիս, այս պատճառով էլ վանքը անվնաս և մաքուր է պահուում:

Մինչև 1894 թուականը վանապահ քահանաները իւրացնում էին ուխտաւորներից ստացուած նուէրները, բայց այս թուից սկսած՝ շնորհիւ գործակալ չայր Խոարով վարդապետի, որ ս. Խաչի տօնին գնում է անձամբ հսկելու արդիւնքի վրայ, հաւաքւում է և պահուում վանքի նորոգութեան վրայ ծախսելու նպատակով: Մինչև այժմ հաւաքուած է 250 ը.: Այժմ վանապահ կարգուած է Խընածախ գիւղի քահանայ արժ. Տէր Արսէն Աստուածատրեանը, որ միայն ուխտի օրերն է այնաեղ լինում:

ՊԱՆՏԱԼԵՅՆ ԲՖՃԿԻ ՄԱՏՈՒԹՅ.

Ղարազշախ հայաբնակ գիւղի արևելեան կողմում բարձրացող բլրակի վրայ գտնուում է Պանտալէօն բժշկի մատուռը, որ նոյնպէս մեծ ուխտատեղի է: Սա մի հասարակ, բաւական մեծ մատուռ է, որի մէջ գտնուում է Պանսալէօն բժշկի գերեզմանը: Արա տապանաքարը սկզբում մի հասարակ կոճղ է եղել, բայց յետոյ շուշեցի Թ. Թամիրեանի ծախսքով քար է ձգուած: Այս մատրան մօտ գտնուում է մի ուրիշ, շաա փոքրիկ մատուռ ևս, որի մէջ նոյնպէս մի գերեզման կայ: Ոչ մի արձանագրութիւն չկայ, միայն ժողովուրդն ասում է, թէ այդ գերեզմանը «Ճահզադին» է:

Փողովուրդը Պանտալէօն բժշկին պարոն Պիժ է կոչում և մեծ հաւատով վերաբերուում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԵՐԱԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Ջանգեզուր գաւառամասի այն գիւղերում, ուր այժմ թուրքեր են վերաբնակուած՝ կան բաւական թուով չայոց հին, աւերակ եկեղեցիներ: Արանք ընդհանրապէս ճարտարապետական

տեսակէտից մի առանձին նշանակութիւն չունին: Սրանցից շատերը դեռ ևս կանգուն են, միւսները կիսով կամ բոլորովին քանդուած: Մահմետականները եթէ հիմնովին չեն աւերել այս եկեղեցիները և քարերը տարել գործ ածել՝ նրանց շահագործել են՝ դարձնելով առաւելապէս խոտանոց, գոմ, կամ ոչխարի փարախ: Այսպէս՝ Քիջիմլի գիւղի սրբատաշ, հրաշալի եկեղեցին քանդուած է և նրա քարերով մզկիթ շինուած: Հերիկի, Մերիկի, Բայենդուրի, Հոչասի, Փչանիսի, Չրախլուի եկեղեցիները խոտանոցներ են դարձուած, Կատոսի, Սունասարի, Ղորղաճի եկեղեցիները իբր փարախ կամ գոմ են ծառայում: Նոյն դրութեան մէջ է նաև Ալիդուլի-ուշաղի թրքաբնակ գիւղի ժայռի մէջ փսրուած փոքրիկ եկեղեցին, որից փոքր ինչ բարձր կան քարայրներ և հնձաններ ու դիպիճաղ (կարաս) ¹⁾:

Բ Ն Ա Կ Ի Չ Ն Ե Ր

Զանգեզուրի շրջանում բնակում են Հայեր, թաթարներ և նստակեաց քրդել:



Քարահունչեցի կին:

ՀԱՅԵՐԻ մեծագոյն մասը բնիկներ են համարում, իսկ փոքրագոյնը՝ Պարսկաստանից 1828 թուին եկած գաղթականներ են: Բայց բնիկ համարուածներն էլ, ինչպէս երևում է,

¹⁾ Ջանց ենք առնում նկարագրելու քրդաբնակ և թաթարաբնակ գիւղերը, որովհետև գրանց մէջ ոչ պատմական և ոչ էլ ճարտարապետական տեսակէտից նշանաւոր մի որնէ բան կայ: Դրանք հայկական գիւղերից տարբեքում են միայն նրանով, որ աւելի կեղտու են և տներն էլ աւելի հասարակ:

Հին ժամանակներում տարբեր տեղերից եկած վերաբնակուած են այստեղ, որովհետև բարեառներով տարբերում են: Այսպէս, օրինակ, առանձին բարբառներով են խոսում.

ա. Գորիս և Փարահունչ.

բ. Խնձորեսկ և Մինքենտ.



Գորիսեցի. — Ազնուչար բէկ Մելիք-Հիւսէինեան:

գ. Տեղ, Կոռնձոր և Արաւուղ.

դ. Ղարաղշաղ, Հարար և Մաղաւուղի Ղարաղշաղ.

ե. Խոզնաւար, Զէլվա և Խնածախ.

գ. Ջնհէր և Խոս.

է. Հալիճոր:

Խոկ Կորի, Ալիդուլի, Մաղանջուղ և Քարաշէն գիւղերի հայ բնակիչները Պարսկաստանից գաղթականներ են:

Թէ՛ մարդաբաննական և թէ ազգադրական տեսակէտից սրանց մէջ կան տարբերութիւններ, սակայն շատ աննշան:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ սրանք միջահասակ են, (1632 միլլմետր),¹⁾ աւելի բարձր քան Նախիջևանի (1616 մ.) Ճարուր-Փարալագեազի (1626) և Օրդուբաղի (1629) գաւառների Հայերը, բայց աւելի ցածր քան Ճամախու (1634) Ճիբրայիլի (1640 մ.) Ճիվանշիրի (1650), Գանձակի (1657) Թիֆլիսի (1652) և Բագութ (1690) հայերը:

Կուրծքերը Կովկասի բոլոր Հայերի կուրծքերից լայն են — 851 միլլմետր. Յն միլլմետրով աւելի բարձրութեան կիսից, և սաստիկ մազոտ:

Վզերը՝ կարճ են:

Ոտները և ձեռքերը՝ հասակի համեմատութեամբ՝ երկար են և հաստ:

Ոսկրային սիստեմը լաւ է զարգացած, այն-ինչ մկանայինը՝ միջակ:

Սրանք թէւ բրաշխեփալ (կարճակառափն) են, սակայն գլխի լեռների, ծոճրակային մասը հարթ է և շեղում է բոլորակ ձևից: Ճակատը լայն է, յօնքերը մեծ մասամբ սւե ու հաստ. արտևանունքը սւե, աչքերը նշաճեւ, երկարաւուն և սւե: Քիթը մեծ է և նրա մէջքը հարթ. կողքերը տափակ և կախ ընկած չեն: Այսոսկրները փոքր ինչ դուրս են ընկած, որ հետևանք է մկանային սիստեմի լաւ զարգացած չլինելուն: Բերանը մեծ է, շրթունքները հաստ և կարմիր, ատամները սաստիկ սպիտակ. ծնօտը բաւական զարգացած և սուր: Ականջները մեծ են և դէպի առաջ ցցուած, փափախի ազդեցութեամբ: Մաղերը սւե են և կոշտ:

Բնաւորութեամբ Զանգեզուրցին կոպիտ է, կասկածոտ,

¹⁾ Пантюховъ. Къ статистикѣ Кавказской паталогіи. т.р. 3.

Ֆածկամիտ և խորամանկ: Մի քանի գիւղեր էլ, ինչպէս Տեղ,
(որքան լսել ենք) կռուարար են և բանսարկու:

Կրթութիւնը միանդամայն բացակայում է, նոր սերուն-
դից շատ քչերն են դպրոց յաճախում, որովհետև այս ամբողջ
ոստիկանական շրջանում չորս տարրական պետական դպրոց
կայ, իսկ հին սերունդից հազիւ 2,4%¹⁾ գրագէտ լինի:

Բարոյականութիւնը բաւական ընկած է և շարունակում
է զգալի կերպով ընկնիլ: Գորիս գիւղը զոհ է գնում Նորդիո-
րիսին, միւս գիւղերը ապականուում են բագուից վերադարձած
ախտաւորուած և բարոյապէս ապականուած երիտասարդների
միջոցով: Խնձօրեսկ գիւղը փոքրիկ Փարեզ է դարձած, ուր
նոյն-իսկ անձանօթ այցելուին նախկին նահապետական ամօթ-
խած կինը կուրծքը բաց է դիմաւորում՝ հրապուրելու:

Այս, մեծ և կործանիչ է բագուի ազդեցութիւնը այս դա-
ռառի վերայ: Ամեն տարի հազարաւոր, մարմնով և հոգով ա-
ռառջ երիտասարդներ, տնտեսական պատճառներից ստիպուած,
գուցէ մասամբ էլ բագուի հարստութեան և վայելքների հրա-
պոյցից գրաւուած, դիմում են բագու: Այստեղ առաջին իսկ
վայրկեանում չստանալով այն երազած վարձատրութիւնը՝
նրանք մի առ ժամանակ, քանի դեռ փող ունին, մնում են
անզործ և ժամանակը անց են կացնում վայելքների մէջ.—
իսկ երբ գիւղից բերած գրամները հատնում են՝ այն ժամանակ
նրանք ճարահատեալից բաւականանում են ամսական 10—15
դուրի ուժիկով, որով ամենահամեստ կեանքն անդամ չեն կա-
րողանում վարել: Այսուհետև խոնաւ և մութ բնակարանը մի
կողմից, կանոնաւոր, թարմ սնունդի պակասութիւնը միւս
կողմից, շարունակ և միատեսակ աշխատանքը երրորդ կողմից
օրէց օր խում են նրա երկալի առողջութիւնը և կամաց
կամաց կմախք գարձնում: Կարճ միջոցից արդէն նրանք սկսում
են տանջուկի վեներական, ուկրացաւի, ստամոքսի հիւանդու-
թիւններով: Պատահական փորձանքներն էլ միւս կողմից գա-

¹⁾ Թաթարները 0,1, քրդերը՝ նոյնպէս 0,1. Հմմտ. Սբորնու շտատ. դահնական ու Ելու. դյ. ու 1886 թ.՝ Այստեղից է վեցրած նաև բնակիչների թուերը:

լիս են խլելու մինից ձեռքը, միւսից ոտը, երրորդից ամբողջ
կեանքը՝ ձգելով մազութի ամբարը, կամ գլորելով «վիշկայի»
բարձրութիւնից: Մի քանի տարիներից յետոյ, արդէն ֆիզի-
քապէս և հոգեպէս մաշուած, վեներական ախտերով ապակա-
նուած, վերադարձած են նրանք տուն, տանելով մի քանի
շուալութեան նիւթեր՝ օրինակ թաւշեալ մուշտակ, ապարան-
ջան, թանգագին կտորեղէններ, իբր ընծայ իրանց գերդաս-
տանին կամ ամուսնուն: Այստեղ այժմ նրանք իրանց շատ
բարձր են զգում մնացածներից. սրանք չգիտեն ուսւերէն,
սրանք գաղափար չունին բորդոյի և պատուական գինիների,
խաւիարի և այն մասին, որանք կոպիտ են իրենց շարժուածք-
ների մէջ, կանաչը հրապուրող և կանչող չեն: Ուստի բա-
գուից վերադարձած, լուսաւորուածներն սկսում են բարձրից
նայել նրանց վրայ, որքան կարելի է լաւ հագնուել, խօսելիս
որքան կարելի է շատ ուսւերէն բառեր (համարեալ բոլորն էլ
աղաւաղուած) գործածել, լաւ խմելիքներից և կերակրներից
խօսել և ընկնել հարսների յետելից: Պէտք է ասել, որ հարս-
ներն էլ շլանում են դրանցից, և նրանց համարձակ, արդէն
վարժուած քալու շատ շուտ թակարդի մէջ է ձգում նրանց ու
մի մի սոսկալի ախտ պարզեցում: Իսկ սրանց դժբախտ կանաչը,
ու նրանց բացակայութեան միջոցին առաքելնութեամբ համ-
ըներել էին նկատելով նրանց այդ վարժունքը՝ լրւում են նրա
դէմ վրէժինդրութեան ոգուով և երբ նրանք կրկին բագու են
դիմում, և երկար ժամանակ չեն վերադարձած, իրանք էլ
հետեւում են իրանց ամուսների ընթացքին... Կրկին է վերա-
գառնում ամուսինը, կնոջ մասին շշունջներն ու ակնարկները
հասնում են ականջին. նա իրեն վերաւորուած է զգում հասա-
րակութեան առաջ, նա ստոր դաւաճանութիւն է համարում
կնոջ վարժունքը, բոլորովին մոռանալով իւր արածները: Ակը-
ւում են կուիներ, ծեծ... և կնաթողութիւն...:

«Պարկեշտաներ»-ի ամուսինները խրատուում են արդպիսի
դէպքերից, օր առաջ վեցնուում են իրենց կանանցը և տանում
բագու, այնտեղ, բալախանում, մի յետ ընկած, փոքր և խոնաւ
աենեակում տեղաւորուում: Բայց տես որ խեղճ կինը չի կարո-

զանում այստեղ ազատ մանգալ՝ նրա տարազը ամենքի ուշադրութիւնն է հրաւիրում, շատերը ծաղրում են: Եւ ահա մի քանի ամսից նա թողնում է իւր տեղական հանդերձը և վրացնակ հագնուում: Կտրուած ազգականներից և բարեկամներից, զրկուած գիւղական անդորր կեանքի վայելքներից, զրկուած այն ընդարձակ, լայն հորիզոնից, պայծառ երկնքից ու մաքուր օդից՝ խեղճ կինը ստիպուած է ամբողջ ժամանակը միայնակ տանը անցլացնել, սպասելով որ ուշ երեկոյին զայ իւր ամուսինը: Չկան այստեղ բարեկամներ, ծնողներ, և եթէ կան համագիւղացիներ՝ նրանք էլ ցրուած են, հեռու են կենում և դժուար է ամեն անգամ գնալ նրանց մօտ, իսկ տեղացիների հետ ոչ մի յարաբերութիւն չունի. նրանք օտար են իւր համար: Եւ ահա խեղճ կինը ստիպուած է ամբողջ օրը անցկացնել տան մէջ, զուրկ նոյն-իսկ մի փոքրիկ բակից, որ լիշեցնէր նրան իւր հայրենի դաշտերն ու այդիները: Երբեմն էլ դատապարտուած է մնալ խանութիւ տախտակալ կտրուած յետի մասում, ուր արեգակի լոյսը երբէք չի թափանցում: Ստիպուած է դիտել միշտ ծխապատ և ամպամած երկինքը, կարօտել արեգակին, և ներշնչել ապականուած, վատառողջ օդը...:

Ահա այսպէս թառամում է օտար երկրում զանգեզուրցի կինը, կտրուած իւր ծննդավայրից, ուր երբեմն վերադառնում է նորից՝ երբ ամուսինը ֆիզիքապէս քայլքայուած և հարմացած՝ այլ ևս անկարող է լինում բանուորական կեանքին դիմանալ:

Այսպէս՝ օրէցօր դադարկում է ջանգեզուրի գաւառը՝ բաղմաթիւ գաղթականներ տալով բալախանուն և Սւ քաղաքին: Եւ այդտեղի փչացած, հաշմացած, ֆիզիքապէս և հոգեպէս մաշուած խմբերը վերադառնում են հայրենիք, իրենց ախտերը տարածելու և նոր, ժառանգական հիւանդութիւններով օժտուած սերունդ յառաջացնելու:

ՔՐԹԵՌԸ գլխաւորապէս բնակւում են չաքարի գետի ջրաբաշխում: Սրանց մասին տիրող ամենահաւասական կարծիքն այն է, թէ 1589 թուի պարսկա-տաճկական պատերազմի միջոցին սրանք տաճկաց զօրքի մէջն են եղել և որպէս տիրա-

պետող՝ մնացել են այստեղ: Յետոյ, երբ այս կողմերը կըկին Պարսկաց ձեռքն են անցել՝ պալսկական քաղաքակրթութիւնը ահազին ազգեցութիւն է ունեցել սրանց վրայ: Սրանք բոլորն էլ ձիա են: Խօսում են աղաւաղուած թուրքերէն լեղուով. շատերը մոռացել են իրենց մայրենի, քրդերէն լեզուն, և միայն քչերը գիտեն: Իրենց կեանքի եղանակով, պարապմունքով, ընտանեկան և հասարակական նիստ ու կացով այստեղի քրդերը թաթարներից չեն տարբերուած. չկայ տարբերութիւն նոյն իսկ նրանց դէմքի և հագուստի մէջ:

Քուրդն էլ հագնուում է թաթարների սովորական տարագով և հինայ է դնում մազերն ու եղունգները: ՔրդուՀին էլ չէ զանազանուում թաթարուհուց. նա ևս հագնուում է Ատրպատականի թաթարուհու հանդերձ, և նոյնպէս կենդանի և խորամնկ է՝ ինչպէս և ամէն մի թրքուհի:

Քրդերը վայրենական բարքեր ունին, քաջ և ճարպիկ են: Սրանց մէջ սաստիկ տարածուած է արեան վրէժխնդրութիւնը, գողութիւնը և աւազակութիւնը: Սրանք կիսանստակեաց կեանք են վարում. ամառները քոչում են դէպի եալաները, ձմեռները վերադառնում իրենց գիւղերը: Քոչելու սովորութիւնը այնքան մեծ արմատ է ձգել, որ քոչում են մինչեւ անգամ ոչ մի գլուխ անասուն, նոյն իսկ վրան չունեցողները: Եւ գեռ սա բաւական չէ՝ մէկ էլ տեսաք՝ մի քանի ընտանիք, որոնց գիւր չի գալիս իրենց գիւղը, թողնում են այն և գնում 20—30 քիլոմետր հեռու մի նոր զաղութ հիմնում և սկսում այնաեղ ապրել: Եւ երբ այդպիսի զաղութների բնակիչներին հարցնում էք, թէ ո՞ր տեղացի են, նրանք երբէք իրենց նոր զաղթատեղի անունը չեն տալիս, այլ այն հիմնական գիւղի, որտեղ զաղթել են: Իսկ մի որոշ ցեղի կամ տոհմի պատկանողները միևնույն հարցին միշտ պատասխանում են. «Ես այս լինչ ցեղից եմ». օրինակ Սոֆուլին երբէք չի ասի, թէ ինքը այս կամ այն գիւղիցն է, այլ միշտ՝ «Ես սոֆուլի եմ», թէւ այս անունով ոչ մի բնակավայր չկայ:

Պլանոյն ժամանակ քրդերը շատ տղէտ և սաստիկ նախապաշտուած են¹⁾:

Զանգեղուրի դաւառամասի թաթարները նոյն են, ինչ
որ Սիսիանինը²⁾:

¹⁾ Фрѣтъ рѣ че рабѣи отъ бѣлѣгъ о вѣтилѣ и вѣ ѿ. Извѣдованіе экономического быта государственныхъ крестьянъ въ Зангиезурскомъ уѣздѣ.

2) ՏԵՍ ՍԻՍԼԻԱՆ.

Բ Ա Կ Ա Ր Ա Ն.

Զանգեզուր գաւառամասի տիպական բնակարանները արհեստական քարացրներն են, որոնք տեղական բարբառով քրատակ (քարի տակ) են կոչում: Հին ժամանակներում այս գաւառամասի գրեթէ բոլոր բնակարանները այդպիսի աշերք են եղել, իսկ այժմ բացի նրանցից շինուում են և բնական առ տներ: Հետզինետէ ժողովուրդը դուրս է գալիս այդ հին և նոր քարատակներից, շինում է կանոնաւոր, երկարկանի տներ, իսկ քարատակները գործ է ածում կամ որպէս գոմ և կամ որպէս խոտանոց:

Քարատաղները փորուած են և փորւում են ձորերի լանջերին, քիրծերի մէջ։ Ընդհանրապէս դռան վերևը մի ծակ է թողնուում, իբր լուսամուտ, թէ կան և այնպիսիները, որոնք բոլորովին պատուհան չունին։ Նրանք բաղկացած են միայն մի մեծ սենեակից, թէ կան և երկու սենեակ ունեցողներ։ Դռան մօտ, անկիւնում շինուած է մի օջախ, որի վերևում, մի փոքրիկ անցք է բաց արած՝ իբր ծխնելոց։ Մի քանիսի մէջ էլ, մանաւանդ հների, թոնիր կայ թաղուած։ Պատերի մէջ բնականից պահարաններ, դարակներ և նստարաններ են փորուած։ Բոլոր պատերը սեւացած են ծխից, որովհետև օջախը կամ թոնիրը վառելիս՝ սարսափելի ծուխ է տիրուած։ Բոլոր քարատաղներն իոնաւ են, մի քանիսն էլ գարնան յորդ անձրևների ժամանակ կաթուած են, այնպէս որ բնակիչները զրեթէ առանց բացառութեան կրազաւ ունին։

Այսպիսի բնակարաններում կահ-կարասիք չկան, Մի երկու կապերտ և գուցէ մի գորդ—ահա նրանց ամբողջ կահաւորովթիւնը, Քնում են զետնի վրաց, անկողինները թաղիքների վրայ ձգելով. Հիւրեկած միջոցին միայն փոռում են գորգը, վերան մի ներքնակ ձգում և մի բարձ դնում, որ հիւրը նստի և բարձին կոթնի,

Մի պղնձէ զիւգում կամ կուժ, մի քանի կաթսայ, մի սինի,
մի քանի պղնձէ ափսէ, մի թաս, մի մեծ դանակ, մի քանի փայտէ
գդալ, մի կասկարա, —ահա խոհանոցի բոյոր պիտուքը:

Նոր շինուող կանոնաւոր տները ընդհանրապէս երկարկանի են, իւրաքանչիւր յարկը առաւելապէս մի նրբանցքից և մի մեծ սենեակից և կամ միայն երկու սենեակից բաղկացած, առանց նրբանցքի: Ներքին յարկի յատակը սովորաբար չեն տախտակում, այլ միայն վերի յարկինք: Հատ հազիւ է պատահում, որ առաստաղը տախտակեն: Պատուհանները մեծ են լինում և ապակի ձգուած: Պատշգամբի ձողերը սովորաբար

բաւական գեղեցիկ են լինում, բայց ներկուած չեն, ինչպէս և ոչ պատուհանները, ոչ դռները և ոչ ցատակը:

Այսպիսի բնակարաններում նկատւում են մի քանի եւրոպական աթոռներ, սեղան, երբեմն պատի ժամացոց, բայց ընդհանրապէս յատակին թաղիքներ են լինում փոռուած, պատին կից ներքնարկներ ձգած, կապերտով ծածկած, և կողքին բարձեր դրած:

Տեղայիք սիրում են ծալապատիկ նստել, և աթոռներ շատ քիչ են գործ ածում:

Սենեակները տաքաջնում են թիթեղեաց վառարանով, թէև իւրաքանչիւր սենեակի մէջ շինում են նաև «բուխարի»:

Իբր խոհանոց գործ են ածում կամ ներքին յարկի սենեակներից մինը կամ հին տունը, իսկ ամառը պատշգամբի ծայրերից մինում, սենեակի պատի շարունակութեան մէջ շինուած „օջախը“, որ մի կիսաբոլոր բացուածք է և ունի ծխնելոց:

Նոր Գորիսի զիթէ բոլոր տները մի յատակագծով են շինուած. —Միւնոյն ուղղութեամբ ձգում են մի երկար դահլիճ, ծայրերին մի մի փոքրիկ սենեակ, որոնցից մինի հանդէպ գտնուում է խոհանոցը, միւսի՝ նոյն մեծութեան մի սենեակ, իսկ վերջինիս և խոհանոցի մէջ տարածում է միւնոյն լայնութեան պատշգամբ: Երկարկանի տներում մի փոքրիկ պատշգամբ էլ դահլիճից փողոցի վրայ է նայում: Տան առաջ տարածում է մի փոքրիկ պարտէզ, խնձորի, կեռասի և այլ ծառերով: Ջատերի պարտէզներում կան ջրհորներ:

Մուտքը միշտ դարբասից է, որ շատ մեծ է և բացւում է փողոցի վրայ, պարտէզի և տան մէջ թողնուած բայց տարածութեան առջև:

Տների կտունները տախտակներով եռանկիւնածե ծածկուած են:

Պատուհանները մեծ են, մի քանիսը երկաթէ վանդակապատով, միւսները առանց նրան: Դուները երկիթզանի են: Առանց բացառութեան, բոլորի յատակներն էլ տախտակած են. իսկ առաստաղները տախտակած են լինում միայն հարուստներինը, միջակ կարողութիւն ունեցողները՝ առաստաղին սպիտակ կտոր են մեխում, որը 2—3 աարին մի անգամ պոկում և լուանում են: Դուներն ու պատուհանները ընդհանրապէս սպիտակ գոյնով ներկուած են: Սենեակները տաքաջնում են առաւելապէս թիթեղեաց վառարաններով, իսկ մի քանի տներում նաև հոլլանդական վառարաններով, թէպէտ «բուխարիներ» այստեղ էլ կան:

Կահաւորութիւնը եւրոպականի և ասիականի խառնուրդ է ներկացացնում:

Զ Գ Ե Ս Տ Ե Ւ Զ Ա Ր Դ

Ա. Կ Ա Ն Ա Յ

Կանացք սովորաբար երկու ձեռք շոր են ունենում, մինը՝ պատճեն, որ ամենայն օր հագնում են, իսկ միւսը առողջապէտ, որ միայն տօն օրեւը և հիւր գնալիս են գործ ածում: Այս երկու տեսակ շորերի տարբերութիւնը շատ մեծ է. որքան հասարակ, կեղտոտ և պատառոտուն է առաջինը՝ նոյնքան թանգագին, մաքուր և նոր է երկրորդը: Նոյնիսկ ամենահարուստ մարդու կինը տան մէջ երբէք մաքուր և վայելուշ չէ հագնուում: Նոյն են և տղամարդիկ. —Խնձորեսկի առաջին հարուստը, որ 50,000 լ. աւելի կարողութիւն ունի՝ այնպէս զգեստ է հագնուում սովորական օրերը՝ որ տասնեակ տեղերից կարկատուած է և ինչպէս ատուած են՝ «ըուլը յին բարեկ է տալիս», իսկ նրա կինը ոտարութիկ է գնում ջուր բերելու, մինչդեռ նրանց տանը կան թանգագին մահուդից կարած հանդերձներ մարդու համար և թաւշեաց մուշտակ՝ կնոջ համար: Տնամէջ այսպէս հասարակ և վատ հագնուելը ոչ թէ ժլատութեան հետևանք է, այլ սովորութեան: Եթէ հարստի կինը ամառը ոտնաման է հագնում՝ գիւղի կանացք բամբասում են նրան, թէ տեսէք, զարմացնել է ուզում, որ ինքը հարուստի կին է: Եթէ կինը աշխատում է ամենայն օր ճաշակով և մաքուր հաքնուել, ոչ միայն դրացիներն են բամբասում, թէ կամենում է մարդկանց դիւր գալ, այլև ամուսինը կասկածում և խանդուտում, կուռում է նրա հետ: Սակայն Բագուի ազգեցութեամբ այս սովորութիւնը հետզետէ վերանում է: Բագուից վերադարձ երիտասարդն աշխատում է ամէն օր մաքուր և լաւ հագնուել, շատ անգամ էլ փոխում է տեղական տարագը և եւրոպական շորեր հագնում: Նրա ընտանիքն էլ նրան հետևելով աւելի լաւ է հագնուում: Կանացք զգեսի վերաբերութեամբ աւելի պահպանողական են, քան տղամարդիկ, և միայն ծայրացեղ դէպքում համաձայնում են տեղական տարագը փոխել: Այսպիսի ծայրացեղ դէպքեր յառաջ են գալիս միայն այն ժամանակ, երբ երկար ժամանակով տեղափոխուում են Բագու և կամ ուրիշ քաղաք: Այսպիսի դէպքերում նրանք միշտ գերադասում են Թիֆլիսի վրացական տարագը, և համարեա ոչ մի զանգեզուրցի կին տեղական զգեստից չի անցել եւրոպական գլխարկի: Նոյն իսկ երբ ուրիշ քաղաքից եկած, եւրոպական գլխարկ ծածկող աղջիկները գորիսեցիների հարս պէտք է դառնան՝ նրանցից

միշտ պահանջում են, որ գոնէ վրացական ձևի փոխեն իրենց յարդարանքը և միայն կրթուած երիտասարդների խիստ ընդիմադրութիւնը մի կերպ կարողանում է նրանց եւրոպական տարազով մտցնել իրանց նահապետական ընտանիքի մէջ:

Կանանց զգեստները սովորաբար իրենք կանաչք են կարում, սակայն Բագուի ազգեցութեամբ լոյս են ընկել կանանց զգեստ կարող տղամարդ դերձակներ. միմիայն Խնձորեսկում ՅՅ դերձակ կան, որոնց կարի մեքենաների ձայնը, որ գալիս է քարատակներից՝ մի տեսակ հակադիպութեան տպաւորութիւն է անում:

Ընդհանրապէս կանանց շորերը կարմիր են, միայն պառաւների արխալուզը կանանչագոյն է լինում: Եղջիկների զգեստներն էլ բոլորին նոյնն են, միայն սրանք իրաւունք չունին զլիի յարդարանքը կրելու, այ մի կարմիր կամ սպիտակ «եազուխ» են կապում:

Կանանց զգեստը բաղկանում է հետևեալ մասերից.

Ճապիկ.—Կարում են առաւելապէս ալլշի և կարմիր մահուդափարի կտորներից, երբեմն էլ կարմիր ալլշից: Երկար է լինում և իշնում է մինչև ոտները. Կուրճքը ամբողջապէս և առաջի երևացող մասերը կարում են ալլշից կամ կարմիր մահուտվարուց, իսկ մէջքը և յետեի չերևացող մասը՝ չէնչուի:—Կուրճքը բացում է մինչև գօտկատեղին և երբեմն դաշտակի կոճակներով՝ կոճկում:

Ճապկրներ.—Կարում են խամ շիլից, սպիտակ կամ կապոյտ խամ կտաւից, փողերը նեղ են և երկար: Վերին ծայրը դարձուած է և «խոնչանադարձ» կարուած, որի միջով անց է կացրած բամբակեաց կամ բրդեաչ մի կապ—խոնչան—որը մէջքին կապելով մի կողմում հանգուստում են:

Ճապկրների ծայրերը դնում են փոռհանք մէջ. սա թալիշեաց կտորից երկու վերշոկ լայնութեան և ոտի հաստութեան համեմատ մի կտոր է, երկու ծայրը միմեանց հետ կարած:

Արխալուդ.—Կարում են մեծ մասմբ կարմիր շալից, չիթ աստառով. հարուստները՝ մետաքսից կամ ուրիշ կարմիր կտորից, միենոյն գոյնի չմիթի աստառով, իսկ պատաւները՝ մարինոսի կտորից, մուգ գունաւոր չմիթի աստառով: Տնամիջի արխալուզը սովորաբար կարում է կարմիր չմիթից, աւելի հասարակ չմիթի աստառով: Արխալուզը բաղկանում է երեք կտորից—մէջք և երկու փէշ: Փէշերից իւրաքանչիւրը լինում է մէջքի կէս մեծութեան, և կարուած է նրա հետ վերեկց մինչև գօտկատեղին, իսկ այստեղից ներքեւ, բաց է: Գօտկատեղու մօտ, երկու կողքերին կարուած են մի գրապան: Մէջքը բիւզմա չունի որով և՝ զլիսաւորապէս տարբերուում է սփախանցու արխալուզից: Փէշերն իջնում են ճնկներից մի քիչ ներքեւ: Կուրճքը եռանկիւնածե-

բացուած է և գօտկատեղում կոճկում է 2—6 արծաթի բուբելիանոցներով: Այս բուբելիանոցները իբր կոճակ են ծառայում, որոնց համար կանթեր են շինել տալիս և երկ երկու կամ երեք երեք միմեանց կպցնում:

Թեքերը հասնում են մինչև մատների ծայրերը՝ միայն արմուկի մօտից եռանկիւնածե կտրուած են, կանաչ դանաւուզից աստառ ձգած, և եղբերին եռանկիւնածե դասսաւորուած արծաթի սերման կարած: Սիրման արծաթէ թելի սնամէջ ոլորուածք է, 4—5 սանտիմետր երկարութեամբ: Արմուկից բարձր էլ կարում են արծաթէ գնտածե կոճակներ (լուսէլէ): Կամ նշածե և նշածափ սնամէջ արծաթ (դիւկան):

Արխալուզի բոլոր եղբերին կարում են կանաչ դանաւուզի կամ կարմիր մահուդափարի կտորից մի մատնաչափ լայնութեատն հէօռա (ժապաւէն):

Հարսանեկան արխալուզները, որ հագնում են մի ուրիշ արխալուզի վրայից՝ կարում են թաւիշից, դանաւուզ աստառով: Սրանց թելուզի կարմիր հինում է մետաքսից, իսկ պատաւներին՝ դեռից՝ շալից, Սա ՅՅ սանտիմետր լայնութեամբ և 3-3½ մետր երբնը՝ շալից: Կամ մէջքին արխալուզի վրայից: Կարութեամբ մի կտոր է, որ կապում են մէջքին արխալուզի վրայից:

Կրճքին կարում կամ քցում են ետքու:—Սա բաղկանում է երկու շարանից, այսինքն երկու շարք արծաթեայ 20 կոպէկանոյներ, կամ հին դրամներ, իւրաքանչիւր շարքում 12 հատ, որոնք շարուած են մի դայմիանի վրայ և յետոյ կարուած են մի նեղ շորի վրայ:

Քիւրք.—Կարում են կարմիր թաւիշից և շուրջը, ինչպէս և թեւերի ծայրերին ու օձիքին՝ 5 սանտիմետր լայնութեան աղուէսի կամ միայն օձերին, ամառ լինի, թէ ձմեռ: Քիւրքի գործածութիւնը միայն տօն օճերին, ամառ լինի, թէ ձմեռ: Քիւրքի գործածութիւնը մտել և միայն փոքր ի շատէ ունեղրներին է մատչելի¹⁾:

¹⁾ Գլխի յարդարանքը միանգամայն նուան լինելով Սիսիանի կանանց գլխի յարդարանքին, մենք զանց առանք նկարագրելու տես. Սիսիան:

Զ Գ Ե Ս Տ Ա Ր Ժ Է Ք Ը :		
Ճապիկ	բուրփի 1,50—2.	3—5.
Ճապլնկեր	0,40—0,70.	0,40—0,70.
Արխալուղ	3—3,50.	10—20.
Գօտի	0,50—1,00.	1,20—2.
Եախա, սիւրմա և դիւկմա	"	8—12.
Քիւրք	"	20—30.
Բնդամէնը՝		5,40—7,20. 42,60—69,70.

Ո Տ Ն Ա Մ Ա Ն .

Աղջիկներն ու կանաչք տարուաց մեծագոյն մասը սովորաբար բորիկ են անցկացնում, և միայն ձմեռ, նոյնպէս տօն օրերին և ուխտ գնալիս՝ հագնում են գուլպաց և չմուշկ։ Բագուկի ազդեցութեամբ կիսակօշիկները (ботиւեն) կամաց կամաց մտնում են նորահարսերի օժիտներում, իբրև զարդարանք։

Բ. Տ Ղ Ա Մ Ա Ր Դ Կ Ա Ն Ց .

Ճապիկ։—Կարում են գունաւոր չժից կամ սպիտակ մահուղվարուց։ Ճատ երկար չէ լինում։ Կուրճքը բացուում է աջ կողմից և անրակի մօտ կոճկում։ թևերին կոճակ չունի, այլ բաց կախ են բնկնում։

Փոխան։—Կարում են կապոյտ ներկած կտաւից, փողկերը կէս արշին լայնութեան։ Հագնում են շապիկի տակից և խաշանով կապում։ Սա անց է կացրած փոխանի վերի եղրին արած դարձուածքի մէջ և կապելիս ոչ մի բացուածք չէ մնում։

Ճալվար։—Հագնում են գլխաւորապէս փոքր ի շատէ քաղաքակրթուած և հարուստ մարդիկը։ Կարում են շալից, միանգամայն փոխանի ձևով։ Այժմ հետզհետէ տարածւում է եւրոպական ձևի շալվար։

Չիսկի կամ Տօլաղ։—Բորդից կամ մետաքսից գործուած $2\frac{1}{2}$ —3 վերշոկ (10—13 սանտիմետր) լայն և $\frac{3}{4}$ արշին (54 ս.) երկար։ մի կապէ, որի ծացրին մի թել, ու է ամրացրած։ Սրանով կապում են փոխանի ծացրերը։

Արխալուղ։—Կարում են կապտագոյն մահուղվարուց, քիշմիրից, չժից ևազն։ Ռերերինը իջնում է մինչև ծնկները, իսկ երիտասարդներինը միքիչ կարճ է լինում։ Մէջքը սեղմուած է բեռնալուած, կուրճքը եռանկիւնածն բացուած է, թէև այժմ երիտասարդներինը ավես բաց չէ լինում, այլ ամբողջովին կոճկած։ Բաց կուրճքով արխալուզները միայն գոտկատեղում են կոճկուում երկու կամ երեք զայթանի կոճկով։ Արխալուզը ունի երկու գրապան։

Մէջքին կապում են կամ գոտի, որ մահուղվարու 2,84 մ. (4 արշ)։ երկարութեան և 71 ս. (մի արշին) լայնութեան կտոր է, և կամ քեամար։

Զուխայ։—Կարում է բրդից գործած շալից։ գոտկատեղում բիւզմա ունի և փէշերն իջնում են ծնկներից փոքր ինչ ներքւ։ Կուրճքը եռանկիւնածն բացուած է և գոտկատեղում ույլանէ Յ կոճկով կոճկուում։ Ամբողջ չուխայի շուրջը եղրերին զայթան է կարած։

Գլխներին ծածկում են ոչխարի մորթուց կարած գոտի։
Ոտներին հագնում են դուզպա և տրեխ։

Է Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Բ Ա Ր Ք

ԸՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՅԻՍԸՆԵԵՑ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԵՐ

Ն Ե Ա Ն Ե Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հասակ.—Զանդեղուրի գաւառամասումն էլ, ինչպէս և Սիսիանում, աղջիկներին շատ փոքր հասակումն են ամուսնացնում: Ութ կամ ինը տարեկան աղջկան արդէն նշանագրում են և հազիւ տասնումէկ կամ տասներկու տարեկան դարձած ամուսնացնում: Տասնեռութ տարեկան աղջիկը արդէն տանը մնացած է համարւում, նա սովորաբար այրի մարդու է գնում: Տղաներն էլ, մանաւանդ առաջ, շատ վաղ էին ամուսնանում, սակայն շնորհիւ զինուրագրութեան, այժմ միայն քսան և մէկ տարեկան անցած են այդ քայլն անում: Սակայն անդրանիկ որդիները զինուրակսն ծառայութիւնից ազատուելու արտօնութիւնն ունենալով, դարձեալ 14-15 տարեկան հասակումն են ամսւսնանում:

Գաղթականութեան դիմած երիտասարդները, որոնց թիւը արդէն իսկ մեծ է և օրէց օր աւելի է մեծանում, շատ ուշ են ամուսնանում, շատ անդամ, այն միջոցին, երբ պանդխտական կեանքը արդէն քամել է նրանց կենսական ոյժերը: Մի քանի ծնողներ էլ, ցանկանալով իրենց զաւակների «ոտը կապել»՝ աշխատում են նրանց կարելոյն չափ վաղ ամուսնացնել, որպէս զի նրանք պանդխտութիւնից շուտ վերադառնան և կամ չը խաբուին և քաղաքի աղջիկ չուզեն:

Ամուսնացող զոյգի տարիքների տարբերութիւնը քանի գնում մեծանում է: Ճատ յաճախ է պատահում, որ 25-30 տարեկան մարդը ամուսնանում է 12-15 տարեկան աղջկայ հետ: Քիչ չեն նաև 40-45 տարեկան ալրի մարդիկ, որ երկրորդ անդամ ամուսնանում են 15-18 տարեկան աղջիկների հետ:

Մեր այս ասածները չէ կարելի հաստատել պաշտօնական թուերով, որովհետև քահանաները աղջիկները իսկական տա-

րիքը կեղծելով օրէնքի պահանջածի համեմատ տարիք են զրում: Խնամութեան աստիճաններ.—Սովորաբար թուլաղրում է ամուսնան արիւնակցութեան վեց և խնամութեան հինգ աստիճաններում, սակայն բացառութիւններ շատ են պատահում: Երբ կաշառքի և կամ ազգեցիկ մարդկանց խնդիրքով ամուսնութիւնը գլուխ չէ գալիս՝ զիմում են թոնրի պսակին: Այսպէս՝ Խնդորեսկ գիւղում, երեք քահանայ իմիասին 300 լուրջ առնելով Գրիգոր Համբարձումեանից՝ աշխատում են օրինաւոր կերպով պսակել, խաբելով Հոգեւոր իշխանութեան, բայց երբ այս չէ յաջողւում, թոնրի վրայ են պսակում, թոնրի շուրջը մօմեր վառելով:

Առաջները թուլ չէր տրւում որդեզրին՝ որդեզրողի զաւակի հետ ամուսնանալն, բայց այժմ թուլ է տրւում: Կա և առաջները կնքահայրութիւնը չհաս աստիճան էր համարւում, իսկ այժմ ոչ:

Աղջիկ ուզել.—Մինչեւ այժմ էլ աղջկայ ընտրութիւնը գլխաւորապէս կախուած է տղայի մօրից. քիչ-քիչ սովորում են տղայի կամքին նշանակութիւն տալ, և թողնել, որ նա ինքն ընտրէ հարսնացու: Աղջկայ հսմաձայնութեանը համարեա ոչ մի նշանակութիւն չեն տալիս, որովհետև նրան ամուսնացնում են այն հառակում, երբ կամքը նրա մէջ ըոլորովին կազմակերպուած չէ: Միրահարութիւն, աղջիկ փախցնել համարեա չէ պատահում:

Երբ հասունանում է աղջիկը և սէր զգում, նա վաղուց արդէն ամուսնացած է լինում, և եթէ ամուսինը սրտովը չէ՝ շատ շուտով գտնում է մի սիրահար, ուստի և կարելի է ասել, թէ մինչդեռ նշանաղրուող աղջիկները բոլորն էլ կոյս են լինում, հարսների հաւատարմութեան վրայ, կարելի է կասկածել:

Աղջիկներն ու երիտասարդները միմեանցից համարեա բոլորովին առանձնացած են: «Պարկեշտ» աղջիկը երիտասարդ տեսնելիս անշուշտ փախչում, հեռանում է, և շատ հազիւ է պատահում, որ մարդկանց ներկայութեամբ մի աղջիկ խօսէր մի երիտասարդի հետ: Արանք սովորաբար մօտենում են միմեանց՝ երբ մարդկային աչքերից հեռու, առանձին են մնում.

իսկ երբ մարդիկ են լինում՝ աղջիկը երեսը դարձնում է դէպի հակառակ կողմը և անշարժ սպասում, որ երիտասարդը անցնի:

Առհասարակ երիտասարդներն ու աղջիկները միմեանց տեսնում են՝

1) Աղբիւրի մօտ, ուր առաջինները տանում են անապունքները ջրելու, իսկ աղջիկները գնում են ջուր բերելու:

2) Հարսնետանը, ուր հաւաքւում են գիւղի գրեթէ բոլոր երիտասարդներն ու աղջիկները:

3) Այգիներում, թութ թափելիս:

4) Վրտերում, քաղհան անելիս:

5) Ռիխատեղիներում, ուր աղջիկները «ճինճի են տալիս»—ճլորթի են խաղում: Այստեղ աղջիկները այնքան ճոճում են ճլորթի նստած աղջկան, մինչև որ նա ստիպուած տալիս է իւր սիրած երիտասարդի անունը:

6) Անտառներում, ուր աղջիկները գնում են պտուղներ հաւաքելու և երիտասարդները գիւղացիներից ծածով հետեւում են նրանց:

7) Եկեղեցում, ֆաղկաղարդին և ջատկին բոլոր աղջիկներն ու հարսներն անշուշտ եկեղեցի են գնում, և երիտասարդները եկեղեցու դռանը խմբուած դիտում են նրանց:

Աղջիկը ընտրելուց յետոյ մի օր երիտասարդի մարը մի մօտիկ աղջկանի հետ միասին, վերցնելով փորը բընձով և համեմունքներով լցրած մի հաւ և մի շիշ գինի՝ գնում է աղջկայ տունը: Վերջինիս մարը ընդունում է նրանց և հրամաշկան մի ներքնակ ձգելու, որ հիւրերը հանդիսու նստեն: Աղջիկը իսկոյն ներքնակներ է ձգում, սենեակն աւելում, թէ-կուզ մաքուր էլ լինի, շտապով գնում է աղբիւր, թարմ ջուր բերում, և օջախը վառում, գիտենալով որ մի բան պիտի եփեն: Հարսնախօսները աղջկայ մօր հետ խօսակցելիս՝ աչքի տակով շարունակ դիտում են աղջկան: Վերջապէս տղայի մայրը խօսքը բանալով գիտում է աղջկայ մօրը և ասում. «Եկել եմ ճրաքիցի մին ճրաք վառեմ»:

—Դէ մին հափուռ (բուռ) մօխիր է հափուռմ ենք, (բուռմ ենք), աւելացնում է տղայի կողմից եկող միւս կինը.՝

թէ մեր երախի բախտում կայ ոսկի է դառնալու, թէ չէ, լիայ մոխիր է, որ մոխիր է:

Աղջկայ մարը մի-երկու օր ժամանակ է ինդրում ամուսնու և տնեցիների հետ խորհելու և պատասխանելու: Սրանից յետոյ հիւրերին հաց են տալիս և ճանապարհ ձգում:

Մի քանի օրից, տղայի տէրը, առնելով աղջկայ տիրոջ համաձայնութիւնը և հրաւիրելով իւր մօտիկ աղջկաններին երեկոյին գնում է աղջկայ տունը,

—Ամէնքը «բարի լոյս» ասելով բարեռում են և նստում: Պէտքէ ասել, որ թէ նշանադրութեան և թէ հարսանիքի ընթացքում երբէք «բարի իրկուն» չեն ասում, այլ միշտ «բարի լոյս»:

Անմիջապէս աղջկայ տէրը, որ իւր մօտիկ աղջկաններին էլ հրաւիրած է լինում հիւրասիրում է բոլորին մի-մի բաժակ օղիով և յետոյ թէրով: Սրանից յետոյ երկու երիտասարդ, մինի ձեռին մի կուլա գինի և մի շիշ օղի, միւսի զլիսին մի սղոնձեաչ սկուտեղ՝ մէջը մրգեղէններ—խնձոր, տանձ, նուռ, քիշմիշ, կաղին և այլն—ածած, սկուտեղի շուրջը մոմեր վառած, մի խնձորի մէջ մի արծաթ բուրլիանոց խրած, որին արծաթէ շղթայ է կացրած, մի «եախա», մի արխալուղացու կտոր, երբեմն էլ մի մատանի,—բերում են ներս: Աա կոչւում է «նշան», որ տղի տէրը բերում է աղջկան: Բոլոր հիւրերը վերցնում նայում են նշանը, «Աստուած շնորհաւոր անէ» ասում և յետոյ դնում քահանայի առաջ, որ օրհնի: Առաջները բոլորովին, այժմ էլ շատ անգամ աղջկան ու երիտասարդին առաջ չեն բերում, այլ քահանան օրհնում է նշանը և տալիս, որ տանին աղջկան տան: Գորիսում և ուրիշ միքանի, համեմատաբար աւելի քաղաքակրթուած գիւղերում, նշանուող երիտասարդին էլ են հրաւիրում, և աղջկայ հետ առաջ բերում և նրանց վորսադարձ համաձայնութիւնը հարցնում:

Հնումը սովորութիւն է եղել նշանի հետ բերել և մի ախմէ հալվայ, որ նշանը օրհնելուց յետոյ տալիս են եղել գիւղի տանուտէրին՝ որ հիւրերին բաժանէ: Աա էլ կը կատարէր, նախապէս տղայի տիրոջից մի քանի կոպէկ նուէր ստանալով:

Վերջապէս բոլոր հրաւիրեալներն ընթրում են և ցրւում: Նահապետական տներում, փեսացու երիտասարդը, որ հրաւիրուած է լինում՝ հիւրեղի ցրուելուց յետոյց, աղջկայ տան հերդիկից դիտում է, և երբ տեսնում է, որ աները քնեց՝ կամացուկ իշնում է բակը: Զոնքաչը տանում է նրան մի առանձին սենեակ, ուր հիւրասիրում է ոչ միայն հիւրեղի համար պատրաստուած կերակրներով, այլ և ձուաձեղով ու եղ ու մեղրի խառնուածքով:

Այրիների նշանադրութիւնը, մանաւանդ անցեալում, շատ ալարդ և հասարակ է կատարուում: Սրանից մի քանի տարի առաջ նշանադրուողները բաւականանում էին միայն իրենց զօտիները փոխելով:

Առաջները պատահում էր նա և փոքրիկ երեխաներին նշանադրել: Մայրերը իբրև նշան խազում էին օրորոցները և աղջկայ կուրծքից մի արծաթ դրամ կախում:

Եթէ պատահի, որ նշանադրուածներից մէկը մեռնի՝ աշխատում են միւսին ամուսնացնել միւնոյն կամ մօտիկ լնտանիքը մի ուրիշ անդամի հետ:

Խ Ո Կ Ա Ն Ե Ր

Նշանադրութիւնից մինչեւ պսակը տևում է երեք ամսից մինչեւ մի տարի, երեմն նոյնիսկ մի քանի տարիներ՝ եթէ փեսացուն պանդխտութեան է դնացել: Այս միջոցում նշանուածների գերդաստանները միմեանց հետ խնամութիւն են անում, միմեանց մօտ գնում գալիս, նշանաւոր տօներին միմեանց նուէրներ ուղարկում: Այս նուէրները սովորաբար տղայի տնից են ուղարկում և կոչում են խօնչա: Աղջկայ տանից էլ դրանց փոխարէն դարձ են ուղարկում, սովորաբար խմորեղէններ, ինչպէս նա և հարսի ձեռագործներից, օրինակ դրամի քսակ, շիշի համար կտորից և ուլունքներից պատրաստած խցան-բերանկալի, գուլպաներ, հեսկի (տոլախ) և այլն: Խոնչաները մեծ մասամբ պարտադիր են, և հետևեալ տօներին են ուղարկում.

Բարեկենդանին. — Գինի, օղի, միս, մրգեղէն և այլն:

Մեծպասի առաջին օրը. — Գինի, օղի, խնձոր և այլն: Նստարը երեկոյին փեսան ծածուկ մտնում է աներանց տուն և հիւրասիրում:

Միջիննին. — Զէթով վլաւ, զաթայ, հալվայ, զինի և օղի: Առաջ ուղարկում էին նաև տակ, որ եփում էին, կոտորում և վերան ծեծած ընկոյզ ցանում:

Ֆաղկազարդին. — Եկեղեցու մէջ մի զոյգ մոմ են տալիս հարսնացուի ձեռքը և մի չարղաթ ձգում երեսին:

Զատկին. — մի քանի կարմիր հաւկիթ և մի գառը, որի ճակատը ներկում են կարմիր և վիզը կարմիր թաշկինակ կամ թել կապում. սա կոչւում է ախար: Ճատ անգամ էլ հարսի համար մի զոյգ չմոշկներ են ուղարկում:

Նաւասարդին — մի գաւ գինի, մի շիշ օղի, մրգեր, տանձ, խնձոր, ընկոյզ և այլն, հարսնացուի համար մի չարղաթ: Խոնչայի շուրջը ոսկեպատ մոմեր են վառում:

Խոնչաները ուղարկելիս շատ անգամ պատահում է, որ փեսացուի ծնողները հրաւիրում են աղջկայ տունը հիւրասիրուելու, սակայն փեսացուն երեք չէ լինում այս հրաւէրներին: Ընդհակառակը սա աներոջը տեսնելիս շատ անգամ ամաչելով թաք է կենում և հեռանում է, ցերեկով բոլորովին չէ անցնում աներանց տան դռան մօտով, և եթէ անցնի՝ թաղի երեխաները կը հալածեն նրան: Նա էլ երեկոներն է գնում. — գաղտագողի բարձրանալով աներանց տան կտուրը՝ նա երդիկից ծկլատում է, թէ արդեօք աները քնել է, և երբ հաւաստիանում է՝ մի փոքրիկ քար երդիկից վայր է ձգում: Զոնքաչը խսկոյն հասկանում է, որ փեսան ացելութեան է եկել, դուրս է գալիս և նրան ընդունում տանում մի ուրիշ սենեակ: Այս-տեղ հիւրասիրում է նրան և բերած շալակը — մրգեղէնը — վերցնում հարսնացուին տալու: Մի-մի անգամ էլ թոյլ է տալիս, որ նշանուած զոյգը մի քանի բոպէ առանձին անցկացնի:

Հ Ա Ր Ս Ա Ն Ի Փ

«Ճընապայ կտրիլ»: — Երբ գալիս է ձմեռը, մօտենում

բարեկենդանը՝ նշանաձների տէրերը սկսում են հարսանիքի մասին մտածել։ Մի օր վեսացուի հայրը մի շիշ օղի վերցրած գնում է հարսացուի տունը և նրա հօր հետ որոշում, թէ որ օրը գայ «ճընապայ կտրելու»։

Որոշեալ երեկոյին, տղայի հայրը մի քանի մօտիկ բարեկամների հետ, մի զաւ զինի, մի շիշ օղի առած գնում է աղջկայ տունը։ Աստեղ երբեմն ուղղակի երկու խնամիները, երբեմն էլ նրանց ընտրած լիսազօրները, երկար սակարգութիւնից յետոյ, որոշում են, թէ տղայի հայրը ի՞նչ պիտի տայ աղջկայ հօրը և թէ վերջինս ի՞նչ օժիտ պիտի տայ իւր աղջկան։ Որոշում են նաև հարսանիքի օրը։

Սովորաբար տղայի հայրը տալիս է աղջկայ հօրը 15-120 րուբլի առձեռն դրամ, որ կոչում է «ծծագին» կամ «ճընապայ» (ճանապարհ)։ Սակայն այս գումարը հետզհետէ զգալի կերպով փոքրանում է. մի քանի դիւղերում բոլորովին վերացել է դա, նոյն-իսկ պատահում է, որ երիտասարդները, առաջելապէս Բագու գնացածները, իրենք են աղջկայ հօրից փող պահանջում, բայց շատ քչերն են համաձայնում տալ։

Բացի ծծագնից, տղայի հայրը պարտաւորում է աղջկայ հօրն ուղարկելու մի եզ կամ երկու ոչխար, 5-6 կուժ զինի, կէս կուժ օղի, թօփ ու կէս դարայի կոտր։ Աղջկայ հայրն էլ յանձն է առնում իւր աղջկան օժիտ տալ, փեսին էլ նուէր տալ, մի դաշոյն, կամ մի արծաթապատ բեամար, կամ մի լաւ զղակ և այլն։

Աղջկայ հօր հետ սակարգութիւնը վերջացնելուց յետոյ տղայի հայրը գնում է գործակալի մօտ, պսակի հրաման ստացած էլ երկար սակարկում է, աղքատ է ձևանում և նալու։ Աստեղ էլ երկար սակարկում է, աղքատ է ձևանում է։ Ապա, եթէ վերջ ի վերջոյ 6-8 ր. տալով՝ հրամանն ստանում է։ Ապա, եթէ աղջիկը համագիւղացի չէ՝ գնում է նրա գիւղի տանուտիրոջ մօտ, 40 կ. մի բուբլի նուիրում նրան և թոլլտութիւն խընդրում նրա գիւղից մի աղջիկ տանելու։ Տանուտէրն էլ յայտնելով իւր համաձայնութիւնը՝ տալիս է նրան իւր տէրողորմեան (ձեռքի համրիչը), որ պսակի միջոցին ներկայացնէ քահանալին։ Առանց այս նշանի՝ քահանան չէ պսակում։

Տըւըրմադ.— Հարսանեաց շաբաթի երեքշաբթի օրը տղամանը մաքրում են, զրսի դուռը և տան սիւները ալիւրով խաչաձև և խնկի ծառի նման նաշխում։ Հետևեալ օրը երկու կին շրջում են գիւղը և հրաւիրում բարեկամ կանանց՝ հարսանիքի հացի խմորը շնորհաւորելու։ Երբ կանալիք գալիս հաւաքում են՝ բերում են խմորի տաշտը և ալիւրը։ Այս ժամանակ ամենքը մի-մի բաժակ օղի են խմում, օրհնելով տան ննջեցեալներին և բարեմաղթութիւններ անելով պահկուղների համար։ Վերջին խօսքը միշտ լինում է «Աստուած շնորհաւոր անէ»։ Ապա այդ գերդաստանի ամենածեր կինը վերցնում է մաղը և մի քիչ ալիւր մաղում։ Նրան հետևում է քաւոր կինը։ Յետոյ հացթուխը գրեթէ բոլոր կանանցից նուէրներ ստանալով սկսում է մաղել։ Երբ զալիս է աղ ձգելու ժամանակը՝ կանալիք նորից շրջապատում են տաշտը և նոյն, ամենածեր պառաւը հանդիսաւոր կերպով վերցնում է և մի-մի բուռ աղ ձգելով տաշտի մէջ՝ ասում է. «Խս՛ այսինչ մեռելի հոգուն», «Էս այնինչ», «Էս բոլոր մեռելների օրհնութիւնը ընի էս տանս վրայ»։

Այնուհետև կանալիք հեռանում են տաշտի մօտից, թողնելով տան մօտիկներին հաց թխելու հոգսը, իսկ իրենք գուարձանում, պարում, հաց են ուտում և ցրում։

Յաջորդ օրը, հինգշաբթի, հարսացուի տանն են հաց թխում, համարեա միւկնոյն ձւով։

Թէ թագուորի և թէ հարսացուի տանը հրաւիրեալների հաց ուտելուց առաջ դերձակը բերում է հարսանեկան հանդերձները, որ «տեսնեն»։ Հրաւիրեալները նայում են և «Աստուած շնորհաւոր անէ» ասելով մի քանի կոպէկ նուէր են տալիս դերձակին, որից գոյանում է 2-15 բուբլի։

Գինեթափէֆ.— Հինգշաբթի օրը տղայի տէրը հրաւիրում է մօտիկ աղդական տղամարդկանց և նրանց հիւրասիրում ճաշով։ Այս օրը կոչում է գենէթափէք, որովհետև այդ աղդականների օդնութեամբ կարասներից քաշում են զինին և լըցնում շշերն ու գաւերը։ Երեկոյեան ժամերգութեան միջոցին տղայի տէրը հրաւիրեալներից մի քանիսի հետ գնում է եկե-

ղեցի և քահանալին «Հոգոց» ասել տալիս իւր գերդաստանի բոլոր ննջեցեալների համար: Յետոյ քահանալին առած՝ գնում է մօտիկ, սգաւոր ազդականների մօտ և այնտեղ հոգոց ասել տալիս նրանց ննջեցեալների համար:

Մկուակոչի. — Ուրբաթ օրը, առաւօտեան, զաւալները տղայի կտրան կանգնած ածում են սահարի եղանակը, որով բոլոր գիւղացիներին հարսանիքի են հրաւիրում: Մի քանի հոգի էլ շրջում են գիւղը և բոլոր պատահորներին հրաւիրում: Փեսացուի հայրը կամ տան մեծերից մին, մի շիշ օղի, մի ափսէ փլաւ, վերան մի եփած և փորը թթուով լցրած հաւ դրած տանում է քաւորին և հրաւիրում հարսանիքի: Եթէ քաւորը սգաւոր է՝ իշեալ ընծաների վրայ աւելացնում է նաև մի արխալուղացու կամ մի զոյգ չմոշկ:

Զանդեզուրում ևս քաւորը գերդաստանական է և առանց շատ մեծ պատճառի չեն փոխում: Հարկաւոր չէ, որ միշտ միւնոյն անձը լինի քաւոր, այլ որ միշտ միւնոյն գերդաստանից լինին նրանք: Հարսը շատ յարգում է քաւորին, նրա դռան մօտով երբէք չէ անցկենում, նրա հետ երբէք չէ խօսում:

Քաւորին հրաւիրելուց յետոյ, թագուորցին էլ մի երկու ընկերի հետ շրջում է մօտիկ ազդականների տները և իւր հօք կողմից հրաւիրում հարսանիքի:

Հրաւիրեալները քիչ ժամանակից գալիս հաւաքւում են փեսացուի տունը և անմիջապէս հիւրասիրւում մի՛ մի բաժակ օղիով, որ իմում են «Աստուած շնորհաւոր անէ» բարեմաղթութիւնով: Մի քանի ժամից հաց են տալիս և մատուցանում պասուայ կերակուրներ—կարտոֆիլ, ձիթով փլաւ, սոխ և բողի: — Առատութեամբ խմում են զինի և երկար բարեմաղթութիւններ անում:

Ճաշից յետոյ թագուորցուն ընտրում է երիտասարդներից մի փեսաղբէր, որ պսակի միջոցին իւր կողքին կանգնած պիտի լինի և միշտ իրեն հետևի, և մի քանի մակառներ, որոնց պարտականութիւնն է միշտ ուղեկցել թագուորին և հոգ տանել, որ հարսանիքը որքան կարելի է ուրախ անցնի:

Երեկոյեան մօտ թագուորը, քաւորի և փեսաղբօր հետ, մակարներով շրջապատուած, գնում է հարսնացուի տան դուռը, տանելով մի եղ: Ջատ անդամ եղի վիզը զարդարուած է լինում մի շարոց խնձորներով: Եղի յետևից գնում է մորթողը, դանակը ձեռին: Բոլորի առջևից գնում է զուռնազաւալը: Հարսնացուի դրանը բաւական ածելուց յետոյ՝ մսագործը վայր է զլորում եղը, իսկոյն թագուորցուն և քաւորը աչ ոտերը գնում են եղի վրայ: Քաւորը մի քանի կոպէկ նուէր է տալիս մսագործին, և նա մորթում է եղը: Երբ ցայտում են արեան առաջին կաթիլները՝ քաւորն իսկոյն թաթախում է մատը այդ արեան մէջ և խաչաձև քսում թագուորի ճակատին: Այս միջացին ազգական մի կին մի թել է հանգուստում, որպէսզի քաջքերը հանգուստուած, կապուած մնան: Այս հանգուստը բաց են անում թագի վերացումից յետոյ:

Եղի կէսը տալիս են հարսնացուի տնեցիներին, իսկ միւս կէսը բերում են թագուորի տռւնը:

Միւնոյն օրը թագուորի տնից հարսնացուի տունն է ու զարկում հարկը—այն բոլորը, ինչ որոշուել է նընմապան կտրելիս:

Նոյն երեկոյին բարեկամները նորից հաւաքւում են փեսացուի տունը, ուր քիչ ժամանակ անցկացնելուց յետոյ՝ առաջ են բերում քերը, այսինքն հարսնացուին ընծայելի զեստները, սկուտեղի վրայ դրուած: Վահանան օրհնում է քժեթը. որի ժամանակ թագուորցուն իւր գդակը, իսկ քաւորը իւր սուրը դնում են հանդերձների մօտ, որ նոյնպէս օրհնուին:

Սափրելու ծէսը.—Նոյն երեկոյին թագուորը նստում է մի աթոռի վրայ, քաւորը մի մոմ ձեռին կանգնում է նրա աչ կողմը, մակարները, ձեռներին մոմ, շրջապատում նրան: Սափրիչը հանդիսաւոր կերպով ոսկիրում է թագուորի մօրուքի կէսը և յետոյ կանգնում և ասում:

— «Մկրատը կտրում չի, մի բան ա օգում»:

— չինչ ա օգում, հարցնում են մակարները:

— «Մին ծետ» (20 կոպէկանոց), ասում է սափրիչը և հայելին տալիս թագուորի ձեռքը:

Անմիջապէս թէ մակարները և թէ բոլոր հրաւիրեալները համբուրում են թագուրի ճակատը, միքանիսը չորացրած թութ, խնձոր, չամիչ, միրդ տալիս թագուրին և միքանի կոպէկ դնում հայելու վրայ՝ իր նուէր սափրիչին։ Վերջինս բարձր բղաւում է. — «ՃՇն կենայ, քու տղին ա փոխ ընի, հուր (ով) ունի Աստուած պինդ ձեռօք պահի. հուր օնի ոչ՝ Աստուած տայ։ Իս էլ քու բաժինդ», ասում է սափրիչը և տուած դրամի համեմատ մի քիչ էլի սափրում։

Գորիսում և միքանի այլ գիւղերում սափրիչը աւարտում է սափրելը և ապա նուէրներ խնդրում։

Եթի այլևս նուէրներ ստանալու յոյսը կտրում է՝ ապա սափրիչը դնում է ձեռը թագուրի վրայ և օրհնում նրան՝ ասելով. «Գրիգոր Տաթեացու, Օհան Որտնեցու, երեքհարիւր վաթունրվից հայրապետի, տասերկու առաքեալի և մեր երկնային տէր Յիսուս Քրիստոսի օրհնութիւնը ըլի թագաւորին ու թագուհու գլխին»։ Բոլորը պատասխանում են. «Ամէն. Աստուած շնորհաւոր անէ»։ Խյունուհետև սափրիչը վերջացնում է. Ֆրբ թագուրը վեր է կենում՝ նրան շնորհաւորում են, ասելով. Թրաշտ (սափրուիլ) անուշ։

Թագուրի հանդիսաւոր կերպով լողանալը, որ դեռ պահպանւում է Հաւախքում՝ այստեղ վերացել է. Միայն մնացել է Հարսնացուին լողացնելու սովորութիւնը։ Հարսանիքից միքանի օր առաջ ազդական կանայք տանելով իրենց հետ եղածու, իրար հետ խառնուած մեղք ու կարագ՝ գնում են Հարսնացուի մօտ և լողացնում նրան։

Հարսնառ. — Թագուրին սափրելուց յետոյ միքիչ պարում են և ապա գնում հարսնառ։ Մի սկսուելի մէջ դնում են Հարսնացուին տանելու զգեստները — քթեթը — որ սովորաբար լինում են. մի մթանայ (մուշտակ), մի չարդաթ, մի շալիկ, մի գոտի, և մի զոյլ չմոշկ, մէջը չամիչ ածած։ Սկսուեղը դնում են մի երիտասարդի գլխին։ Բոլոր հարսներուները վառած մեղրամուներ են ունենում ձեռներին. մի երկու հատ էլ մաշալլա են վերցնում (կուպրի մէջ թաթախուած և մի երկար ձողի ծալլին կապած ցնցոտիներ են, որ վառում են իբրև ջան)։

Զուռնա-ղաւալի առաջնորդութեամբ բոլորը դուրս են գալիս և ուղերում դէպի հարսնացուի տունը։ Թագուրը, աջ կողմից քաւորը, ձախից փեսաղբէրը, շրջապատուած մակարներով՝ առաջ է գնում. նրա առաջ վիթեթ տանող երիտասարդը, վիթեթը գլխին դրած պարում է։ Տեղ-տեղ կանգնում է հանդիսաւոր գնացքը, թոյպաշին, — պարի կարգադրիչը — ձեռի երկար ճիպոտով յետ է քշում հարսներին և մի կոր տեղ բաց անում. ապա հրաւիրում է լաւ պարողներին պարել թագաւորի առջև, ուռա կանչել։ Վերջապէս հասնում են հարսնացուի տունը։ Զուռնա-ղաւալչին կտրում է դուան առաջը և չէ թոյլ տալիս ներս մտնել՝ մինչեւ որ քաւորից միքանի կոպէկ նուէր չէ ստանում։

Բացւում է գուռը, բոլորը խուժում են ներս։ Թագուրը համբուրում է հարսնացուի հօր և միւս բարեկամների ձեռքերը և քաւորի ու փեսաղբօր հետ միասին կանգնում փետրդայի մօտ¹⁾։ Իսկոյն տան մեծը մօտենում է նրան և մի նուէր տալով, խնդրում է նստել։ Թագուրը նստում է, իսկ մակարները պարում են և պար ածում քթեթը բերողին։ Վերջապէս մի ընծայ էլ տալիս են քթեթը բերողին և առնում քթեթը նրա ձեռքից։ Ապա բոլորն ընթրում են և ցրւում։ Մնում են միայն թագուրը, քաւոր, փեսաղբէրը և միքանի մօտիկ մակարներ։ Այս միջոցին զոնքանչը նորից հիւրասիրում է թագուրին փլաւով և հաւով, և այս կոչւում է «շնթռկաճաշ» կամ «թաքուն պատառ»։

Քըրեթօնինանի. — Ճաբաթ առաւօտ մակարները նորից խմբում են հարսնացուի տանը։ Քահանան օրհնում է թագուրի տնից բերուած քթեթը, որի առաջ կանգնած է լինում թագուրը իւր քաւորով ու փեսաղբէրով։ Քթեթը վրայ դնում են նաև հարսնացուի հօր կողմից թագուրին ընծայուելու գօտին և գլխարկը։ Եթի օրհնութիւնը աւարտում է և քահանան խաչհամբուր է հաւաքում քաւորը միքանի կոպէկ նուիրում է հարսնացուին շորեր հազցնող կնոջը, որպէսզի վերջինս

*.) Սենեակի մի անկիւնը վարագոյրով (փեարդայ) կտրում են հարսին առանձնացնելու համար։

պատառէ հարսնացուին նուէր բերուած շապկի օձիքը: Երբ հարսնացուին հազցնում են՝ հրաւիրում են սկեսալրին, գօտին կապի: Սա էլ միքանի կոպէկ ընծայելով շորեր հազցնող կնոջը, երեք անգամ ձգում է գօտին հարսի դլխով և ոտների մօտից վերցնում և ապա նրա մէջքը կապում, կամացուկ խփելով մէջքին և ասելով. «Աստուած մին զոչ տղայ տայ»:

Ապա որդոց տէր մի մարդ բռնելով հարսնացուի ձեռքից՝ «Վիերգից» հանում է նրան և բերույ կանգնեցնում է տան մէջ տեղը, թագուորի մօտ: Սրանք երկուսը չոքում համբուրում են օջախու^{*)}, ապա բոլորը ուղղում են դէպի եկեղեցի: Առջևից գնում է քաւորը, մի հաստ մոմ ձեռին, նրան հետևում է թագուորը, հարսի ձեռը բռնած, իսկ սրա մօտից հարսնաքուրը:

Զուռնա-ղաւալը մի կողմից, մակարները միւս կողմից՝ ահազին աղմուկ բարձրացնելով առաջ են գնում: Ամբողջ գիւղը հաւաքում է դիտելու: Երբ հասնում են եկեղեցի՝ քաւորը միքանի կոպէկ է ընծայում ժամակոչին, որ բաց անի գուռը: Մակարներից մի քանիսը մնում են գուանը, միւսները մտնում եկեղեցի:

Երբ քահանան կատարում է պսակի խորհուրդը և թագուորի ու թագուհու ձեռքերը միմեանց տալիս՝ թագուորը յայտնի կերպով միքանի քսան կոպէկանոցներ է դնում թագուհու բուռը: Եւ երբ քահանան գինին տայիս է թագուորին խմելու՝ առաջ է գալիս հարսքոյրը, առնում է գինու բաժակը և մնացածը խմացնում է հարսին:

Պսակի խորհուրդը կատարուելուց յետոյ՝ քահանան խաչը տալիս է թագուորի ձեռքը, իսկ Աւետարանը՝ հարսի, և հրաւիրում է հարսներներին խաչհամբոյը գնել Աւետարանի վրայ:

Վերջապէս հարսներները յետ են դառնում, այս անգամ ուրիշ ճանապարհով անցնելով: Հարսն ու փեսան դարձեսլ միեւանց ձեռք բռնած, միահաւասար առաջ են գնում: Ազգա-

^{*)} Առաջները սոյն օրը թագուորը շրջում էր իւր ազգականների տները եւ համբուրում նրանց օջախները: Տնեցիներն էլ նուէրներ էին տալիս նրան:

կան կանայք, հարս ու փեսան իրենց դռնովն անցնելիս՝ օղի, գինի, ձուաձեղ, եղ ու մեղը եւ դուրս բերում և նրանց հիւրասխում:

Բոլորը նորից վերադառնում են հարսի դուռը, ուր հարսին կրկին փեարտի յետեւ են ուղարկում, իսկ իրենք նստում հաց ուտելու: Սովորաբար մատուցանում են բոզբաշ, բուղլամայ և եախնի: Ճաշից յետոյ հարսներները ցըւում են, մնում են միայն մօտիկ ազգականները: Աս միջոցին ցոյց են տալիս օժիտը: Գորիսում և միքանի դիւղերում օժիտը ցոյց են տալիս միայն փեսայի տանը, երբ արդէն բերուած է լինում:

Թմբկահարը իրերը հատ-հատ վերցնելով՝ բոլորին ցոյց է տալիս և բղաւում է.

«Թագուորը, թագուորի մկրներ»:

— Հրամմա, պատասխանում են մակարները:

Ասու հրսմանք, ձեղ հրամանք. խնամին թագուորին ու հարսին սերին (սիրուն) տուաւ մին գեաբայ, որ եժի պակասը պակասը 10 մանէթ: Տոնը շէն, շէն կենայ:

«Շէն կենայ, շէն կենայ», կանչում են միւսները:

Սովորաբար իբր օժիտ տալիս են.

Մի ձեռք հանդերձ.

Երկու ձեռք սպիտակեղէն.

Մի ներքնակ.

Մի վերմակ.

Երկու բրդէ բարձ.

Ղաղմա—այսինքն ճակատին կապելու դրամներ, մօտաւորապէս

4 ր. արժողութեամբ.

Մի փրդաբող—(յթի վարագոյր).

Վեց զոյգ սմպետան (տոպրակի բերան կապելու թել).

Մի տաշտի մեզար (սփուոց).

Մի աղաքսակ.

Մի սուփրա.


Մի բակեղաթ (խուրջին).

Մի կարպետ.

Մի գորգ.

Մի պղնձեայ կուժ. մի կոնք, մուշուրբա և այլ պղնձէ անօթ-

ներ, որոնց ամենալաւերը ներկայացնում է հետեւալ պատկերը.



Պլում, անօթներ.

Օժիտը տեսնելուց յետոյ բարձում են մի ձիու, հարսնեղբօրը նստեցնում վերան և պատրաստում թագուորի տունը դնալու: Հարսի հալքը, բռնելով իւր աղջկայ աջ ձեռքից՝ տալիս է թագուորի հօր ձեռքը և ասում. «Տար ամանաթդ (աւանդ) խերը տես»: Հարսը խկոյն խոնարհում է և համբուրում սկեսրոջ ձեռքը: Վերջինս շնորհակալութիւն է յայտնում խնամսւն և հարսին տանում կանգնեցնում թագուորի մօտ: Յետոյ հարս ու թագուոր խոնարհում, համբուրում են տան օջախը, և ուղղում դէպի թագուորի տունը: Առաջից գնում է քաւորը, նրանից յետոյ թագուորն ու փեսաղբէրը, որոնց հետևում են հարսն ու հարսնքուրը: Այս վերջինս բռնում է թագուորի փեշից, որպէսզի հարսի և թագուորի միջով ոչ օք չանցկենայ, ապա թէ ոչ նրանք կը «կոխուին» (կը կողցնեն այրականութիւնը):

Ճանապարհին ազգականները սեղան են դուրս բերում— գինի, օղի, եղածու, մեղր ու կարագ են հրամցնում, չարդաժ, մահրամայ են ձգում հարսի զլխին, պարում են և երգում:

Երբ հասնում են տան դուռը՝ կտրից ընկոյզ են շաղ տալիս. ահագին իրարանցումն է ընկնում մակարների և երեխաների մէջ, որոնք աշխատում են միմեանց ձեռքից խլխլել:

Հարսը կանգնում է տան դուան առաջ, որ զարդարուած է լինում կարմիր չարդաթով. սկեսուրը դուրս է զալիս, իւղի պուլիկը ձեռլին. Հարսը մի քսան կոպէկանոց է ձգում իւղի մէջ, մի քիչ իւղ հանում և քսում սկեսոյզ ծամերին: Այս ժամանակ սկեսուրը համբուրում է նրան, օրհնում և ներս հրաւիրում. Հարսը նազ է անում, և սկեսուրը մի նուէր է տալիս և կամ խոստանում: Ապա հարսը կոտրում է շեմքի առաջ գրուած կաւէ գաւաթը, և այնպէս ներս մտնում՝ Հարս ու թագուոր խոնարհուում համբուրում են օջախը և ապա հարսին տանում են նրա համար պատրաստուած փեարտի կամ կեարտակի յետելը, ուր նա չէ նստում՝ մինչև որ սկեսուրը մի ընծայ չտայ: Նրա գիրկը տալիս են մի արու երեխայ, որպէսզի նա շուտով երեխայ ունենայ: Հարսի խելօքութիւնը փորձելու համար՝ կապերտի տակ չմոշկ կամ իշու համետի կտոր են դնում,

և եթէ հարսը հասկանում և վերցնում է՝ նշանակում է որ խելացի է։ Նրան շրջապատում են տան փոքրիկները, որոնց նա չամիչ, քսակներ և գուլպաներ է ընծայում։

Այս ժամանակ հարսնաղբէրը օժիտի վրայ նստած սպառում է, մինչև որ մի նուէր են տալիս նրան և ձիուց իշեցնում։

Մի քիչ յետոյ բոլորը ցրում են։ Նոյն գիշերը հարսը քնում է հարսնքրոջ հետ։

Հետևեալ օրը, կիրակի, նորից հրաւիրում են տան մեծերն, որոնց համար ճոխ սեղան են պատրաստում։ Ճաշին ընտրում են մի թամադա—սեղանապետ—որին անպայման բոլորը հպատակում են։ Սրա առաջարկութեամբ խմում են հետևեալ պարտադիր կենացները։

ա) Բոլոր ննջեցեալների և մասնաւորապէս նորապակների ննջեցեալների ողորմաթասը։

բ) Ջուխտ օջախի—երկու խնամիների—կենացը. «Աստուած էն օժախէն էս օջախին լիէր տայ!».

գ) Թաղաւորին և թագուհուն կենացը։

Կանչ .—Ճաշից յետոյ սկսում է կանչը.—Թմբկահարը թմբուկը դնում է տանուտիրոջ առաջ և կանչում։ «Քաւորը դայ!»։

Նախ քաւորը միքանի բուբլի դնում է թմբուկի վրայ։ Թմբկահարը իսկոյն բղաւում է։

Տօնը շէն, շէն կենայ, քաւոր Թիւնին (Յարութիւն) կանչեց (այսքան) մանէթ։ Իրան որդուն փոխ ինի։

—Շէն կենայ, շէն, ձախում են ամեն կողմից։

Երբ բոլոր հարսներները տալիս են իրենց նուէրները՝ գիւղի տանուտէրը հաւաքույ է բոլոր փողը, հաշում, թրմբկահարի միջոցով յայտնում բոլորին և յանձնում թագուորի հօրը։ Կանչից զոյանում է 50-200 րուբլի գումար։

Հետևեալ օրը թագուորի հայրը, եթէ զոհ է կանչի արդիւնքից՝ հրաւիրում է կանչին մասնակցողներին և հիւրասիրում հացկերոյթով։ Ճաշից յետոյ քահանան կատարում է քագվերացումը, որի միջոցին քաւորը բոնում է թագուորի ու հարսի գլխին իւր թուրն ու պատեանը խաչաձկ։

Նոյն երեկոյին նորապակները առագաստ են մտնում։ Հարսընքուրը պատրաստում է անկողինը և մօտը մեղը ու գինի դնում։ Իբրև կուսութեան ապացոյց' սաւանը խստութեամբ չէ պահանջում, որովհետև աղջկան շատ փոքրահասակ ամուսնացնելով՝ բոլորովին վստահ են *):

Երեքշաբթի օրը քեալլափաչա են եփում և առանձնապէս կանանց հրաւիրում։ Ճաշից առաջ հարսը մինի առաջնորդութամբ առաջ է գալիս և համբուրում բոլոր կանանց ձեռքերը, և սրանք գովում են նրան, որ կոյս է մնացել և օրհնում են։ Յետոյ հարսի չմոշկը դնում են մէջտեղ և բոլոր հրաւիրեալները դրամներ են ձգում նրա մէջ, որը տալիս են հարսին։ Միքանի տեղեր էլ մի խնձորի վրայ են շարում դրամները և այնպէս տալիս։

Նոյն երեկոյեան նորահարսը ջուր է տաքացնում և բոլոր տնեցիների ոտները լուանում, սկսելով սկեսարից և վերջացնելով ամենափոքր տէգրով։ Նախ լուանում է աջ ոտը և ապա ձախը։ Ամեն մինը միքանի կոպէկ են ձգում տաշտի մէջ՝ իբր նուէր հարսին։

Չորեքշաբթի առաւոտ հարսը վաղ վեր է կենում, բակը աւելում, աղբը մի անկիւնում հաւաքում և չմոշկի մինը վերան դնում։ Երբ սկեսուրը վեր է կենում՝ գովում է հարսի ջանասիրութիւնը և միքանի կոպէկ ձգում չմոշկի մէջ, որ հարսը վերցնէ և աղբը տանի թափէ։ Այնուհետև սկսում է սովորական կեանքը։ Մի երկու շաբաթից յետոյ հարսի մայրը, առնելով միքանի ֆունտ սապոն, մի սանր, մի հայելի, օսաշոր (ուսաշոր), թել, ասեղ, ճաղեր, միքանի գաթայ, մի երկու խաշած հաւ և հարսի հին շորերը՝ գալիս է լինամոնց տուն «գըլխըլըվայ»։ Այստեղ նա առաջին անգամ լուանում է հարսի գլուխը, մազերը սանրում և օրհնում։

*) Հարսը կոյս լինելիս մի արխալուղացու են նուիրում հարսնեղօրը, իսկ եթէ կոյս չէ, չեն տալիս եւ յանդիմանում են։

Թ Ա Խ Ս Հ

Սովորաբար աղջկայ կողմից շատ քիչ ծախս է լինում,
իսկ տղամի կողմից ծախսը մօտաւորապէս այսքան է լինում.

ա) Կշանդրէքին.

Մի ոչխար	3—5 ր.
Մի գլուխ շաքար	6—6 ր.
Մի ֆունտ թէյ	1—2 ր.
Մրգեղէն	2—3 ր.
Օղի և դինի	10—15 ր.
Եախս	


բ) Տարուայ ընթացքում

Հարսնացուին նուէրներ	.	.	.	10—15 ր.
----------------------	---	---	---	----------

գ) Հարսանիքին

Մի եղ կամ մի ոչխար	.	.	3—15 ր.
Գինի	.	.	25—60 ր.
Օղի	.	.	10—30 ր.
Մի մոթալ պանիր	.	.	4—6 ր.
Հաց	.	.	10—15 ր.
Թէյ և շաքար	.	.	5—7 ր.
Ճընհապահ	.	.	20—120 ր.
Հարսին դզեստ	.	.	30—75 ր.
Աթուահաս	.	.	6—8 ր.
Եկեղեցուն	.	.	1—1 ր.
Քահանային	.	.	5—8 ր.
Մանր ծախսեր	.	.	15—20 ր.

Ընդամէնը՝ 166—411 ր.



ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Զանդեզուրի շրջանի չայ կանանց դաշտանն ընդհանրապէս սկսում է 14—15 տարեկան հասակում, և արիւնահոսութիւնը տեսում է 3—8 օր: Այս միջոցին միայն հարուստներն են շոր կապում, մինչդեռ աղքատները ոչինչ չեն անում: Առաջինները օրական մի կամ երկու անգամ էլ լուացւում են և շորր փոխում:

Կերակրի և կենցաղավարութեան մէջ մի առանձին փոփոխութիւն չէ լինում այս ժամանակ: Աշխատանքն էլ նոյնն է մնում, միայն մի քանի բաներ, ինչպէս խմոր հունցել, հաց թխել, խոնցի հարել, չեն թող տալիս անելու, մեղք համարելով, որովհետև այդ միջոցին նա անսուրբ է համարում, և հաղորդութիւն առնելու էլ իրաւունք չունի:

Եթէ դաշտանն ուշանում է՝ սովորաբար ոչ մի միջոցի չեն դիմում, քանի որ օրն էլ միտները չեն լինում։ Բայց պատահում էլ է, որ լողանում են:

Ամլութիւնը աստուածային պատիժ է համարւում, ուստի և ամուլ կինը համարւում է մեղաւոր, որի պատմառով էլ դատապարտուել է այդ պատժին։ Ամուլ կանայք էլ ոչ միայն որդի ունենալու ցանկութեամբ, այլ և այդ նախատինքից ագատուելու տենչով դիմում են սրբերի միջնորդութեան, ուխտգնալով առաւելապէս ծիծեռնավանք, Տաթև, Լաստ, Պարոն-Պիժ և այլն։ Ջատերը զնդում են, թէ սրբերը կատարել են իրենց խնդիրը, տալով որդիներ, որոնց վրայ միշտ մի նշան է լինում։ Բայց երբ ուխտադնայութիւնը չէ օդնում՝ այն ժաման սկ դիմում են հետեւեալ միջոցներին.

1). Սպանած զայլի ծնոտներից թել են կապում և միջից
երեք անդամ անցնում:

2). Նոր փորած և դեռ ննջեցեալը մէջը չպահ գերեզմանի վրայով երեք անդամ ցատկում են:

3). Սպանուած մարդու գերեղմանի վրայ կանգնած՝ իրենց ձեռներին ու ոտներին ջուր են ածում և միզում:

4). Առաջին անգամ տղաբեր կնոջ տան կտրին ծածուկ միզում են:

5). Երկու ուրբաթ և մի չորեքշաբաթ, կամ երկու չորեքշաբաթ և մի ուրբաթ օր եօթը քար դնելով իրենց տակը՝ լողանում են:

Երբ առաջին անգամ զգում են իրենց յղի լինելը՝ սաստիկ ուրախանում են, և մինչև անգամ ուխտում են, որ եթէ որդի ունենան «օխտը շէն ման կեան, դռներան մատաղ հըվլքելա» :

Ակզրում ամաչելով՝ յղութիւնը թաքցնում են տան աւելի հեռու անդամներից և կենցաղավարութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չեն մտցնում, բայց յետոյ, երբ արդէն յայտնի է լինում՝ սկսում են թուլթուլիկ (արձակ) շորեր հագնել, թթու կերակրներ, մրգեղէն պահանջի, աշխատանքից խուսափել. սակայն շատ քիչ կեսուրներ այդպիսի հարսերի նազերը տանում են: Ճատ-շատերը ստիպուած են լինում սովորական կարգով աշխատել նոյն իսկ մինչև ծննդեան օրը և սահմանափակել իրենց ցանկութիւնը:

Երբ մօտենում են երկունքի օրերը՝ յղի կանալք շտապում են հաղորդուել, որովհետեւ «Համբուրելու են մահուան դռնից», և ով գիտէ, կենդանի են մնալու, թէ ոչ:

Երկունքի ժամանակ յղի կնոջը առանձնացնում են մի սենեակում, սեան յետել, և տան կանալք, տատմէրի հետ միասին, շրջապատում նրան: Սովորաբար հրաւիրում են նաև ծընդգկանի մօրը, եթէ միայն նա ևս յղի չէ:

Եթէ ծնունդը դժուար է լինում՝ կանալք և մանաւանդ տատմայրն աշխատում են թեթևացնել՝ ստիպելով ծննդկանին փչել մի շիշի մէջ, մի քիչ ման դալ:

Երբ ուշագնաց է լինում՝ ահազին աղմուկ բարձրացնելով, հրացան արձակելով և երեսին ջուր սրսկելով աշխատում են ուշքի բերել: Քաւորին էլ հրաւիրում են, որ փէշով ջուր տայ:

Եթէ այս միջոցները չեն օգնում, հասկանում են, որ սա-

տանաները հաւաքուել են և կամենում են ծննդկանի լեարդը հանել տանել: Ուստի և աշխատում են սատանաներին խաբել — վերցնում են այծի լեարդ և հերդիկից դուրս նետում: Վատանաներն էլ խաբուելով՝ առնում են լեարդը և հեռանում:

Երբ համնում է ծնելու ժամը, ծննդկանին չոգեցնում են գետնին, մի քիչ չոր խոտ ձգելով, և այս դրութեան մէջ ծընուում է երեխան: Նորածինը առնում դնում են մի մաղի վրայ, ընկերքը դասակով կտրում, և տանում շեմքի տակ, կամ մի ուրիշ տեղ խորը թաղում, որ մի գուցէ շները հանեն և ուտեն: Յետոյ մինչ ծննդկանը դեռ մնում է խոտի վրայ պառկած՝ տատմէրը լողացնում է երեխալին, վերան աղ ցանում, բալուում և գիրին առած տանում կտրովը պտոյտ տալիս, դարձնում դէպի արեգակը, աղօթում և ապա իշնում, երեխալին կրկին մաղի վրայ դնում: Ապա ծննդկանին մէջքից ներքելուանում է, անկողնում պառկեցնում և երեխալին նրա աջ կողմը դնում:

Այս անելուց յետոյ՝ տատմէրը վազում է մօտիկ աղգականներին «աչքիլուսանք», աւետում է նրանց երեխալի ծնունդը և մի քանի կոպէկ կամ ձու նուէր ստանում:

Ընդհանուր և մեծ ուրախութիւն է տիրում՝ երբ նորածինը արու է լինում. մինչդեռ աղջիկ լինելիս՝ եթէ ոչ տըշրում՝ գոնէ չեն էլ ուրախանում, և բոլորն էլ ասում են. Վստուած գլխին էլ մին տղայ տայ:

Լուրն առնելով՝ աղգականներն ու հարեւանները շտապում են ծննդկանին տեսութեան, բերելով իրենց հետ «ծննդկագաւաթ», որ բաղկանում է եղածուից, եղ ու մեղրից, և այն:

Այս միջոցին ծննդկանը, նրա հետ և ամբողջ տունը անսուրը են համարում, ուստի և զատում են ծննդկանի բաժակը, ափսէն, զդալը և այլն և չեն թոյլ տալիս, որ սա որևէ բանի զիպչի: Քահանալին էլ հրաւիրում են, որ գայ տունը լիարատէ: Եւ որովհետեւ կինը անսուրը է և չարերը հեշտութեամբ կարող են նրան խփել՝ ուստի պահպանութեան համար նրա բարձի տակ դնում են նա կարեկ, սուր, դաշոյն և այլն, իսկ կըրծքին և տեղաշորին ասեղ են շուլուում:

Առաջին օրը ծննդկանին տալիս են կինամոնով պատրաստուած թէյ և եղաձու, իսկ նորածնին շատ անդամ կաթ չեն տալիս, որպէսզի համբերող լինի:

Երկրորդ օրը տատմէրը լողացնում է երեխալին, աղից հանում, բալուլում և կրկին դնում մօր աջ կողմը, որովհետեւ աջ կողմում գտնուում է բարի հրեշտակը, մինչդեռ ձախում չար հրեշտակը: Այնուհետեւ միայն երկու օրը մի անդամ են լողացնում երեխալին, և օրը երկու անդամ բալուլը փոխում:

* * *

Միւրութիւնը կատարում է ծննդեան 3—7 օրը: Տատմէրը տանելով քաւորին մի ափսէ փլաւ, վերան մի խաշած հաւ դրած հրատիրում է գալ երեխան կնքելու: Նա էլ մի քանի կոպէկ և կամ ձու, աղ է տալիս տատմօրը նուէր: Որոշեալ ժամին քաւորը վերցնելով կէս արշին կտաւ, (որ անց են կացնում երեխալի գլուխը և կոչում է կնկուղ), ինչպէս և մի արշին չիթ, կամ թաւշեայ կտոր և կամ մի «եալուխ» գնում է եկեղեցի: Տատմէրն էլ երեխալին, երբեմն մի քանի բարեկամ կանանց հետ, տանում է եկեղեցի, ուր քահանան կատարում է մկրտութեան խորհուրդը: Սովորաբար քահանան ինքն է ընտրում երեխալի անունը և շատ քիչ դէպքերում իրենք ծնողներն են որոշում:

Երեխալին տալով քաւորի գիրկը, քահանան շուրջառը ձգած, շարական ասելով՝ բերում է տուն, որ հաւաքուած են լինում բարեկամ տղամարդիկ և կանալք: Այստեղ, ծննդկանի կողքին դնում են մի մաղ, վերան մի հաց ձգուց և երեխան դնում վերան: Երբ քահանան աղօթքը վերջացնում է՝ քաւորը վերցնում է երեխալին և տալիս ծննդկանին: Սա էլ խոնարհում, համբուրում է քաւորի ոտը, յետոյ բալուլը և վերցնում երեխան, դնում իւր աջ կողմում: Իսկ քահանան առաջարկում է Աւետարանը համբուրել և խաչհամբոյը ձգել: (Այս միջոցին հանդիսականներից մի քանիսը հեռանում են, որ խաչհամբոյը չտան):

Անմիջապէս տղամարդիկ առանձին հացի են նստում: Մա-

տուցանում են 2—3 տեսակ կերակուր: Յատուկ այս դէպքերի համար որոշուած կերակրներ չկան: Հացից յետոյ տղամարդիկը բարեմաղթելով նորածնին և նրա ծնողաց երկար կեանք և երջանկութիւն՝ ցրւում են: Այնուհետև կանալք են նստում հացուտելու:

Եթէ նորածնը առջինեկ է՝ քաւորին մի արխալուղացու ընծայ են տալիս. սա էլ ծննդկանին է մի բան նուիրում:

Չորս օրից յետոյ նորից գալիս է տատմէրը և երեխալին մեռոնջրից հանում—լողացնում է նրան մի մաքուր ամանի մէջ և ջուրն ածում օջախը կամ թոնիրը, իսկ, եթէ շատ է՝ նաև ղետը: Լողացնում է նոյնպէս ծննդկանին, մեռոնջրից խառնելով նրան լողացնելու համար տաքացրած ջրի հետ: Յետոյ իրը վարձ ստանում է հնգական ֆունտ աղ ու ալիւր, 2—3 ֆ. ձաւար, մի ֆունտ բրինձ, և զուցէ մի քանի կոպէկ, շնորհակալ է լինում տնեցիներից և գնում: Տատմէրին տուածները նախապէս պտտեցնում են ծննդկանի զլխով:

Մեռոնջրից հանելուց յետոյ առաջին անգամ դնում են օրօրոցում, որի կամարից կապում են զանազան ուլունքներ, երեխալին չարերից և չար աչքից աղատ պահելու յուսով, և մի քանի վէճեր ու խաղալիքներ, երեխալին զբաղեցնելու նպատակով:

Այնուհետև ծննդկանը մի քանի օր ևս պառկած է մնում. ապա վեր է կենում և սկսում է զբաղուել տնալին դործերով, սակայն զգուշանում է արև տեսնելուց, որ տեսում է 3 շաբաթ՝ եթէ նորածնը աղջիկ է, և 4 շաբաթ՝ եթէ տղայ: Այս ժամանակամիջոցն անցնելուց յետոյ, ծննդկանը լողանում է՝ այդ նպատակով պահած մի սրուակ մեռոնաջուր խառնելով ջրի հետ, և ապա թէ դուրս է գալիս, նայում է արեգակին և խաչակնքուում:

Երբ ծնելուց յետոյ առաջին անգամ նա գնում է՝ աղբիւրից չուր բերելու՝ մի շամփուր է ձեռն առնում, և ցորեն ու բրինձ ածում աղբիւրի ակը:

Երեխալի խնամատարութիւնը ամբողջովին մօր վերայ է՝ թողած: Նա է կերակրում նրան իւր ստինքով 2—3 տարի:

իսկ եթէ նա կաթ չէ ունենում՝ գործ է ածում կովի կաթը, հետը փոքր ինչ շաքար խառնելով։ Ոմանք էլ ոչխարի կաթ են գործ ածում, հետը մի քիչ ջուր խառնելով։

Երբ ուզում են երեխային ծծից կտրել՝ ցեխ, կամ կուպը են քսում ստինքին, որպէսպի երեխան զզուի, և այս ժամանակ շարունակ մրգեղէն են տալիս նրան։

Առաջին ատամները հանելիս «կեղքահատիկ» են անում։ — Խաշած ցորենի հետ խառնում են շաքարեղէններ և ածում երեխայի զլիսին։ Այս միջոցին երեխայի առաջ մի դանակ և մի սանր են դնում գուշակութեան համար, ինչպէս Սիսիանում։ Եթէ երեխան առաջ դանակը վերցնէ՝ գուշակում են, որ եղքայր է ունենալու, իսկ եթէ սանրը՝ քոյր։

Որպէսպի երեխան շուտով ոտք ենէ մի փայտ են տնկում և վերան մի ուրիշ փայտ անց կացնում, այնպէս որ պտոյտ գալ. յետոյ երեխային բռնել են տալիս այդ փայտից և պտոյտ ածում։ Բայց եթէ այդ չէ օգնում և երեխան ձրկար ժամանակ ստք չէ ելնում նրան տանում են Դիլծեռնավանք, Ագնակ ստք քարի առաջ մոմ վառում, մի մեխ կամ մի ձու դնում քարի տակ և երեխայի ոտներին ջուր տնում։

Լուսնոտ երեխային տանում են բոյաճու (կտորեղէն ներկող) խանութը, մի վառած մոմ տալիս ձեռքը և ստիպում նայել ներկի կարասի մէջ։ Այս միջոցին բոյաճին էլ աղօթում է, և երեխան, այռում են, լաւանում է։

Երբ երեխան կոխուում է, այսինքն լղարում և նուազում է՝ նրան անց են կացնում սպանած դալլի ծնօտներից կապած կաշու միջով։

Նոյն սպատակով չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը երեխային տանում են անճաշակ մեռնողի գերեզմանի մօտ, բռնում են նրան այն տեղերում, որտեղ ննջեցեալի ոտներ, գլուխը և սիրոն են ընկնում, և երեքական անգամ ջուր են ածում երեխայի զլիսին։

Եւ կամ երեխային բռնում են սատկած շան կամ կատուի վերայ և զլիսին ջուր ածում։

Երեխայի փորը ցաւելիս՝ տրեխի քողը նրա սրտի մօտ

քռնած երեք անգամ կապում են և արձակում։ Սա կոչւում է «զոլինջ»։

Եթէ երեխան լալկան է՝ կրծքին սատկած իշլ կաշի են դնում։

Եթէ երեխան քուն չէ լինում օձի շապիկ են դնում նրա բարձի տակ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Զանգեզուրում ընտանեկան կեանքը շատ չէ տարբերուո՞ Սիսիանի ընտանեկան կեանքից. միայն այստեղ «նահապետական գերդաստանը» աւելի արագութեամբ է քայքայուուն, տեղի տալով «ընտանիքին»։ Այս քայքայուող, նահապետական գերդաստանի մէջ այլևս չէ թագաւորում նախնի սէրն ու համերաշխութիւնը։ Հայրը թէև համարում է գերդաստանի մեծ, թէև նա կատարեալ իրաւունք ունի գերդաստանի իրաքանչւոր անդամի և բոլոր ստացուածքի վրայ՝ բայց այժմ նա շատ դէպքերում ստիպուած է գործ գնել իւր այդ իրաւունքները, կամաւ կուրանալ և խլանալ, որովհետև գերդաստանի անդամները այլևս նախնի հնագանդութիւնը չեն ցոյց տալիս. ինքնուրոյն և ազատ լինելու ձգուումը այժմ շատ վաղ է զարգանում գերդաստանի փոքր անդամների մէջ, մանաւանդ երբ սրանք միքանի տարի պանդիստական կեանք են վարում։

Միւնոյն բանն է և գերդաստանի մօր վերաբերութեամբ։ Թէև նրա մէջ է կենդրոնանում տան ներքին կառավարութիւնը, թէև նրա ձեռին են տան բոլոր բարիքների բանալիները, թէև նա է կոչուած հրամայելու, զործի դնելու հարսներին ու աղջեկներին՝ բայց և այնպէս շատ բաներում նա այժմ ստիպուած է զիջել իւր հարսներին և նրանց խօսքովը նստել կանգնել։

Այսպիսի գերդաստանում կեանքը հետևեալ կերպով է ընթանում։

Առաւոտը վաղ, արշալուսին, փոքր հարսը վեր է կենում և սափորն ուսին գնում է աղբիւրից ջուր բերում. ապա աւելում է բագր, անասունների աղբը ձեռքով շաղախում, «քեարմա» (քակոր) շինում և խփում պատերին: Ցետոյ լուացում է և գնում սկեսուրին արթնացնում, շորերը հադցնում, ձեռին ջուր ածում, որ լուացուի, ապա մի ներքնակ է ձգում և ճախարակը մօտը գնում, որ նստի մանէ: Պառաւը երեսը լուանալուց յետոյ դառնում է դէպի արևելք և ցած ձայնով աղօթում, ապա միքանի անգամ խաչակնքում և նստում ճախարակ մանելու: Անմիջապէս փոքր հարսը սկեսրայրի շորերն է տալիս և օգնում նրան հագնուելու. յետոյ նրա ձեռին ջուր ածում, երեսսրբիչ մատուցանում, և երբ նա սրբում է՝ առնում է երեսսրբիչը, համբուրելով սկեսրայրի ձեռքը:

Այս միջոցում գերդաստանի միւս անդամներն էլ վեր կացած են լինում, միշտ կանալք տղամարդկանցից առաջ: Խակոյն փոքր հարսը հաւաքում է բոլորի անկողիները և աւելում սենեակը:


Տղամարդիկ, եթէ ձմեռ լինի՝ անմիջապէս գնում են գոմ, անասուններին դարմանելու, իսկ եթէ ամառ՝ մի-մի բաժակօղի են խմում, մի կտոր հաց ու պանիր դնում զրպանները և գնում հանդը աշխատելու:

Միքիչ յետոյ սկեսուրը պատուիրում է մեծ հարսին՝ միտեսակ կերակուր եփել, որ սովորաբար լինում է՝ կարտոֆիլ, մաշ, (լոբի), քշովան (քաշովի փլաւ), մսով բողբաշ, փլաւ, հելատ (թանով սպաս), կաթնատ (կաթնով սպաս) և այլն:

Ժամը 8-9-ին կերակուրը պատրաստ է լինում, և փոքր հարսը տղամարդկանց համար «Հաց է դնում»—դետնին սրիռում է մի սփռոց, հացեր, գդալներ շարում, մի շոր էլ մի անկիւնը դնում ձեռները սրբելու համար:

Կախ տան մեծը նստում է «հացի գլուխը», այսինքն սեղանի վերի, պատուաւոր ծալը, յետոյ տղամարդիկն երեք տարեկանից բարձր արու երեխաները՝ աւագութեան կարզով: Երբեմն գերգաստանի մալըն էլ է նստում ամուսնու և որդիների հետ հաց ուտելու, սակայն նրանցից միքիչ հեռու, և ուտելիս էլ

շալը միքիչ առաջ է քաշում և դէպի յետ դարձած ուտում, ամօթ համարելով ուղղակի նրանց ներկայութեամբ հաց ուտելը. նա սովորաբար հարսների հետ է հաց ուտում: Տան ձառան էլ տղամարդկանց հետ միասին է նստում: Փոքր հարսը մատուցանում է կերակուրը կամ մի մեծ ամանով, որի միջից



բոլորն էլ ուտում են, և կամ իւրաքանչիւրին առանձին ափսէավ:

Ամառը տղամարդիկ սովորաբար հանդումն են հաց ուտում, և միշտ փոքր հարսն է նրանց հաց տանողը:

Տղամարդկանցից յետոյ հաց են ուտում կանալք: Սովորաբար սկեսուրը նստում է ամենալաւ տեղը, նրան շրջապատում

Են հարսները, իսկ փոքր հարսը նստում է փոքր ինչ հեռու, մի անվիւնում, կարմիր չարդաթով քողարկուած: Հաց ուտելիս՝ հարսները ձեռով բռնում են երեսի մօտ լաչակից և միքիչ առաջ քաշում, որպէսզի սկեսուրը չտեսնէ, թէ ինչպէս են նրանք պատառը բերանները տանում: Իսկ փոքր հարսը փոքր ինչ քարձրացնում է չարդաթը և նրա տակից գդալը բերանը տանում:

Հացի ժամանակ փոքր հարսն է ծառայում, հացից յետոյ Էլ նա է ամանները հաւաքում, լուանում: Ակեսուրը դարձեալ նստույ է ճախարակը մանելու. աւագ հարսը սանտեր քով բռւրդ է զգում և կամ ճախարակ մանում *): Երկրորդ հարսը, որ արդէն կովերը կթած է լինում՝ զբաղում է կար ու կարկատանով: Միւսները, եթէ կան՝ կապերտ, զորդ, գուլպա են զործում և այլն: Առհասարակ կանայք կատարում են հետեւեալ աշխատանքները. — Եւ եխաններին խնամել, կերակուր եփել, հաց թիւել, ճախարակ մանել, շալ, գուլպալ, կապերտ, զորդ զործել, իւղ, պանիր շինել, կարել, կարկատել, ջուր բերել, կարտուֆիլ, լոբի ցանել, պտուղներ, նոյնպէս և կարտոֆիլ, լոբի, կանաչեղին քաղել, քաղհանք անել, քակոր շինել, խուրձ կրել, կալը կալսել, և այլն:

Իսկ տղամարդիկ—վար անել, հունձ անել, փայտ բերել, կոտրել, թրիք քցել, անաստնները դարմանել, բեռնակրութիւն անել, տրեխ կարել: Կան և արհեստներով պարապողներ:

Պէտք է ընդհանրապէս ասել, որ թէ տղամարդիկ և թէ մանաւանդ կանայք շատ աշխատասէր են: Հազիւ է պատահում, որ կինը պարապ մնայ՝ թէ փողոցում, թէ մինի մօտ հիւր եղած միջոցին՝ նա գուլպա է զօրծում և կամ կար անում:

Կէտօրին նորից հաց են ուտում, բայց այս անգամ կերակուր չէ լինում, այլ պանիր ու հաց կամ հաց ու պիխի, ճրիւթը (աղը դրած ճակնդեղ) և այլն:

Նոյն աշխատանքները շարունակում են մինչև երեկոյ: Երբ հնչում են եկեղեցու զանգակները՝ փոքր հարսը նորից ա-

*) Ճախարակ մանելը կազմում է սկեսուրի եւ աւագ հարսի արտօնութիւնը. միւս հարսները իրաւունք չունին մանելու:

աելում է տունը և կրակ անում. մեծ հարսը սկեսուրի հրամանով մի, երեմն էլ երկու տեսակ կերակուր է եփում:

Երբ տղամարդիկ վերադառնում են հանդից և կամ, եթէ ձմեռ է, կերակուր են անասուններին՝ նոյն կարգով նստում են հաց ուտում, և եթէ ամառ է՝ անմիջապէս պառկում են քնելու. իսկ ձմեռները բոլորում են քուրսու շուրջը և միքիչ զրոյց անում: Տան մեծը նստում է ամենալաւ տեղը, ուր, դուռը բաց անելիս, քամի չէ փչում. նրա մօտ նստում են որդիները՝ աւագութեան կարգով. կանայք՝ միքիչ հեռու: Ճրագկալին գնում են քիւրսու վրայ, որպէսզի աւելի բարձր լինի. իսկ ճրագկալի վրայ վառում է ճրագը սև նաւթով: Հարուստները լամպ են ունենում, որ կախում են քիւրսու վերևից:

Խօսում են միայն տղամարդիկ, որովհետեւ կանայք տղամարդկանց ներկայութեամբ իրաւունք չունին խօսելու: Բացի զրանից՝ հարսները հարսնութիւն են անում—չեն խօսում—սկեսրալի և մեծ տէզրերի հետ մինչև մահ, սկեսուրի հետ՝ առնուազը տաս տարի, (բացի առաջին հարսից, որ նրա անձնափոխանորդն է համարւում, և հարսնութիւն է անում մինչև երկրորդ հարս բերելը): Փոքր տէզրերի և տալերի հետ՝ կէս տարուց մինչև չորս տարի: Երբ հարկ է լինում խօսելու՝ զիմում են միմիկալի, կամ փոքր տալի միջնորդութեան և կամ ցանցը, բայց լսելի ձայնով իրենց ասելիքն ուղղում են փոքր երեխաններին, որոնք երեմն թողթովել անզամ չեն կարողանում: Բայց հարսները խօսում են միմեանց հետ, միայն ոչ սկեսուրի և կամ մեծ հարսի ներկայութեամբ, որովհետեւ բացի սկեսուրից մեծ հարսի առաջ էլ հարսնութիւն են անում:

Երբ հասնում է քնելու ժամը՝ փոքր հարսը ձգում է անկողինները զետնին, նախապէս թաղիքներ ձգելով: Թոնրի մօտ, ամենալաւ տեղը ձգում է տան մեծի և նրա կնոջ անկողինը, սրա մօտ աւագ որդունը և այլն, այնպէս որ մինչև անգամ այստեղ էլ աւագութեան կարգը պահպանում է:

Նախ հանւում է տան մեծը, երեմն աղօթքներ շշնչարութիւն: Նրան օգնում է փոքր հարսը, հանելով շորերը և իւտ անելով տրեխները: Նրանից յետոյ հանւում է աւագ որդին, յետոյ միւ-

սր. և քանի որ աւագը չէ պառկել՝ կրտսերը իրաւոնք չունի։ պառկելու։ Եթե արական սեռի բոլոր անդամները պառկում են՝ նոր սկեսուրը փոքր հարսի օգնութեսցիք սկսում է հանուել և պառկել ամուսնու մօտ։ Յետոյ միւս հարսներն են պառկում, դարձեալ աւագութեան կարգով։ Առհասարակ կանայք պառկում են իրանց ամուսինների հետ միևնուն անկողնում, և թեթէ միայն մի երեխալ ունին նրան էլ իրանց մօտ են առնում, իսկ եթէ երեխանները շատ են՝ սրանց համար իրանց անկողնի մօտ յատուկ մի անկողին են ձգում և բոլորին միասին պառկեցնում։ Բոլորից յետոյ փոքր հարսը հանգցնում է ճրագը և զգուշութեամբ հանուելով՝ պառկում ամուսնու մօտ՝ տան ամենահեռու անկիւնում։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ¹⁾:

Ականջացաւ։—Միքանի ձուի դեղնուց մի պղնձէ ամանով թեք կերպով դնում են կրակի վրայ։ Դեղնուցից յառաջանում է խող, որ ապակեայ սրուակի մէջ ածած պահում են, և հարկաւոր միջոցում 4-6 գաթիլ ածում են ցաւող ականջի մէջ։

Նուռը տաք մոխիրի մէջ խորովում, միջից կիսում և տաք տաք դնում են ցաւող ականջի վրայ։

Դիմախոտի ծուխը են ականջի մէջ, որ ցաւը դադարի։

Ականջի շարաւ։ Եթե ականջից շարաւ է հոսում՝ ասում են ականջը ծնել է։ Հին ժամանակներում այդպիսի դէպքերում ականջների մէջ մեռոն էին կաթեցնում։

Ամուռուքիւն։—Ջիբը կոնաձեւ կտրելով դնում են նստատեղիում։

Այրուածք։—Սպիտակ հոլլը ջրով շաղախում և դնում են այրուած տեղի վերան։

Խորոված կարտոֆիլը մանրելով դնում են այրուած տեղի վրայ։

Աշխացաւ։—Եթէ աչքը կարմրել, արիւնով լցուել է՝ ոչխարի սպիտակ թռքից մի կտոր դնում են աչքի վրայ և մի քանի անգամ փոխում։

¹⁾ Բացի իմ հաւաքածից օգտուել եմ նաև պ. Տէր Գէորգեանի իմ խրնորով հաւաքած դեղերից և բժ. պ. Գեղեգանովի՝ „Յանցուրքական պատմութեան մասին” աշխատութիւնից։

Կապուտ քարը (մէծանակ կյորօս) այրելով և փոշիացնելով դուծում են ջրի մէջ և կաթեցնում ցաւող աչքի մէջ։

Կծու-խոտ քոյսի արմատը եփում են և նրա ջրի մէջ բամբակ թաթախում և չորացնում են. ապա աչդ բամբակը թրջում են կնոջ կաթի մէջ և դնում ցաւող աչքի վրայ։

Խորոված ձուն երկու կտոր անելով շիբի (քաշուկ) մանրունք են ցանում վերան և բամբակով դնում ցաւած աչքի վրայ։

Առամնացաւ։—Փայտէ գդալի կոթը տաք մոխիրի մէջ սաստիկ տաքացնում և դնում են ցաւող ատամի վրայ։

Մեխսակը ծեծում, ցանում են բամբակի վրայ և դնում ցաւող ատամի վրայ։

Սխտորը ծեծում են, հետը աղ և խոզի ճարպ խառնում և դընում ատամի վրայ։

Եթէ երեսն ուռչում է՝ գարու ալիւրից եփած խաշիլը տաք տաք քրաշում են մի շորի վրայ և դնում այտին։

Արիւնիսուրեան դէմ գործ են ածում. վառած շորի մոխիր, կենդանիների աղը, ջրով կամ մէզով թրջուած։

Բարակացաւ։—Մեծ քանակութեամբ իջի կաթ են խմում։ Բերանի բորբոքում։—Պղպեղի փոշուց մի թէցի գդալի չափ ածում են մի բաժակ ջրի մէջ և նրանով բերանը ողղուած։

Բոր։—Սխտորի գլխով տրորում են չորացած բորը։

Գլխացաւ։—Գինու թունդ քացախով տրորում են գլուխը։—Սխտորը ծեծում են, աղ ցանում, վերան թունդ քացախ ածում և կապում ճակատին։—Թթու դրած վարունկը կիսում, դնում են ճակատին։

Գորտնուկ։—Օձի կաշու մի կտոր են տալիս ընդունելու։ Երեսի ղեղին վեր։—Առաւելապէս փոքր երեխաներին է պատահում։—Նուան կճեպը կամ դեղին ներկած բրդի թելը այրում են, մոխիրն ձէթով շաղախում և դրանով օծում վէրքը։

Խաւարցք։—Առաւելապէս երեխաներին է պատահում. կարմրում է գլխի կաշին և ջրակալում. 1/2 ֆ. լուացքի սապոն, 1/2 ֆ.

և նաւթ, 2 գլուխ սոխ և փոքր ինչ ոչխարի դմակ խառնում են միասին, եփում և կտավի վերայ քանելով կապում գլխին, նախապէս գլուխը ածիլելով և լուալով։

Խիարուկ։ (Եօօթե առ սահք)։—Կթաւատի փոշին կաթով եփում և տաք-տաք կապում են ուռուցքի վրայ, և այս բանը կրկնում են՝ մինչև որ ուռուցքը հասնում է։ Այս միջոցին ածիլով ծակում են ուռուցքը, որ շարաւը հոսի. Յետոյ մեղրամոմի, այծի ճարպի և ձէթի հաւաքաչափի խառնուրդ են պատրաստում, մէջը աւելացնում են եր-

կու մսխալ քափուրու փոշի և ապա սրանից պատրոցներ շինելով՝ դնում վէրքի մէջ, որպէսզի բոլոր շարաւը ծխի:

Ծաղիկ.—Ա՛չ մի դեղ չեն անում, այլ միայն աշխատում են սուրբ մնալ, առագաստ չմտնիլ, տունը հում միս չբերել, չկոռուել, չհայոցել և ապն:

Կարմրուկ.—Ա՛չ մի դեղ չեն անում, միայն կոկորդի վրայ ուռուցք նկատուելիս՝ կթաւատի փոշին կաթով եփում և դնում են վերան:

Կատաղած շան կծած.—Մի շիշ գինու մէջ $\frac{1}{4}$ ֆունտ սխտոր եփելով՝ խմացնում են:

Կարիճի կծած.—Դոշաբը—որ պատրաստում են խաղողի հիմքը եփելով—ջրի մէջ լուծում և տալիս են խմելու:

Կոկորդացաւ.—Խար-թութը երկար եփում են, շորի վրայ քաշում և կապում:

Կողքի ծակոց (կօլոտ ԵՅ ծօկահԵ).—Մի բաժակ գինու մէջ ածում են մի բուռ չորացած վարդ և մի թէշի գդալ աղ, որ երկար եփելով քաշում են մի շորի վրայ և դնում ցաւած տեղի վրայ:

Ճիբի մանրունքը կաթի մէջ շաղուելով՝ դնում են վէրքի վերայ:
Հաղացաւ.—Ճղային հիւանդին ձեռքից բռնած պար են ածում դաւուլ-զունի ներդաշնակրութեամբ և այս այնքան երկար, մինչև որ հիւանդը բոլորովին անզգայացած վայր է ընկնում:

Մայասիլ.—Սափրից ածելիով կտրում է դուրս եկած պտուկները և վէրքի վերայ սովէյմանու (Folia Sonnae) ածում հիւանդներն զգուշանում են ողելից խմէչքներից և թթու կերակրներից:

Միզարգելուքիւն.—Նւելուկը խաշում են և տաք-տաք դնում որովայնի վրայ:

Մոլոքոր.—Հիւանդին փաթաթում են մետաքսէ սպիտակ շորի մէջ և շուտ շուտ վերան սառեն ջուր են ածում:

Յօդացաւ (քրեմատիզմ).—Թղիի մէջ կարմիր պղպեղ (սուրցուկան պերեց) են ձգում և դրանով տրորում են ցաւող անդամները:

Ճան կծածի դէմ.—բակլան կամ լոբին կիսում և դնում են վէրքի մէջ:

Կծող շան մազը վառում և մոխիրը ցանում են կծած տեղի վրայ:

Ճարաւ.—Ճեխնի բոյսի մոխիրը խառնում են գինու հետ և շորի վրայ քաշելով դնում են շարաւոտ վէրքերի վրայ:

Վէրքերի շարաւը մաքրելու համար ռարա-ռարա (սև ծառ) կոչուած ծառի արմատը երկար եփում են, ապա ջրի մէջ ալիւր խառնում և դնում վէրքի վրայ:

Ոսկրացաւ.—Մորենին արմատով հանում, ածում են տաք

թոնրի մէջ, որի ափին պառկեցնում են հիւանդին, նախապէս անկողին ձգելով: Ապա թոնիրը այնպիս են ծածկում, որ մորենուց բարձրացած գոյորշին անցնի անկողնի մէջ և քրտնացնէ հիւանդին:

Մորենին եփում են և ջրով լողացնում են հիւանդին:

Ցաւող մասերը արջի ճարպով օծում են:

Նոր մորթած այծի մորթու մէջ փաթաթում են երկու, երեք օր:

Տաք աղիւս կամ տաքայրած աղ են կապում ցաւած տեղերին:

Պղպեղը ածում են թունդ օղի մէջ և 2-3 օր պահելուց յետոյ դրանով տրորում են ցաւող մասերը:

Սպիտակ նաւթ են քսում:

Ոսկրի կոտրուած.—Գիւղական ոսկրաբոյցը ուղղում է կոտրուած ոսկորը, յետոյ անլուաց կտաւի մի կտորի վրայ մի քանի ձուի գեղնուց և փոշիայրած խունկ քսում և նրանով փաթաթում է կոտրուած տեղը: Ապա ուռենու ծառից պատրաստած չորս փոքրիկ տախտակներ դնում է կոտրած ոսկի շուրջը և թելով կապում: Այսպէս մնում է 4-5 օր, ապա նորից քանդում են և նոյն դեղը կրկնում:

Հիւանդին լաւ սննդում են և յաճախ ոչխարի ոտներից և գլխից պատրաստուած խաշ ու գինի տալիս:

Ուռոյցք Ամօրթիի.—Կթաւատի փոշին կաթով եփում են և շորի վրայ քսած՝ կապում ամորձիքին:

Քարդուած (յամոն).—Նոր մորթած այծի մորթով փաթաթում են ջարդուած տեղը: Թարմ մսով փաթաթում են:

Գարու թելով քացախի և ջրի հետ խառնելով քաշում են շորի վրայ և կապում են ջարդուած տեղը:

Ճերմ.—Տանու փիպերտից (գրան օգործիան) և բրնձից սոանց աղի արգանակ են եփում և ուտեցնում հիւանդին:

Մէծ քանակութեամբ ձմերուկ են ուտեցնում, որպէսզի ջերմութիւնն իջնի և ծարաւն անցնէ:

Ճրգողութիւն.—Չորացրած վարդը եփելով տալիս են խմելու:

Մրի կորած.—Մի թէշի գդալ պղպեղի փոշին խառնում են նոյն չափ մեղրի և մի ձուի գեղնուցի հետ, շաղախում և կտաւի վրայ քսած կապում են վէրքին: Սոկորաբար վէրքը չեն լուանում, որպէսզի «ջուր ըրգողանայ»:

Սէկպ միզելու դէմ.—Ստէպ միզելու հիւանդութիւն ունեցողին ուտեցնում են խոզի եփած լեարդը կամ խորոված մուկ (ծառուկ խորովելով):

Վախ.—Մօր մեզը տալիս են վախեցած երեխային ընդունելու:

Տենդ.—Մի քանի փունտ շոր եփում են ջրի մէջ ապա մզում,

կորիզները հանում և դրանով տրորում են հիւանդի մարմինը և աշխատում են դրանով քրտնցնել:

Քամած մածուն են քսում մարմնին:

Ուռենու կանաչ ճիւղերը ջրի մէջ եփում են և հիւանդին լողացնում այդ ջրով:

Տրիպերի ժամանակ մեծ քանակութեամբ ձմերուկ են ուտում, որպէսզի շատ միզեն:

Ցրտի տարած.—Փորած կաթը քայախի հետ խառնելով քսում շնորի վրայ և դնում ցրտի տարած մասերի վրայ:

Քարի խինան թրցելով դնում են ցրտի տարած տեղը:

Փորդու ծաւրիւն.—Սև թաղիքի կտորը թրցելով զաթրանի (մազուր) մէջ՝ դնում են նստատեղի անցքում և ժամը մի անգամ փոխում:

Թերխորով ձուն կխորդի (չերմիլինե օքնակ) փոշու հետ խառնելով ուտեցնում են:

Պինդ եփած ձու են ուտում:

Փորացաւ.—Պղպեղը օղիի մէջ ածում, խմում են: Կինեմոնը, պղպեղը և զանձաֆլը ջրով եփում են և խմում:

Փոս. (պարած). Կաւը տափակայնում են, վառարանում կարմրացնում և դնում են գլխի քոսերի վրայ:

Գոմէշի մածնի մէջ ծծումբի փոշի խառնելով ուտեցնում են, յետոյ հինգ մաս խողի ճարպի մէջ լուծում են մի մաս մնդիկ և սրանով օծում քոսութի մարմինը և անմիջապէս տաք թոնրի մէջ իջեցնում և այնտեղ մի քիչ պահելուց յետոյ լողացնում:

Ցրտին բերելի.—Քրտինք բերելու համար գործ են ածում մանուշակի ծաղիկներից պատրաստուած թէյ, կամ նրանից և բընձից եփած արդանակի: Եւ կամ խունը բոյսից պատրաստուած թէյ:

Օձի կծած. —Մեծ քանակութեամբ կոփի կաթ են խմացնում:

Վառած աբեթով այրում են կծուած տեղը:

Հրաշէկ երկաթով այրում (բառած) են կծուած տեղը:

Վ Ա Հ, Թ Ա Ղ Ո Ւ Մ Ն Ե Ւ Մ Ե Ր Ե Լ Ո Յ

Զանգեզուրի ժողովորդն էլ խոր համոզուած է, որ մարդու ճակատին դրուած է նաև նրա մահուան օրը: Նա հաւատում է, որ ոչ մի հանգամանք, ոչ մի միջոց չեն կարող փո-

խել այդ նշանակուած ժամը, ուստի և մեծ մասամբ անխնամ, ճակատագրի բախտին է թողնում հիւանդին:

Երբ հոգեւարքի րոպէն հասնում է՝ ամենայն փութով կանչում են քահանային, որ հաղորդութիւն տալ: Յետոյ վերցնում են բարձերը, որպէսզի հոգին հեշտութեամբ աւանդէ: Եւ մինչդեռ շրջապատողները լաց են լինում՝ աւելի սրտոտ մէկը փակում է մեռնողի աչքերը. իսկ եթէ աչքերը բաց են մնում՝ ցեխ են քսում: Յետոյ ձեռքերը խաչածե դնում են կրծքին և մի թաշկինակ կապում կզակովը, որպէսզի բերանը ըբացուի: Ոտների բթամատներն էլ բամբակի թելով կապում են: Ապա դարձնում են դէպի արևելք և մի շոր ձգում վերան:

Այս ժամանակ հաւաքում են ազգականները, լաց լինում և միխթարում մօտիկներին: Հրաւիրում է քահանան, որ օրհնում է ջուրն ու պատանը: Ննջեցեալին լողացնում են հարեւանները, եթէ տղամարդ է՝ տղամարդիկ, իսկ եթէ կին՝ կանայք, ձմեռը սենեակում, իսկ ամառը գուրսը՝ կապերտներով մի անկիւն շրջափակելով: Տաշտի երեսին մի տախտակ են դընում և սրա վրայ երկարացնում ննջեցեալին, երեսը դէպի արևելք դարձրած: Երկու հոգի, ձեռներին քսակներ անցկացրած, «Աստուած Հոգին լուսաւորէ» ասելով՝ լուանում են նախ գլուխը, յետոյ կուրծքը, մէջքը և ապա աջ և ձախ ոտերը: Աելացած ջուրը թափում են և ամանը կոտրում: Յետոյ, եթէ ննջեցեալը երեխայ է՝ ձեռին մոմ են տալիս, որովհետև «նազուսի պէս մաքուր է»: Եթէ չափահաս և հարուստ է ննջեցեալը՝ շապիկ և վարտիկ են հագցնում, շապիկ վրայից, գոտուտեղը բամբակի թել կապում և ապա պատանքում. իսկ եթէ աղքատ է՝ ուղղակի հասարակ կտակից պատանք են կարում և պատնքում: Ճատ հարուստները դագաղ են պատուիրում, իսկ միւսներն ընդհանրապէս բերել են տալիս եկեղեցու նաժը և ննջեցեալին կապերտի մէջ փաթաթած դնում նրա մէջ: Զէյվացիները, իրենց գիւղում եկեղեցի չունենալով և դէպի Ծիծեռնտվանք տանող ճանապարհը սաստիկ վատ լինելով՝ նաժի փոխարէն երկու ձող են գործածում, որոնց մէջ մի թոկ է կապկապուած և վերան մի կապերտ ձգուած: Ննջեցեալը նոյն-

պէս կապերտի մէջ փաթաթած՝ դնում են այդ ձողերի մէջ և կապում, ապա ուսերին առնում և տանում ՚Ծիծեռնավանք, մի ժամից աւելի քայլելով։ Թէ դագաղի և թէ նաժի երեսին դիազարդ (Երեսիա) են ձգում, որ երիտասարդի համար կարմիր գիւղի չժից է լինում, միջահասակինը՝ սպիտակախառն, սևագոյն կտորից, իսկ ծերինը՝ լաստիկ շարժ—սև կտորներից։

Հարուստ ննջեցեալին միքանի օր տանը պահում են և ապա եկեղեցի տանում, իսկ աղքատին իսկոյն և եթ թաղում են, առանց նոյնիսկ եկեղեցի տանելու։

Ննջեցեալին տնից վերցնելիս նրա տեղում մի քար են դնում, որպէսզի նրա լիշտակը հաստատուն մնայ այդ տնում։

Թրեթէ բոլոր զիւղերում կան յայտնի լալկան կանալք, որոնք հրաւիրում են ննջեցեալների վրայ լաց լինելու։ Սրանք թէ տանը և թէ եկեղեցում, շրջապատած ննջեցեալին լալիս են և բարձրաձայն՝ երգելով թւում նրա գործերը, գովում նրա վարք ու բարքը։ Սովորաբար մօտիկներից մին «մալը ողբոց» է դառնում, նստում է ննջեցեալի սնարքի մօտ, լալիս և երգում, իսկ միւսները կոկնում են նրա ասածները։

Կանալք ուղեկցում են ննջեցեալին մինչև եկեղեցի։ Եթէ ննջեցեալը նշանադրուած երիտասարդ է եղել՝ եկեղեցի են բերում նաև նրա հարսնացուին, գլխին սև չարսաւ ձգած։ Լալկան կանալք վերցնում են նշանի մատանին և նշանադրութեան ժամանակ տրուած եախի ապասիները, որոնք մի սև թելի վերայ են անցկացրած՝ լալով ու երգելով երիտասարդի կողմից մնաս բարով են ասում հարսնացուին։

Երբ քահանան սկսում է գանձ ասել և մի քանի կոպէկ հաւաքե՛ այն ժամանակ կանալք փաթաթւում են ննջեցեալին և աւելի սաստիկ լալիս։ Ննջեցեալի մալը, քոյլը պատառում են իրենց երեսները, քանդում, քաշում մաղերը, թակում գլուխները, ուշագնաց լինում։

Վերջապէս գագաղը կանանց ձեռքից ազատելով տանում են դէպի գերեզմանատուն, իսկ կանալք եկեղեցու դռանն էլ միքի սուդ անելուց յետոյ վերադառնում են տուն։ Այսոեղ ննջեցեալի շորերը առաջ են բերում, հոտոտում, լալիս և սուդ

ասում։ Երբ արդէն յագենում են լացից՝ ապա լուացւում են, հաց ուտում և ցրում, իսկ ամենամօտ ազդականները մնում են գիշերելու։

Ննջեցեալը տղամարդկանց յուղարկաւութեամբ տարւում է դէպի գերեզմանատուն։ Մարդիկ շուտ-շուտ փոխարինում են դագաղը կրօղներին, ամէն անգամ «Աստուած ննջեցելոց հոգիք լուսաւորէ» կրկնելով։ Կէս ճանապարհին վայր են դնում դագաղը, մի անգամ էլ գանձ ասում, միքանի կոպէկ յօգուտ քահանացի հաւաքում և ապա, «Աստուած ողորմի ննջեցելոց հոգուն» առելով երեք անգամ դագաղը փոքր ինչ բարձրացնում, դնում են զետնին և ապա վերցնում, տանում են գերեզմանատուն և դնում գերեզմանի աջ կողմը։ Սովորաբար գերեզմանները փորում են ազգական կամ հարևան մարդիկ։ Գերեզմանատունը լինում է զիւղից փոքր ինչ հեռու, շատ անգամ մի բլրակի վրայ։ Գերեզմանի լայնութիւնը լինում է մի արշին, իսկ խորութիւնը՝ 2-3 արշին։

Ննջեցեալին հանում են նաժի միջից, փոքրիկ կտաւի բարձը դնում գերեզմանի մէջ և ապա մինը իշնելով գերեզմանի մէջ՝ զրկում է ննջեցեալին և պառկեցնում գերեզմանի մէջ։ Այս ժամանակ քահանան օրհնում է միքի հող ազդականներից ամենամօտի բոի մէջ և ձգում է զիւղի վրայ։ Այս ժամանակ բոլոր յուղարկաւորդներն էլ մի-մի բուռ հող են ձգում գերեզմանի մէջ, իսկ գերեզման փորողները լցնում են գերեզմանը հողով, վերան մի թումբ ձևացնելով։

Թաղման ձէսը վերջանալուց յետոյ՝ յուղարկաւորդները ոեղմում են ննջեցեալի մօտիկ ազդականների ձեռքերը և «Սուրբ չողով միսիթարուէք» ասելով, ուղևորում դէպի ննջեցեալի տունը «Ժմահաց» ուտելու։ Այս սովորութիւնը ամենայն խստութեամբ կատարում է այս շրջանում դեռ մինչև այժմ էլ։ Սովորաբար մի եղ, կամ միքանի ոչխար են մորթում, որից պատրաստում են մսրեիլա, իսկ հարուատները՝ նաև փլաւ։ Պասին ձիթով ճաշ (փլաւ) և լոբի։ Ճաշում են նախ տղամարդիկ և ապա կանալք լուելեալն և ճաշելուց յետոյ ցրում են։

Յետեեալ օրը վաղ լուսաբացին ննջեցեալի ազդականներից

մինը գնում է գերեզմանատուն, համբուրում է գերեզմանը, երեք անգամ վայ բղաւում և վերադառնում տուն։ Այս միջոցին ազգական կանաչը հաւաքում են ննջեցեալի տունը, բերելով իրենց հետ ձու, պանիր, բրինձ, կերակրներ և այլն։ Այս բոլոր բերածները թողնելով տանը՝ գնում են գերեզմանատուն, քահանացին «այգը» կատարել տալիս, լալիս, օղի խմում, սուգասում։ Եթե մինի ուշքը գնում է՝ գերեզմանի հողից վերցնում ածում են վերան։ Վերջապէս վերադառնալով տուն՝ հաց են ուտում և ցրւում։

Հիւրերի հեռանալուց յետոյ, տնեցիները ննջեցեալի շորեքը լուանում են, որպէսզի «հոգին մաքուր և անարատ գնայ հասնի իւր տեղը»։

Այնուհետև եօթն օր շարունակ սգաւորները առաւօտ և եղեկոյ եկեղեցի են գնում, և ժամասացութիւնից յետոյ քահանացին հոգոյ ասել տալիս։ Եօթներորդ օրը, «եօթին», ննջեցեալի տէրը հրաւիրում է «այգի» ժամանակ ուտելեղէններ բերող կանանց և նրանց հետ գնում գերեզմանատուն, «եօթը» կատարել տալիս և վերադառնում տուն, ճաշում։

Մի կամ միքանի օր անցած՝ նոյն կանաչը կրկին հաւաքում են սգաւորի տունը, լուանում նախ սգաւորի և ապա իրենց բոլորի գլուխները, ապա առաջ են բերում ննջեցեալի շորերը, յաց են լինում և ի վերջոյ այդ շորերը բաժանում են իրենց մէջ և ցրւում։

Այնուհետև մի տարուայ ընթացքում սգաւորի ազգականները, հարսանիք կամ նշանդրէք անելիս, «սըգահան» են բերում նրան մի զոյգ չմոշկ, մի քժակալ և այլն։ Խսկ մեռելոց օրերին օրհնել տալիս գերեզմանը և տարին մի անգամ ամէն գերդաստան իւր հին և նոր ննջեցեալների հոգու փրկութեան համար ժմահաց են տալիս։

Թ Ա Ղ Մ Ա Ն Ծ Ա Խ Ս Ե Ր

Պատանքի	50 կ—1 ր.
Լուսագին եկեղեցուն	50 կ—1 ր.
Քահանացին { Մինչև 21 տար.	.	20 կ	1 ր.		
{ Աւելի հասակաւորի *) 1 ր — 4 ր.					
Ամբիձքին	40 կ—1 ր.
Խաչկամբոյը գանձ ասելիս	50 կ—1 ր.
Ժմահացի և եօթնից հացի	.	.	.	30 ր — 45 ր.	

Էնդամէնը՝ 33,10 — 54 ր.

*) Տալիս են նաեւ դիակարդը

ՆԵԱՆԱԿԻՈՐ ՏՕՆԵՐ.

Նոր-Տարի.—Զանգեզուրում ևս, ինչպէս և Սիսիանում, նոր տուրին չէ տօնուում: Միայն նոր Գորիսում, առաւելապէս ծառայող տարրը պաշտօնական այցելութիւններ է անում և սրանով վերջանում է տօնը:

Դնունդ եւ Քրօհնէք.—Յունուարի չորսին, երեկոյեան ամբողջ գերդաստանը բոլորուում է խոնչի շուրջը, և տան մեծը կտրում և բաժանում է «կրկենի» կրուուած բաղարջը: Սա ձեթով պատրաստած և ընկոյզով երեսը զարդարած մի բաղարջ է, որի մէջ լորի, կամ մի հունի կորիզ է դրուած, որ կոչում է «դովլաթ»: Ում բաժնից որ դուրս է դալիս այս «դովլաթը»՝ նա «օջախի դովլաթ» է համարում, և այդ տարի նրանից են սպասում տան բախտաւորութիւնը: Ջամանգամ իրենուց անաստուններին էլ են բաժին հանում, և եթէ նրանց բաժնից է դուրս գալիս՝ կարծում են, որ բախտաւորութիւնը, հարստութիւնը նրանցից պիտի գայ: Եթէ մի որեւէ պատճառով չեն կարողանում կրկենի պատրաստել՝ լորին կամ կորիզը ձգում են սպասի մէջ և նոյն կերպ գուշակութիւններ անում:

Ծննդեան երեկոյին երեխանները խմբեր կազմած շրջում են տները «Խւետիս» ապելու: «Ճուն թակողը» մահակը ձեռին առաջ է ընկնում. նրան հետեւում են երկու կամ երեք երեխալ, որ եկեղեցական շապիկի փոխարէն իրանց մալրերի շապիկներն են հագած լինում. ապա գնում են «ալիւր տանողը» —տոպրակը շալակած, և «Ճուն հաւաքողը» —սալէն դլիխին: Պատնեշով մի տուն՝ նրանք ձախ ու ծուռ երգում են և մի բան առնելով դուրս գալիս, ուրիշ տուն մտնում:

Քրօհնեաց օրը երիտասարդները ձի են հեծնում և իրենց շնորհքը ցոյց են տալիս ձիարշաւի մէջ: Խաչը ջուրը ձգելու ժամանակ այս բոլոր ձիաւորները մտնում են գետի մէջ և յե-

տոյ գալիս ճանապարհը կտրում են ու հարուստներից նուէրներ պահանջում, որ յետոյ այդ դրամով քէֆ անեն:

Օրհնուած ջրից պահում են, որ դրանով ողողեն ու սրբեն պղծուած ամանները, այսինքն որոնց շուն, կատու և առհամարակ որեւէ անսուրբ կենդանի է դիպել:

Ս. Սարգիս.—Ուրբաթ երեկոյին մի սկուտեղի մէջ պատաճները փոխինդ են մաղում և մէջ տեղը մի մոմ կամ մի կանթեղ վառած՝ դնում դռան յետեւը, յուսալով որ ս. Սարգիսը իրենց այցելութեան գալիս, ձիու հետքը կը թողնի փոխնդի վրայ: Առաւոտեան նոյն փոխինդով խաշիլ են եփում: Ոմանք էլ այդ փոխինդը դոշաբով կամ շաքարաջրով շաղում և փոքրիկ, գնդականման «պիւտ»-եր շինում: Ջատերն էլ այդ «պիւտերի» փոխինդի մէջ մի լորի կամ հունի կուտ են դնում, մրով, ինչպէս կրկենիով՝ «դովլաթ» են գուշակում:

Բարեկենդան.—Ս. Սարգսի տօնից սկսած մինչեւ մեծ պասը ժողովուրդը բարեկենդան է համարում և աշխատում է, որքան կարելի է լաւ ուտել-խմել և ժամանակը ուրախ անց կացնել: Վերջին երեք օրերն ամբողջովին նուիրում են կերուխումի և ուրախութեան: Այսեղ ևս ինչպէս և Սիսիանում, կիրակի օրը երեան է գալիս «փաշան»—մի ծաղրածու երիտասարդ, փաշալի հանդերձ հազած և իշի վրայ նստած, —որ իւր ծառաների առաջնորդութեամբ շրջում է գիւղը, հագարաւոր ծաղրածութիւններ է անում, իբր տուգանք դրամ հաւաքում, որով յետոյ ընկերների հետ միասին քէֆ են անում:

Խնձորեսկում 20—30 կանալք տղամարդի շորեր են հագնում, փափախիներ ծածկում, և ապա գիւղի ձորակում մի գութանի լծուելով վար են անում: Բազմութիւնը հաւաքուած գուարձանում է և խրախուառմ:

Տեառնընդառաջ.—Խնձորեսկում երեկոյեան ժամերգութեան ժամանակ եկեղեցու մէջ տեղը մի մեծ աշտանակ են գնում, վերան 12 մոմ անկած: Յետ ու քահանան քարոզ է

տալիս և հրաւիրում ժամաւորներին որ մոմերը վառեն, նուէր տալով եկեղեցուն; Ապա սկսում է սակարկութիւն, ցանկացողը բղաւում է թէ ինքը ինչքան կրտայ: Ամենից շատ տուղին առաջ են հրաւիրում և ձեռքը լուցկի տալիս: Սա էլ վճարում է խոստացածը և վառում 12 մոմն էլ: Արանից յետոյ ժամաւորները մօտենում են աշտանակին, փող ձգում դրուած ափսէի մէջ, և սրա մօտ դրուած մոմերից մի մի հատ վերցնում, կացնում են 12 մոմերից մինից և աշխատում առանց հանգնելու մինչեւ տուն հասցնել:

Մի քանի գիւղերում էլ նոր պսակուած երիտասարդները ցրտնի են բերում և եկեղեցու բակում դարսում: Ժամասացութիւնից յետոյ ջահի մոմով վառում են և շրջան բռնած պըտը տըտում շուրջը, իսկ երբ բոցը մի քէս իջնում է՝ թուչում են վերացից: Ջատերը այդ ցրտնու ճիւղերից վերցնում և տանում են տուն և խրցնում տան ճակատներին, որպէսզի «աչք չտան»:

Մեծ պաս. — Առաւօտ շատ վաղ պառաւները «պասի պուլուլ» են շինում, մի սոխի վրայ եօթը փետուր խրեցնելով, և նրան կախում են երդիքի խաչքից, որպէսզի երեխաները նրանից վախնալով պասը չուտեն: Բայց միևնուն ժամանակ նա ծառայում է գիւղացիներին որպէս մեծ պասի օրացոյց, որով հետեւ մեծ պասի ամէն կիրակի օր երեխաները պուլուլից մի-մի փետուր պիկում են:

Գիւղացիները մի-մի շիշ օղի, խնձոր, նուռ առած գնում են տանուտէրի մօտ և շնորհաւորում նոր տարին: Մի քանին էլ նոյն կերպով քահանայի մօտ են գնում: Յետոյ ազգականները միմեանց տուն այցելութեան գնալով մեծ պասը շնորհաւորում են միմեանց:

Կէսօրից յետոյ նուազածուները գալիս ածում են տանուտիրոջ դռան առջև և մի բուրդի տալով նրան՝ իրաւունք են ստանում, որից յետոյ արդէն շրջում են գիւղը և ածում:

Պորխում ժողովուրդը ուխտ է գնում Ա. Մարտիրոսի մատուրը, որ գտնում է գիւղի հարաւալին ձորակի բարձր ժայ-

ուրից մինի մէջ: Սրա միայն արևմտեան կողմը քարից պատէ շարուած, մնացած մասը փորուած է ժայռի մէջ¹⁾: Այստեղ կայ մի գերեզման, որի հողը հիւանդները ջրի մէջ լուծելով խմում են իբր գեղ: Այս գեղը տեղացիներից կոչում է «խնոթուն»:

Ուխտաւորները նստուում են ժայռի ստորոտում, սուրբ ծառերի ներքեւ, արևի տակ, և սկսում են ուտել-խմել: Այստեղ էլ երբեմն երևում է բարեկինդանի «փաշան», որ գալիո է իւր ընկերների հետ՝ կիրակի օրը հաւաքած փողերով քէֆանելու: Զուռնան ածում է, պարը բոլորում, ծիծաղն ու երգը թնդացնում ժայռերը:

Միջինին մի առանձին բան չէ կատարում, բացի այն, որ նշանած երիտասարդի տնից հարսնացուին նուէր է ուղարկուում եփած տակ, խաշխաշով հաց, ձիթով գաթայ, մի շիշ օղի և մի կուլայ զինի:

Դաղկազարդ (տեղական բարբառով՝ «զարդար»): Այդ օրը եկեղեցում «ճռուան» և «ճճանակ» են ածում: Եկեղեցու մէջ տեղ կանգնեցնում են մի ուռենու ծառ, և ճիւղերին մոմեր վառում:

Նշանած աղջիկների կեսրանքը մի խաչաձև մոմ վառելով ծառի մոմերից, տալիս են իրենց հարսնացուի ձեռքը և մի կարմիր կամ կանաչ չարդաթ ձգում նրա գլխին:

Ժամասացութեան վերջը ժամաւորները թափում են ծառի վրայ և ճիւղերը խլիխելով, տանում տուն պահում են, որպէսզի զրանցով զատկի նաւակատիքին կիրակուր եփեն:

Չարչարանաց շաբաթ. — Աւագ երեքշաբթի օրը, իմաստուն և լիմար կուսանաց տօնին, եկեղեցում տասը երեխայի ձեռները մի-մի մոմ են տալիս: Յետոյ, երբ կարդացում է լիմար և իմաստուն կուսանաց տւետարանը՝ մի տիրացու առաջարկում է երեխաներին՝ վերցնել ավսէի մէջ ածած 10 կլո-


¹⁾ Պոան կամարակալ քարի վրայ կայ հետեւալ արձանագրութիւնը. Ես դաշտեցի ծառուր եւ... շինեցա՛ ս. մատուռ թվ. ՌՃ՛.

ռած թղթերից մի մի հատ, որոնցից հնդի վրայ «իմաստուն», իսկ միւս հնդի՝ «լիմար» է զրաւած: Անմիջապէս վիճակով «լիմար» գուրս եկաղների մոմերը հանդինում են և ամէն կողմից նախատում նրան, որ լիմար է լինելու: Իսկ «իմաստուններին» գովում են:

Աւագ չորեքշաբթի օրը կոչում են չիմ չորեկաբթի: Այդ օրը այգեպանները կացինները ձեռնին յարձակում են պտուղ չը տուող ծառերի վրայ և սպառնում են կտրել, իսկ մի ուրիշ մարդ արգելում է նրանց, յորդորելով, որ մի տարի ևս սպառն, այս տարի անշուշտ կը բերի:

Աւագ հինգշաբթի.—Ամէն տնից տանում են եկեղեցի մօտ $\frac{1}{2}$ ֆունոտ կարագ, մի քանիսն էլ ոտնները ողբեկու և լուալու համար շոր—«վիլա»: — Փամերգութեան միջոցին քահանան լուանում է բոլոր ծերունիների աջ ոտնները և կանանց ու փոքրիրի աջ ձեւները և օրէնուած լող քսում: Այս իւղից իրենք ժամաւրները քսում են ճալատներին, աչքերին, մի քիչ էլ տանում են տուն և ձգում են լողի կարասի մէջ, որ իւղը առատ և օրհնուած լինի:

Սղի ուրբաթ. — Այս օրը, իրբւ սուղի նշան՝ երեսները չեն լուանում, եկեղեցում ծունը չեն դնում: Աւաւոտեան ժամերգութիւնից յետոյ զնում են գերեզմանատուն և գերեզմանների վրայ մտմեր վառում: Մայլերը եկեղեցում իրենց արու երեխաների մէջքերին կտրմիր ու կանանչ թելով «ուրբաթառու» են կարում, որ ունի հետեւեալ ձեւը.



Եւ այս նրա հտմար, որ երեխալին կայծակ չխփէ:

Իսկ վոքրիկ աղջիկներին նոյն փոքրանքից ազատ պահելու համար՝ պողպատի մատանի են զնում մատներին:

Աւագ շաբաթ օրը մի քանիսը ծոմ են պահում և երեկոյեան ճրագալոցին եկեղեցի գալիս՝ ձու կամ ձուկ են տանում իրանց հետ, որ «ժամաւ քաշեն» և յետոյ նրանով թաթախունն: Լինում են մարդիկ, որ «Առէք կերէք» ասելիս՝ հէնց եկեղեցու մէջ ուտում են ձուն:

Փամերգութիւնից անմիջապէս յետոյ բոլորը ընթրում են: Պասը բաց են անում լուսով: Չուկը և թանաւ ճաշը (թանէ սպասը), որ այդ օրը «տղոպաճ» է կոչում՝ այդ օրուայ յատուկ կերակրներ են համարում և գրեթէ բոլորի տանն էլ պատրաստում են:

Այդ երեկոյի պատարագը մինը «առած» է լինում՝ և պատարագից յետոյ նա քահանալին և մի քանի ժամաւրներին հրաւիրում է իւր տանը ընթրելու:

Զատիկ. — Կիրակի լուսաբացին շատերը գնում են եկեղեցի: Մի քանիսն էլ մանուշակի իւաչաձև փնջեր են տանում իրենց հետ և գնել են տալիս սեղանի վրայ: Համարեա բոլոր ժամաւրները մոմ են առնում և վառում: Երբ «Այօր յարեաւ ի մեռելոց» շարականն սկսում են երգել՝ երեխաները ճրուան են ածում: «Փառք ի բարձունս» ասելիս՝ քահանաներից մինը Աւետարանը տանում է երիտասարդների և երեխաների մօտ, որոնք համբուրում և մի-մի ներկած ձու են տալիս քահանալին: Սա էլ այս ձուերից մի քանիսը տալիս է տիրացուներին և դիւղի մեծամեծներից մի քանիսին, որոնք եկեղեցու բակում ուտում են:

Մի քանի դիւղերում նոյն օրը հասարակական մատաղ են անում և եկեղեցու դռանը բոլորին բաժանում:

Չու կուռեցնելու սովորութիւնը շատ ընդհանրացած է ոչ միայն երեխաների, այլ և չափահասների մէջ:

Չուերը ներկում են առաւելապէս կարմիր գոյնով, իսկ սպառները՝ սւե: Կան և զեղին զոյնով ներկողներ:

Երկուշաբթի օրը, մեռելոցին, կերակուր և մրգեղէն վերցնելով իրանց հետ՝ զնում են զերեզմանատուն, ուր գերեզման-

ները օրհնել տալուց յետոյ ուտում են, իսկ մնացորդը բաժանում աղքատներին:

Համբարձում.—Վիճակ հանելու սովորութիւնը վերացելէ: Նախընթաց երեկոյին իլիքիստի կոչուած խոտը մի մի թիգ չափում և երկու տեղից գունաւոր թելերով կապում են և եթէ յաջորդ (համբարձման) օրը խոտը երկարացած լինի՝ գուշակում են, որ երկար են ապրելու:

Տղաների և աղջիկների խմբեր առանձին-առանձին գնում են դտշտերը քէֆ անելու:

Նաւասարդ.—Զանգեզուրի գիւղերն էլ Սիսիանի պէս նաւասարդի մէկը տարեմուտ են համարում և միմեանց շնորհաւորում են նոր տարին: Գիւղացիներից շատերը մի մի խնձորի մէջ արծաթէ դրամներ խրած, մի-մի շիշ էլ օղի առած՝ գնում են տանուտիրոջ մօտ և բերածները նրան նույիրելով՝ շնորհաւորում նոր տարին: Նա էլ հիւրասիրում է դրանց:

Այդ օրը ամէն տուն «կորկոտ» է պատրաստում. միայն խնձորեսկեցիք կորկոտի փոխարէն բողբաշ են եփում:

Գիշերը գոմերը մաքրում են և անասունների տակ գարի ցանում և նրանց աղիներն կարմիր թել կապում, որպէսզի «տարին առատ և կարմիր օրերով»—երջանիկ—լինի:

Վարդավառ.—Տօնի նախորդ երեկոյին աղջիկները մրգեղէններ են ածում խոնչաների մէջ, ծաղիկներով զարդարում, և տանում մի տան մէջ պահ տալիս: Ապա զիւլումներ երգելով՝ պարում, ուրախանում են: Վարդավառի օրը այդ խոնչաներն և ուտելեղէնները առած գնում են հանգերը, կերակուրներ են եփում, ուտում, երգում և սլարում:

Ա. Խաչ.—Գրեթէ բոլոր գիւղերից այս օրը ուխտ են գնում Ֆիծեռնավանք, այնպէս որ այնտեղ ահագին բազմութիւն է հաւաքւում, և հաղարաւոր ոչխարներ մատաղ են անում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՆԵՐ

Աղջիկն ասում է.

Մեր տիւռնը ճոճուում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր շունը հըմաչում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր որձակը ծկլթում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր խօսերքը լցոնացում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր ճրաքը տըզկում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր կրակը թսվում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր պատաւը մըրթմըրթում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր հալիւորը տընքտընքում ա—ա տղայ դու մի կալ-կալ:

Տղան պատասխանում է.

Ձեր տիւռնը ճոճուում ա—մին ջամ ջրով կեամ-կեամ.
Ձեր շունը հըմաչում ա—մին ճօթ հացով կեամ-կեամ.
Ձեր որձակը ծկլթում ա—մին հափուռ կոտով կեամ-կեամ.
Ձեր խօսերքը լցոնացում են—մին ջուր չամչով կեամ-կեամ.
Ձեր ճրաքը տըզկում ա—մին բժուրիկ նօթով կեամ-կեամ,
Ձեր կրակը թսվում ա—մին բեռը փայտով կեամ-կեամ.
Ձեր պատաւը մըրթմըրթում ա—մին հաց մեղրով կեամ-կեամ.
Ձեր հալիւորը տընքտնքում ա—մին կոլա գինով կեամ-կեամ:

Թարձեալ աղջիկը

Մեր ձիանքը խըրինջում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր եղիքը պոմունչում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր կովերը մըկմըկում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր որթերը կըմկըմում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր գումաշները դըռլընկում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր իշերը զըռզըռում են—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր նանին ճրդճղում ա—ա տղայ դու մի կալ-կալ.
Մեր աղբերը կովուում ա—ա տղայ դու մի կալ-կալ:

Տղան վերջը էլի ասում է, յաղթում եւ տուն մտնում.

Ձեր ձիանքը խրխընջում են—մին խուրում եօնջաւ կեամ-կեամ.
Ձեր եղինքը պրոմոանչում են—մին ճուվարան տարմանով կեամ-
կեամ.

Ձեր կովերը մըկմըկում են—մին խուրում խօսով կեամ-կեամ.
Ձեր որթերը կրակմում են—մին քթիչ կաթնով կեամ-կեամ.
Ձեր գումաշները տըռլընկում են—մին խուրցը փօքաւ կեամ-
կեամ.

Ձեր իշերը զըռզըռում են—մին կուշ կարով կեամ-կեամ.
Ձեր նամին ճրդճրում ա—մին շամախի քթկալով կեամ-կեամ.
Ձեր աղբէրը կրովուում ա—մին մղայի փափաղով կեամ-կեամ:

Վ Ի Ճ Ա Կ Ի Ե Բ Գ Ե Բ:

Էնու մս հա անումս,
Էս ինչ դարսեր ա ջանումս.

Էս իմ մեռնելի դարտս քաշում չեմ, Քանս քեզ մատաղ լինի,
Կը մնայ մաղբուն անումս:

Կիւթանը հանդին լարած,
Մըշըկնին միջին շարած,

Մըղափուն դուք ա մըշկընի,
Սւէ հողին գերի դառած:

Կալին հատիկը թի կըտամ,
Կեօկ ձիուն դարի կըտամ:

Հու որ ասի էն եարը կեամ ա,
Վորթը տակին մէր կըտամ:

Հալեմ, հալեմ հըրցընեմ,
Ճրաքն ածեմ զրցընեմ,

Քաքից եկողներ, ձեզ մատաղ,
Կացէք իմ եարից հարցանեմ:

Դուրս կը կամ կաստին կալը,
Կը երևայ բաքվայ սարը,

Ջանս քեզ մատաղ խազէցին,
Ուղարկի իմ բալայ եարը:

Քաղացին դուռնը տաշած,
Էաղախին փաղդը քաշած,

Աղբէր կէռ ունքերիդ մատաղ,
Ղասիդ դաղամով քաշած:

Քաղացին դուռնը փոս ա,
Քար կը քցեմ կը խօսայ.

Էս իմ մեռնելի դարտս քաշում չեմ, Քանս քեզ մատաղ լինի,
Իմ նանուս ազիզ փեսայ:

Սարին խօտը հատալ ա,
Գիւմշինին նստոտալ ա.

Զալում գենջեցի աղջիկ,
Քաբուլդ թզօտալ ա:

Կիւպայ կանեմ խաշար ա,
Թըլխածն եարիս պաշար ա,

Փանահ խան քո մարը մեռնի,
Իմ եարը խէ մաշել ա:

Վըրթեվերս թային ա
Չորս զօլը չոր փէլին ա

Ճրագը ձեռին տղայ,
Սրտամէջդ խային ա:

Տեղ կը քցեմ փոթ կը կայ,
Մէջիցը անուշ հոտ կը կայ,

Մինչև էն եարին կալը՝
Աչքերիս հունց քօն կը կայ:

Ա՞յ հափը կաս, հափը կաս,
Մէծ դաղանի քափը կաս,

Թէ ինձ օգես ետ վազես,
Զիանը դուս տափը կաս:

Աղջի անունըդ Խանի,

Լեշակդ քամին տանի,

Էս քեզ նշանած պիտի

Ջորերդ իմ ձեռքով հանի:

Սարիցը մարդ ա կալիս,

Սարերը կրակ ա տալիս,

Առաջիս եարլուս բացաւ,

Խնացայ թէ ինձ փարդ ա տալիս:

Սօնամս շարմադ ա քինում,

Դիլին դարմադ ա քինում,

Զային մահանայ կալած՝

Եարին կէօրմադ (տես) ա քինում:

Էն եարին եարը ես եմ,

Բաղին բլուզը ես եմ,

Էն եարը խէ տարտ անի,

Սրտին սիրած զիւլը ես եմ:

Ա՞յ տղայ, տաւարած տղայ,

Չուաւ ճարած տղայ,

Օթախ սրիեմ շոր քցեմ,

Նստիր, բեզարած տղայ:

Կաքաւը սուլուկ կը տայ,

Գլուխը տուրուր կը տայ,

Հուր որ մին եար չունի՝

Ունքերը ուրուր կը տայ:

Արևը թրովըրաւ ելաւ,

Իմ նանի կովաւ ելաւ,

Սապարին աչքը դուրս գայ,

Դուշմանի սրտաւ ելաւ:

Ա՞յ ուրմա, ուրմա եար,

Քեաքուդ բուրմայ եար,

Գնացել ես արանը եկալ,

Վթակդ լիքը խուրմայ եար:

Էս Գօրիսին ձորան եմ,

Մէծ բաղին խնձորան եմ,

Խնձորը կծեմ թոլ անեմ,

Մէջին հարսը կոլ անեմ:

Կէտին տակին լուաց կանեմ,

Սիպտակ երես բաց կանեմ,

Սրտիս սիրած լաւ տղին՝

Աչքով ունքով իմաց կանեմ:

Եարայ, եարայ սիրտս,

Տանիցս ավարայ սիրտս,

Ճաքել չեմ, պատառել չեմ,

Քանց քարա պինտ ա սիրտս:

Ճողկը տուաւ էն պատին,

Մէջքը կոտրի էն տատին,

Հարուստը ուզեց տուաւ ոչ,

Պահեց տուաւ աղքատին:

Օրաւ եկ հա օրաւ եկ,

Զուոդ լիքը մօրաւ եկ,

Էս թալս զմըրդալ ա,

Ճուռ տուր էն զօլաւ եկ:

Մաւ հալաւս փոփում ա,

Սոված փորըս դրդում ա,

Տաշոր դարտակ, մաղը կախ,

Փորը սոված, թուրը կախ:

Ծարաւալ եմ ջուր չկայ,

Սարերին աղբիւր չկայ,

Վախում եմ զարիբ մեռնիմ՝

Քշտիս մէր ու քուր չկայ:

Ծարաւալ եմ ջուր բերէք,

Բրեանու բան բերէք,

Վախում եմ զարիբ մեռնիմ՝

Ղարիբ զուշս տուն բերէք:

Եցրդին սազըն առայ,

Գիւկերին փասըն առայ,

Հինգ աղքօր մէջիցը՝

Ճուկեցի խասն առայ:

Արէքակը մըրըմէր,

Հալալ ըրէք հըր մէր,

Եկալ ա որ տանում ա,

Էնկեր միջայ հանում ա:

Տանս տակին խօնի ծառ,

Ուկի կաքաւ վերան թառ,

Էս կիրակի մոհլամ տուր,

Դարուազին տակը սառալ ա,

Թոփս եախաւոր, բող չուխաւոր
 Օշս խելքս տարալ ա:
 Եկէք գնանք ծեր անենք,
 Խնձոր կծենք թոլ անենք,
 Հուր որ մին եար չունի'
 Գլխին ժխենք դէն անենք:
 Գեանջու քամին կալիս է,
 Դըռները թըրըխկալիս է,
 Հարիւր թիւման մըշտըրոյ,

Սիմօն Եարը կալիս է:
Վըրթիվերիս վաղան ա,
Միջի մարդին կաղան ա,
Միջի մարդը հունց անի,
Խնձորիեցի կաղան ա:
Վըրթիվերը եկաւ անցաւ,
Աղջկերքը ընկան ծաղկանցաւ,
Թըխը սև սպիտակ տղայ
Վըրթիվերը առաւ անցաւ:



5n

2013

21262



